

**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**Նախատեսվող գործունեության անվանումը՝**

«ՀՀ Սյունիքի մարզի Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի փոփոխություն (դիզեյնային ավտոհավաքակայանի կառուցում, դիզեյնային ավտոպարկի կազմի նորացում, պայթուցիկ նյութերի նոր պահեստի տեղակայում, թիվ 1, 2 և 4 դյուկերների հակավթարային և սպասարկման ավագանների տեղակայում)»

**Ձեռնարկող՝**

«ՉԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ

(ՀՀ Սյունիքի մարզ, ք. Քաջարան, Լեռնագործների 18)

Ձեռնարկողի ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝

Գլխավոր տնօրեն Ռոման Նիկոլայի ԽՈՒՂՈՒԻ

09.09.2022թ.



## Բովանդակություն

1.	Ընդհանուր տեղեկություններ.....	6
2.	Հապավումներ.....	7
3.	Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը.....	8
4.	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նորմատիվաիրավական շրջանակները.....	8
5.	Նախատեսվող գործունեության բնութագիրը.....	12
5.1	Դիզեյնային ավտոհավաքակայանի արտադրական հրապարակի տեխնիկական բնութագիրը.....	13
5.1.1	Ընդհանուր նկարագիրը.....	13
5.1.2	Ջրամատակարարումը, կեղտաջրերի մաքրումը և կոյուղի, հակահրդեհային համակարգ.....	15
5.1.3	Արտադրական և վարչակենցաղային մասնաշենք.....	17
5.1.4	Կաթսայատունը և ջեռուցման ցանց.....	21
5.1.5	Անվադողերի նորոգման մասնաշենք.....	22
5.1.6	Ճաշարան.....	23
5.1.7	Մեքենաների լվացման մասնաշենք.....	24
5.1.8	Էլեկտրատեխնիկայան.....	26
5.1.9	Հենապատերի կառուցում.....	26
5.2	Պայթուցիկ նյութերի նոր պահեստի տեխնիկական բնութագիրը.....	29
5.2.1	Ընդհանուր նկարագիրը.....	29
5.2.2	Պայթուցիկ նյութերի և միջոցների պահեստները.....	30
5.2.3	Պայթուցիկ պատրաստման մասնաշենքը.....	30
5.2.4	Ամոնյակային սելիտրայի պահեստը.....	31
5.2.5	Հսկիչ-անցագրային կետերը.....	32
5.2.6	Կենցաղային մասնաշենքը.....	32
5.2.7	Ավտոտնակները.....	33
5.2.8	Դիտակետը.....	33
5.2.9	Ավտոկայանատեղի.....	34
5.2.10	Էլեկտրամատակարարումը.....	34
5.2.11	Հակահրդեհային համակարգը.....	35
5.2.12	Ջրամատակարարում և կոյուղի.....	35
5.3	Թիվ 1, 2 և 4 դյուկերների հակավթարային և սպասարկման ավազանների տեխնիկական բնութագիրը.....	37
5.3.1	Ընդհանուր նկարագիրը.....	37
5.3.2	Դյուկերային անցումներ.....	38
5.3.3	Դյուկեր 1.....	38

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ		Re 02
5.3.4	Դյուկեր 2.....	41
5.3.5	Դյուկեր 4.....	43
5.3.6	Թիվ 1, 2 և 4 դյուկերների շահագործման ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակների ռիսկերի կառավարումը.....	45
6.	Այլընտրանքային տարբերակները, դրանց վերլուծությունը և ընտրված տարբերակի հիմնավորումը.....	49
7.	Շրջակա միջավայրի նկարագիրը.....	52
7.1	Տարածքի ֆիզիկաաշխարհագրական բնութագիրը.....	52
7.2	Ռելիեֆը և լանդշաֆտը.....	53
7.3	Հողերի նկարագիրը.....	55
7.4	Տեկտոնիկան, սեյսմիկությունը, սելավա- և սողանքաանվտանգությունը.....	57
7.5	Երկրաբանական կառուցվածքը.....	59
7.6	Հիդրոերկրաբանական պայմանները.....	60
7.7	Մակերևութային ջրեր.....	62
7.8	Կլիմա.....	64
7.8.1	Ջերմաստիճանը.....	64
7.8.2	Օդի խոնավությունը.....	65
7.8.3	Մթնոլորտային տեղումները.....	65
7.8.4	Ջյան ծածկույթը.....	66
7.8.5	Անբարենպաստ եղանակային պայմանները.....	66
7.8.6	Քամիները.....	67
7.9	Մթնոլորտային օդի աղտոտվածությունը.....	69
7.10	Տարածաշրջանի հատուկ պահպանվող տարածքները.....	70
7.11	Պատմամշակութային հուշարձանները.....	72
7.12	Կենդանական և բուսական աշխարհը.....	73
7.13	Քաջարան խոշորացված համայնքի սոցիալ-տնտեսական պատկերը.....	74
7.13.1	Ընդհանուր տվյալներ.....	74
7.13.2	Բնակչությունը.....	74
7.13.3	Ժողովրդագրությունը.....	75
7.13.4	Տնտեսությունը.....	75
7.13.5	Կրթությունը և մշակույթը.....	76
7.13.6	Առևտուր և կենցաղային սպասարկում.....	76
7.13.7	Տրանսպորտ և կապ.....	76
7.13.8	Հյուրանոցներ և հանրային սնունդ.....	76
7.13.9	Զրամատակարարում, կոմունալ և այլ ծառայություններ.....	76
7.13.10	Պետական և համայնքային ծառայություն.....	76

8.	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը.....	77
8.1	Նպատակը .....	77
8.2	Ընդհանուր դրույթներ .....	77
8.3	Կիրառվող մեթոդակարգը.....	78
8.4	Ելակետային տվյալները .....	78
8.4.1	"Դիզելային ավտոհավաքակայանի կառուցում, դիզելային ավտոպարկի կազմի նորացում" բաղադրիչի վերաբերյալ ելակետային տվյալները.....	79
8.4.2	"Պայթուցիկ նյութերի նոր պահեստի տեղակայում" բաղադրիչի վերաբերյալ ելակետային տվյալները.....	82
8.4.3	"Թիվ 1, 2 և 4 դյուկերների հակավթարային և սպասարկման ավազանների տեղակայում" բաղադրիչի վերաբերյալ ելակետային տվյալները.....	85
8.4.4	Շահագործման փուլի հիմնական արտանետումների հաշվարկման համար ելակետային տվյալները.....	87
8.5	Մթնոլորտային արտանետումների հաշվարկման մեթոդաբանությունը.....	88
8.5.1	Փոշու արտանետումների հաշվարկի մեթոդակարգը .....	88
8.5.2	Տրանսպորտային միջոցների և տեխնիկայի վառելիքի ծախսի որոշման մեթոդակարգը .....	89
8.5.3	Տրանսպորտային միջոցների և շինարարական տեխնիկայի գազանման արտանետումների հաշվարկի մեթոդակարգը.....	90
8.5.4	Դիզելային ավտոհավաքակայանի կաթսայատնից մթնոլորտային արտանետումների հաշվարկի մեթոդակարգը .....	91
8.5.5	Հեղուկ վառելիքի կաթսայատնից մթնոլորտային արտանետումների հաշվարկի մեթոդակարգը .....	91
8.6	Նախատեսվող գործունեության բաղադրիչների կառուցման և շահագործման կենսափուլերում ջրապահանջի և ջրահեռացման հաշվարկման մեթոդակարգը.....	92
8.7	Նախատեսվող գործունեության բաղադրիչների իրականացման ժամանակ (կառուցման փուլ) կանխատեսվող մթնոլորտային արտանետումները .....	93
8.8	Նախատեսվող գործունեության իրագործման (կառուցման) փուլում մթնոլորտային արտանետումների գումարային ազդեցությունը.....	112
8.9	Շահագործման փուլում կանխատեսվող մթնոլորտային արտանետումները .....	113
8.10	Կառուցման փուլում ջրօգտագործման և ջրահեռացման հաշվարկը .....	115
8.10.1	Շինարարական աշխատանքների ջրցանման ջրապահանջը.....	115
8.10.2	Աշխատողների կոմունալ-տնտեսական ջրապահանջի հաշվարկը.....	116
8.10.3	Կառուցման փուլի ընդհանուր ջրապահանջը.....	116
8.10.4	Կառուցման փուլի կեղտաջրերի հաշվարկը .....	116
8.11	Շահագործման փուլում ջրօգտագործումը և ջրահեռացումը.....	117
8.12	Ազդեցությունը ջրային ռեսուրսների վրա .....	118
8.12.1	Կառուցման փուլ.....	118
8.12.2	Շահագործման փուլ .....	118

8.13	Թափոնների առաջացումը և կառավարումը.....	119
8.13.1	Կառուցման փուլ.....	119
8.13.2	Շահագործման փուլ .....	121
8.14	Վտանգավոր նյութերի կառավարումը .....	122
8.15	Կենդանական և բուսական աշխարհի վրա ազդեցությունը .....	123
8.16	Արտակարգ իրավիճակներին պատրաստվածությունը.....	123
8.17	Նախատեսվող գործունեության ազդեցությունը տարածաշրջանի սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա .....	124
8.18	Նախատեսվող գործունեության ազդեցությունը պատմամշակութային հուշարձանների վրա .....	124
9.	Շրջակա միջավայրին հասցված տնտեսական վնասի գնահատումը.....	125
9.1	Մթնոլորտային օդ .....	125
9.2	Հողային ռեսուրսներ.....	126
9.3	Ջրային ռեսուրսներ .....	128
10.	Նախատեսվող գործունեության մշտադիտարկման պլանը .....	128
11.	Առաջարկվող մեղմացնող բնապահպանական և սոցիալական միջոցառումների պլանը..	130

## 1. Ընդհանուր տեղեկություններ

1.1	Պատվիրատու՝	«Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ
	Կարճ անվանումը՝	«ԶՊՄԿ» ՓԲԸ կամ ԶՊՄԿ
1.2	Ձեռնարկող՝	«ԶՊՄԿ» ՓԲԸ
1.3	Ձեռնարկողի կոնտակտային տվյալները.	
	- Հեռախոսը՝	+37441 8110444
	- Հասցե՝	Հայաստան, 3309, Սյունիքի մարզ, Քաջարան, Լեռնագործների փող., 18 շենք
1.4	Գործունեության տեսակը՝	Հանքաարդյունահանում
1.5	Վարչական տարածքը՝	ՀՀ. Սյունիքի մարզ, Քաջարան բազմաբնակավայր համայնք
1.6	Նախագծող կազմակերպություններ՝	
	- «Դիզելային ավտոհավաքակայանի կառուցում» և «Պայթուցիկ նյութերի նոր պահեստի տեղակայում» աշխատանքային նախագծերի համար	«ՍԹԵՄ» ՍՊԸ Լիցենզիա №17204
	- «Թիվ 1, 2 և 4 դյուկերների հակավթարային և սպասարկման ավազանների տեղակայում» աշխատանքային նախագծի համար	«Լեռնամետալուրգիայի Ինստիտուտ» ՓԲԸ Լիցենզիա №17163
1.7	Ծրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման բաժնի նախագծող՝	«ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոլյուշնս» ՍՊԸ

## 2. Հապավումներ

ԱԻՆ՝	Արտակարգ Իրավիճակների Նախարարություն
ԲԲԸ՝	Բաց Բաժնետիրական Ընկերություն
ԲԽՊԷ՝	Բարձր Խտության Պոլիէթիլեն
ՓԲԸ՝	Փակ Բաժնետիրական Ընկերություն
ՓԾ՝	Փրկարարական Ծառայություն
ԻՏԱ՝	Ինժեներատեխնիկական Անձնակազմ
ՔԿԱԳ՝	Քաղաքացիական կացության Ակտերի Գրանցման Գործակալություն
ՍՊԸ՝	Մահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերություն
ՍԹԿ՝	Մահմանային Թույլատրելի Կոնցենտրացիա
ՄՆԻՊ՝	Շինարարական նորմեր և կանոններ <sup>1</sup>
ՊՈԱԿ՝	Պետական Ոչ Առևտրային Կազմակերպություն
ՀԱԿ՝	Հսկիչ-անցագրային Կետ
ՀՀ՝	Հայաստանի Հանրապետություն
ՀՈԱԿ՝	Համայնքային Ոչ Առևտրային Կազմակերպություն
ՀՓՋ՝	Հրշեջ Փրկարար Ջոկատ
ՇՄԱԳ՝	Շրջակա Միջավայրի վրա Ազդեցության Գնահատում
ՇՄԱՆԳ՝	Շրջակա Միջավայրի վրա Ազդեցության Նախնական Գնահատում
ԼՏԵ՝	Լրակազմ Տրանսֆորմատորային Ենթակայան

<sup>1</sup>Санитарные нормы и правила

### 3. Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը

«Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ (այսուհետ՝ «ՉՊՄԿ» կամ Կոմբինատ) գտնվում է Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) հարավ-արևելյան մասում, Սյունիքի մարզում, Քաջարան բազմարևակավայր համայնքի վարչական տարածքում, Կապան մարզկենտրոնից դեպի արևմուտք 30կմ հեռավորության վրա: Կոմբինատի կազմում ներառված են հանքավայրը (բացահանքը) իր լցակույտային տնտեսությամբ, հարստացուցիչ ֆաբրիկան և Արծվանիկի պոչամբարը:

Հանքավայրի շահագործումը մեկնարկել է 1951 թվականից և մինչև 1954 թվականը հանքարդյունահանումը իրականացվել է ստորգետնյա, իսկ 1954-ից մինչև 1962 թվականները համակցված եղանակով (ստորգետնյա և բաց): 1962 թվականից հանքավայրի շահագործումն իրականացվում է միայն բաց եղանակով: 2016 թվականին Կոմբինատը ձեռք է բերել 22 մլն. տ/տարի արդյունահանման թույլտվություն:

Գործող բացահանքը գտնվում է Քաջարան քաղաքից 1.7-2.7կմ դեպի հարավ-արևմուտք, ծովի մակերևույթից 2180մ-ից մինչև 2300մ բարձրությունների վրա, Ողջի գետի վերին հոսքի աջակողմյան ափում: Հարստացուցիչ ֆաբրիկան գտնվում է Քաջարան քաղաքի սահմանագծում, ծովի մակերևույթից 1825մ բարձրության վրա:

«ՉՊՄԿ» ՓԲ ընկերությունը կայուն զարգացման քաղաքականության շրջանակներում, ձգտում է շարունակաբար բարելավել արտադրական գործունեության բնապահպանական, սոցիալական և անվտանգային բաղադրիչները: Այդ նպատակով Կոմբինատը նախաձեռնել է մի շարք ծրագրեր և նախագծեր, որոնցից ստորև թվարկված երեքը հանդիսանում են սույն Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության առարկան.

- 1) Դիզելային ավտոհավաքակայանի կառուցում, դիզելային ավտոպարկի կազմի նորացում,
- 2) Պայթուցիկ նյութերի նոր պահեստի տեղակայումը,
- 3) Թիվ 1, 2 և 4 դյուկերների հակավթարային և սպասարկման ավազանների տեղակայում:

2014թ.-ի հունիսի 21-ի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ կետի 2)-րդ ենթակետի համաձայն՝ ընդերքօգտագործման բնագավառում «մետաղական, այդ թվում՝ ռադիոակտիվ օգտակար հանածոյի արդյունահանում և (կամ) հանքաքարի, հանքանյութի վերամշակում, ներառյալ՝ պոչամբարներ կամ պոչատարեր» բնագավառում նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Ա» կատեգորիայի և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

### 4. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նորմատիվաիրավական շրջանակները

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության հիմնական պահանջները սահմանված են 21.06.2014թ.-ին ընդունված «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով: Այն կարգավորում է շրջակա միջավայրի



վրա հիմնադրությային փաստաթղթի և նախատեսվող գործունեության ազդեցության փորձաքննության իրավական, տնտեսական և կազմակերպական հիմունքները:

**«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքը**

Օրենքը նկարագրում է Հայաստանում տարաբնույթ ծրագրերի և գործունեությունների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (այսուհետ՝ ՇՄԱԳ) և բնապահպանական փորձաքննության գործընթացները: Օրենքում օգտագործվող հիմնական սահմանումները բերված են հոդված 4-ում: Օրենքի հիմնական առարկաներն են՝

- Հիմնադրությային փաստաթուղթը՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող փաստաթղթի (քաղաքականություն, ռազմավարություն, հայեցակարգ, ուրվագիծ, բնական ռեսուրսների օգտագործման սխեմա, ծրագիր, հատակագիծ, քաղաքաշինական ծրագրային փաստաթուղթ) նախագիծ:

- Նախատեսվող գործունեությունը՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում:

Օրենքի հոդված 6-ը սահմանում է գնահատման և փորձաքննության նպատակն ու խնդիրները, իսկ հոդված 7-ը թվարկում է ՇՄԱԳ և փորձաքննության գործընթացում դիտարկվող շրջակա միջավայրի օբյեկտները և բնութագրերը: Օրենքի գլուխ 2-ը (8-13 հոդվածները) նկարագրում են ՇՄԱԳ և փորձաքննության գործընթացի հիմնական մասնակիցների լիազորությունները:

Հոդված 14-ը թվարկում է ՇՄԱԳ և փորձաքննության ենթակա հիմնադրությային փաստաթղթերի բնագավառները և նախատեսվող գործունեությունների տեսակները, որոնք ըստ ոլորտների դասակարգվում են «Ա», «Բ» և «Գ» կատեգորիայի՝ ըստ շրջակա միջավայրի վրա նվազող աստիճանի: Սույն հոդվածի 4-րդ կետի 2)-րդ ենթակետի համաձայն. ընդերքօգտագործման բնագավառում «մետաղական, այդ թվում՝ ռադիոակտիվ օգտակար հանածոյի արդյունահանում և (կամ) հանքաքարի, հանքանյութի վերամշակում, ներառյալ՝ պոչամբարներ կամ պոչատարեր» գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը և փորձաքննությունը իրականացվում է «Ա» կատեգորիայի համար նախատեսված ընթացակարգով:

Օրենքի հոդված 16-ի համաձայն նախատեսվող գործունեությունների փորձաքննությունն իրականացվում է երկու փուլով՝ նախնական և հիմնական: Նախնական փուլում կազմվում է նախատեսվող գործունեության գնահատման նախնական հայտը, որի փորձաքննության հիման վրա («Ա» կամ «Բ» կատեգորիայի գործունեության դեպքում) կազմվում է տեխնիկական առաջադրանք, ինչը հիմք է ծառայում ՇՄԱԳ հաշվետվության մշակման համար: Նախնական փորձաքննության տևողությունն է 30 աշխատանքային օր: Եթե փորձաքննության ընթացքում որոշվում է, որ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Գ» կատեգորիայի, ապա ձեռնարկողին նախնական գնահատման հայտի հիման վրա տրվում է փորձաքննության եզրակացություն:

Հոդված 18-ը սահմանում է հիմնադրությային փաստաթղթի ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվության և նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվության բովանդակությանը ներկայացվող պահանջները: Հոդված 19-ը նկարագրում է փորձաքննության հիմնական փուլը: Սույն հոդվածի 4-րդ կետի համաձայն փորձաքննության հիմնական փուլի ժամկետները չպետք է գերազանցեն հիմնադրությային փաստաթղթի և նախատեսվող գործունեության "Ա" կատեգորիայի դեպքում մինչև 60 աշխատանքային օր, իսկ նախատեսվող գործունեության "Բ" կատեգորիայի դեպքում մինչև 40 աշխատանքային օր:

Օրենքի հոդված 26-ը սահմանում է ՇՄԱԳ և փորձաքննության ընթացքում հանրային ծանուցմանը և քննարկումների իրականացմանը ներկայացվող պահանջները: Հանրության ծանուցումը իրականացվում է մինչ լուծմանը կամ քննարկումները առնվազն 7 աշխատանքային օր առաջ զանգվածային լրատվամիջոցներով, հայտարարություններով և էլեկտրոնային փոստով: Հանրային ծանուցումը և քննարկումները իրականացվում են 19.11.2014 թ.-ի **«Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 1325-Ն** որոշմամբ:

**«Հողային օրենսգիրքը** (2001թ.) սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը: Համաձայն Օրենսգրքի **«Հողային ֆոնդը դասակարգվում է ըստ հետևյալ կատեգորիաների. 1) գյուղատնտեսական նշանակության, 2) բնակավայրերի, 3) արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, 4) էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների, 5) հատուկ պահպանվող տարածքների, 6) հատուկ նշանակության, 7) անտառային, 8) ջրային և 9) պահուստային հողերի:**

Օրենսգրքի գլուխ 13-ը սահմանում է հողամասերի նկատմամբ քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքները, այդ թվում. հողամասն օգտագործման տրամադրելը (անհատույց (մշտական) օգտագործման կամ վարձակալության իրավունքով), հողամասի կառուցապատման իրավունքը, հողամասի նկատմամբ իրավունքների սահմանափակումները և հողամասի սերվիտուտը: Օրենսգրքի գլուխ 15-ը նկարագրում է պետության և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման ընթացակարգը:

**"Մթնոլորտային օդի պահպանության մասին"** **«Հ** օրենքը (1994թ.) կարգավորում է մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունների հարցերը: Մթնոլորտ վնասակար նյութերի արտանետումների թույլտվությունների ստացման կարգը և է մթնոլորտային օդի աղտոտման սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները սահմանվում են **«Հ կառավարության "Մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների պետական հաշվառման կարգը հաստատելու մասին" թիվ 259, "Մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների մշակման ու հաստատման կարգը սահմանելու և «Հ կառավարության 1999 թվականի մարտի 30-ի թիվ 192 և 2008 թվականի օգոստոսի 21-ի թիվ 953-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին" թիվ 1673-Ն և "Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների - ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին" թիվ 160-Ն որոշումներով:**

**«Թափոնների մասին»** **«Հ** օրենքը (2004թ.) սահմանում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև բնական ռեսուրսների, մարդու կյանքի և առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման համար իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքի 3-րդ գլուխը նկարագրում է թափոնների նորմավորման, հաշվառման, անձնագրավորման ընթացակարգերը: Օրենքում ներկայացված են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները, ինչպես նաև թափոնների գործածության ոլորտում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի կիրարկումն ապահովվում է մի շարք կառավարության

որոշումների և բնապահպանության նախարարի հրամաններով: Մասնավորապես արտադրության և սպառման թափոնների դասակարգումը, ըստ վտանգավորության դասի իրականացվում է ՀՀ բնապահպանության նախարարի 26.10.2006 թ.-ի «ՀՀ տարածքում գոյացող արտադրության և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» թիվ 342-Ն հրամանի համաձայն:

**«Լիցենզավորման մասին»** ՀՀ օրենքը (2001թ.) սահմանում է լիցենզավորման ենթակա գործունեության տեսակները և կարգավորում է լիցենզավորման հետ կապված հարաբերությունները: Օրենքի հոդված 43-ը սահմանում է լիցենզավորման ենթակա գործունեությունների տեսակների ցանկը: Մասնավորապես, հոդված 43-ի կետ 1-ի (Անվտանգության բնագավառ) համաձայն, պայթուցիկ նյութերի, պայթեցման սարքավորումների առևտուր և պայթեցման աշխատանքների կատարումը հանդիսանում է լիցենզավորման ենթակա գործունեության տեսակ:

**«Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին»** ՀՀ օրենքը (2005թ.) սահմանում է ՀՀ-ում տեխնիկական անվտանգության ապահովման իրավական, տնտեսական, սոցիալական հիմքերը, տեխնիկական անվտանգության ապահովման համակարգը և կարգավորում է տեխնիկական անվտանգության ապահովման հետ կապված հարաբերությունները: Սույն Օրենքի հոդված 6-ի համաձայն, ի թիվս այլոց, արտադրական վտանգավոր օբյեկտ են համարվում արտադրություններ կամ առանձին տեղամասեր, արտադրամասեր, արտադրական հրապարակներ, պահեստարաններ, տեղակայանքներ, տեխնոլոգիական սարքավորումներ կամ ցանկացած այլ օբյեկտ, որտեղ իրականացվում են հանքարդյունահանման, հորապայթեցման աշխատանքներ կամ աշխատանքներ՝ օգտակար հանածոների հանրահարստացման ուղղությամբ: **«Պայթեցման աշխատանքների կատարման ժամանակ անվտանգության միասնական կանոնները հաստատելու մասին»** թիվ 691-Ն որոշումը սահմանում է անվտանգության պահանջները պայթեցման աշխատանքների կատարման ժամանակ:

**«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին»** ՀՀ օրենքը (2006թ.) կարգավորում է ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները: Օրենքը դասակարգում է ՀՀ-ում հատուկ պահպանվող տարածքները. ա) ըստ նշանակության (միջազգային, հանրապետական և տեղական բնության հատուկ պահպանվող տարածքների) և բ) ըստ կատեգորիայի (պետական արգելոցի, ազգային պարկի, պետական արգելավայրի և բնության հուշարձանի):

Օրենքը նկարագրում է բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության ռեժիմները, պահպանության իրականացումը, օգտագործումը և վերահսկողությունը, սահմանում է պետական մարմինների իրավասությունները, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքներն օգտագործողների իրավունքներն ու պարտականությունները:

**«Բուսական աշխարհի մասին»** (1999թ.) և **«Կենդանական աշխարհի մասին»** (2000թ.) ՀՀ օրենքները սահմանում են ՀՀ բույսերի և կենդանիների պահպանության, պաշտպանության, օգտագործման, վերարտադրության ու կառավարման, ինչպես նաև կենսաբազմազանության վրա մարդկանց գործունեության ազդեցությունը կարգավորելու քաղաքականությունը: Այս օրենքների հիմնանպատակը բուսական/կենդանական աշխարհի և կենսաբազմազանության պահպանության

ապահովումն է: Այն նաև սահմանում է տեսակների՝ մասնավորապես էներգիկ և վտանգված, մոնիտորինգի և գնահատման ընթացակարգերը:

*«ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» թիվ 71-Ն և «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» թիվ 72-Ն ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի որոշումները սահմանում են ՀՀ բուսական և կենդանական աշխարհների հազվագյուտ, անհետացած ու անհետացող, կրճատվող, բնորոշ տեսակների կենսաբանությունը, թվաքանակը, տարածման վայրերը և ձևաբանությունը:*

*«Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» թիվ 2322-Ն որոշման մեջ ներկայացված է ՀՀ Սյունիքի մարզի պատմամշակութային հուշարձանների ցանկը:*

Տնտեսական գործունեության հետևանքով մթնոլորտային օդի, ջրային և հողային ռեսուրսների վրա ազդեցության վնասի գնահատումը իրականացվում է՝

- ՀՀ կառավարության *«Շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատման և հատուցման կարգը հաստատելու մասին» թիվ 764-Ն* որոշմամբ,
- ՀՀ կառավարության *«Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» թիվ 91-Ն* որոշմամբ,
- ՀՀ կառավարության *«Հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» թիվ 92-Ն* որոշմամբ,
- ՀՀ կառավարության *«Ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» թիվ 1110-Ն* որոշմամբ:

## 5. Նախատեսվող գործունեության բնութագիրը

Ինչպես արդեն նշվել է, սույն նախատեսվող գործունեությունը ներառում է հետևյալ 3 նախագծերը՝

- 1) Դիզելային ավտոհավաքակայանի կառուցում, դիզելային ավտոպարկի կազմի նորացում,
- 2) Պայթուցիկ նյութերի նոր պահեստի տեղակայում,
- 3) Թիվ 1, 2 և 4 դյուկերների հակավթարային և սպասարկման ավազանների տեղակայում:

Դիզելային ավտոհավաքակայանի արտադրական հրապարակի և պայթուցիկ նյութերի նոր պահեստի տեղակայումը նախատեսված է իրականացնել բացահանքի հրապարակում կառուցապատման իրավունքով տրամադրված տարածքում: Դյուկերների, հակավթարային ավազանների, պահուստային խողովակաշարերի և դրանց սպասարկման տարածքների կառուցման համար նախատեսված հողատարածները սեփականության իրավունքով պատկանում են «ԶՊՄԿ» ՓԲ ընկերությանը: Ինչպես նաև նախատեսվող գործունեության ենթակա բոլոր հողերի նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական է, իսկ գործառնական նշանակությունը՝ արդյունաբերական օբյեկտների և ընդերքօգտագործման: Նախատեսվող դիզելային ավտոհավաքակայանի և պայթուցիկ նյութերի

նոր պահեստի տեղադիրքերը տարածքի արբանյակային քարտեզի վրա ARMWGS (ArmRef 02) կոորդինատային համակարգով բերված է **Նկար 5.1**-ում և **Հավելված 26**-ում:

Դիզելային ավտոհավաքակայանի և պայթուցիկ նյութերի նոր պահեստի հրապարակների միջև հեռավորությունը կազմում է 1450մ: Այդ նույն հրապարակների հեռավորությունները Ողջի գետի հունից կազմում են 330մ և 1100մ համապատասխանաբար: Քանի որ Ողջի գետին զուգահեռ անցնում է նաև Քաջարան քաղաքի միջհամայնքային ճանապարհը, ապա կարելի է փաստել, որ դիզելային ավտոհավաքակայանի և պայթուցիկ նյութերի նոր պահեստի հրապարակների հեռավորությունները այդ ճանապարհից նույնպես հավասար է 330մ և 1100մ: Դիզելային ավտոհավաքակայանի հեռավորությունը «ՉՊՄԿ» ՓԲԸ-ի հարստացուցիչ ֆաբրիկայից կազմում է 500մ, իսկ Քաջարան համայնքի մոտակա բնակելի շենքից՝ մոտ 800մ:

**Նկ. 5.1. Դիզելային ավտոհավաքակայանի և պայթուցիկ նյութերի նոր պահեստի տեղադիրքերը և դրանց հեռավորությունը շրջակա ազդակիրներից**



**5.1 Դիզելային ավտոհավաքակայանի արտադրական հրապարակի տեխնիկական բնութագիրը**

**5.1.1 Ընդհանուր նկարագիրը**

«ՉՊՄԿ» ՓԲԸ-ի դիզելային ավտոհավաքակայանի արտադրական հրապարակի կազմակերպման համար հանքավայրի տարածքում հատկացվել է 40823.7մ<sup>2</sup> ընդհանուր մակերեսով տարածք: Դիզելային ավտոհավաքակայանում սպասարկվելու են Կոմբինատի տրանսպորտային միջոցները և տեխնիկան, որոնց կազմը ներկայացված է **Աղյուսակ 5.1**-ում:

**Աղյուսակ 5.1. Դիզելային ավտոպարկի նորացված կազմ**

№	Տրանսպորտային միջոցներ	Տարողունակությունը	Հատ
1	Ավտոինքնաթափեր CAT-777F/G	64մ <sup>3</sup>	18
2	Ավտոինքնաթափեր CAT-789D	108մ <sup>3</sup>	3
3	Ավտոինքնաթափեր CAT-785C	78մ <sup>3</sup>	9
4	Անիվային բարձիչ CAT-992G	11.3մ <sup>3</sup>	1
5	Անիվային բարձիչներ CAT-993K	13մ <sup>3</sup>	6
6	Ավտոինքնաթափեր БелАЗ 7513/75131	70մ <sup>3</sup>	6
7	Ջրցան մեքենաներ՝ БелАЗ 76473		6
8	Բարձիչներ CAT-390FL/DL	8.8մ <sup>3</sup>	3
9	Բարձիչ CAT-6040HMS	23մ <sup>3</sup>	1
10	Էքսկավատորներ ЭКГ-8И	8մ <sup>3</sup>	4
11	Անիվային բուլդոզերներ 824H		3
12	Բուլդոզերներ D7R		3
13	Բուլդոզերներ D8R		2
14	Բուլդոզերներ D10R		1
15	Բուլդոզերներ D10T2		2
16	Ավտոգրեյդեր 12M		2
17	Ավտոգրեյդեր 14M		1
18	Ավտոգրեյդեր 16M/16/M3		3
19	Հորատման մեքենաներ СБШ 250		6
20	Հորատման մեքենաներ Atlas Copco L8		1
21	Հորատման մեքենաներ Atlas Copco F9		1
22	Հորատման մեքենաներ Atlas Copco DM-1, 2, 3		3
<b>Ընդամենը</b>			<b>85</b>

**Աղյուսակ 5.1**-ում ներկայացված ցանկում հնարավոր են մակնիշների այնպիսի փոփոխություններ, որոնց արտադրական ցուցանիշները, արտանետումների քանակը չի գերազանցի ցանկում ներառված տրանսպորտային միջոցների արտանետումների և արտադրական ցուցանիշները:

Ներհրապարակային արտադրական տարածքը հարավային հատվածի կողմից արտահրապարակային գրունտային ճանապարհների միջոցով կապվելու է հանքավայրի ներքին ճանապարհների ցանցի հետ: Ներհրապարակային տարածքում նախատեսվում է տեղադրել հանքում աշխատող տրանսպորտային տեխնիկան սպասարկելու համար թվով 14 շենք և կառույցներ: Շենքերն ըստ իրենց բնույթի բաժանվում են հիմնական՝ վերանորոգման և օժանդակ՝ սպասարկող նշանակության ու ներկայացված են Դիզելային ավտոհավաքակայանի գլխավոր հատակագծում, որը պատկերված է սույն Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հաշվետվության (ՇՄԱԳ հաշվետվություն) **Հավելված 1**-ում:

Հիմնական շենքերն են՝ արտադրական, վարչակենցաղային, անվանադրոդերի մոնտաժման և նորոգման մասնաշենքերը: Օժանդակ շենքեր/շինություններն են՝ մեքենաների լվացման, ճաշարանի և բուժկետի, կաթսայատան, էլեկտրատեխնիկայանի, պոմպակայանի, մաքրման կայանների և

պահակակետի մասնաշենքերը: Կառույցներն են՝ հեղուկ վառելիքի ռեզերվուարները, թվով երեք ջրամբարները, մեքենաների լվացման շենքի մաքրման կայանը, ֆեկալ և անձրևաջրերի մաքրման կայանները, որոնք լինելու են ստորգետնյա և տեղակայվելու են կանաչապատ տարածքներում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանքում աշխատող մեքենաների կշիռը մեծ է (100տ և ավելի), ինչը անդրադառնալու է ասֆալտաբետոնե ծածկույթի շահագործման ժամկետի վրա, ներհրապարակային ճանապարհների և թեքահարթակների ծածկույթի շերտը նախատեսվում է իրականացնել B30 դասի միաձույլ բետոնե Ø12a 500c ամրանավորված ցանցով սալերից: Սալվաքների ծածկույթը իրականացվելու է մանրահատիկ ասֆալտաբետոնից:

Աշխատանքները նախատեսվում է իրականացնել ներքևից (հարթակի մակերևույթի հողը հանդիսանում է հիմնատակ և վրան տեղադրվում են շենքերի և կառույցների հիմքերը): Տեղադրելով շենքերի հիմքերը հիմնատակի վրա, ներքևից դեպի վերև իրականացվելու է լիցք՝ միջինը 2.5մ բարձրությամբ: Բոլոր մուտքերի դարպասների մոտ նախատեսվում է տեղադրել անիվների երկաթբետոնե կոնստրուկցիաներից պատրաստված արգելքներ, ինչը թույլ չի տա ծանր մեքենաներին վնասելու մուտքերի հատվածում շենքերի պատերը: Բացի այդ, նախատեսված է մուտքերում տեղադրել ուղղահայաց ուղղությամբ վահանակներով կառավարվող բարձրացվող-իջնող սենդվիչ սալերից պատրաստվող դարպասներ:

Ներհրապարակային տարածքի տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- Հատկացված ընդհանուր տարածքը՝ 40823.7մ<sup>2</sup>,
- Շենքերի և կառույցների կառուցապատման մակերեսը՝ 11162.1մ<sup>2</sup>,
- Ճանապարհներ և թեքահարթակներ՝ 13690.8մ<sup>2</sup>,
- Սալվաքներ՝ 3183.8մ<sup>2</sup>,
- Կանաչապատ տարածքներ՝ 12787.0մ<sup>2</sup>:

Դիզելային ավտոհավաքակայանի աշխատանքային նախագծի վերաբերյալ ստացվել է ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի փորձագիտական գնահատման վերաբերյալ գրությունը, համաձայն որի նախագիծը համապատասխանում է գործող շինարարական նորմերի հրդեհային անվտանգության պահանջներին (**Հավելված 25**):

### 5.1.2 Ջրամատակարարումը, կեղտաջրերի մաքրումը և կոյուղի, հակահրդեհային համակարգ

Նախատեսվում են ջրամատակարարման և ջրահեռացման հետևյալ համակարգերը՝

- Խմելու տնտեսական ջրամատակարարման համակարգ,
- Հակահրդեհային և հատակների լվացման ջրամատակարարման համակարգ,
- Կենցաղային կոյուղու համակարգ,
- Արտադրական կոյուղու համակարգ:
- Կեղտաջրերի հեռացման և մաքրման համակարգ,
- Հեղեղատարային կոյուղու համակարգ՝ մաքրման կառուցվածքներով,
- Մեքենաների լվացման ջրերի մաքրման կայան՝ շրջապտույտ ջրամատակարարումով:

Մոտակայքում ջրի աղբյուրի և ջրմուղի ցանցի բացակայության պատճառով Դիզելային ավտոհավաքակայանի ջրամատակարարումը իրականացվելու է ամբարվող ջրով: Այդ նպատակով

համալիրի տարածքում նախատեսվում է կառուցել հակահրդեհային և խմելու ջրի ջրամբարներ: Ջրամբարները պարբերաբար լցվելու են ջրատարներով բերվող խմելու որակի ջրով: Համալիրի գումարային օրական ջրապահանջը՝ հաշվարկված ըստ ՄՆԻՊ 2.04.02-84-ի, կազմում է 28մ<sup>3</sup>:

Դիզելային ավտոհավաքակայանի անխափան և հուսալի ջրամատակարարումը ապահովելու համար կառուցվելու է խմելու ջրի 120մ<sup>3</sup> ծավալով երկաթ-բետոնե ստորգետնյա ջրամբար՝ 8.0մ × 5.0մ, h=3.35մ ներքին չափերով, թմբապատված, մտոցով և պարզեցված օդակլանիչ գոտիով (**Հավելված 1, կառույց 12**): Խմելու ջրի ջրամբարի գլխավոր հատակագիծը բերված է **Հավելված 2-ում**: Ջրամբարում նախատեսվում է լողանային փական՝ առավելագույն մակարդակի դեպքում ջրի հոսքը դեպի ջրամբար ավտոմատ կերպով փակելու համար: Ջրամբարի կոնստրուկտիվ սխեման լուծված է միաձույլ ե/բ տարածական համակարգով (հիմքերը՝ 300մմ հաստությամբ միաձույլ ե/բ սալ, ծածկի սալը 200մմ միաձույլ ե/բ-ից, պատերը՝ ե/բ B20 W4 դասի բետոնից): Խմելու ջրի մատակարարումը շենքերին և կառույցներին ապահովելու է պոմպակայանը՝ բարձր խտության պոլիէթիլենային (ԲԽՊԷ<sup>2</sup>) խողովակներով իրականացված ներտարածքային ցանցի միջոցով:

Տարածքի հրդեհամարման համար նախատեսված է արտաքին հրդեհաշիջման առանձին համակարգ: Համակարգի սնման աղբյուր են հանդիսանալու երկու հակահրդեհային ջրամբարները յուրաքանչյուրը 500մ<sup>3</sup> ծավալով (**Հավելված 1, կառույց 9**): Ավազանների կառուցվածքը պատկերված է **Հավելված 3-ում**: Ավազանների հիմքը ունենալու է 300մմ հաստություն, իրականացվելու է նախապատրաստական շերտ B7.5 դասի բետոնից, պլաները՝ 400մմ × 400մմ, հեծանները՝ 400մմ × 600մմ, ծածկի սալը՝ 200մմ հաստությամբ, երկաթ-բետոնե պատերը նախատեսված են 300մմ և 200մմ հաստություններով: Հիմնակմախքը իրականացվում է երկաթ-բետոնե միաձույլ B20 դասի ծանր բետոնից:

Արտաքին հրդեհաշիջման ելքը կազմում է 30լ/վրկ, իսկ ներքին հրդեհամարման ելքը՝ 2x5լ/վրկ: Նախատեսված է իրականացնել բարձր ճնշման հակահրդեհային համակարգ: Ջրմուղի ցանցը լինելու է օդակային, որը սնվելու է պոմպակայանում տեղադրված հրշեջ պոմպերից: Արտաքին ցանցը մոնտաժվելու է պոլիէթիլենային ճնշումային ԲԽՊԷ խողովակներից P=1.0ՄՊա ըստ ԳՕՍՏ 18599-83: Արտաքին հրդեհաշիջումը իրականացվելու է ջրմուղի կլոր երկաթ-բետոնե հորերում տեղադրված հրշեջ հիդրանտներով:

Պոմպակայանի (**Հավելված 1, կառույց 13**) ներսում տեղադրվելու են խմելու տնտեսական, ներքին և արտաքին հրդեհաշիջման պոմպային կայանքներ: Ջրամատակարարման համար ընտրվելու է 2 պոմպով և մեմբրանային բաքով պոմպային կայանք: Ներքին հակահրդեհային համակարգի համար ընտրվելու է 2 պոմպով (1 աշխատող, 1 պահուստային) պոմպային կայանք: Արտաքին հրշեջ համակարգի համար նախատեսված է տեղադրել կայանք 2 պոմպով (1 աշխատող, 1 պահուստային): Արտաքին հրդեհամարումը իրականացվելու է ստորգետնյա հրշեջ հիդրանտներից, որոնք տեղադրվելու են օդակաձև ցանցի վրա նախատեսված ջրմուղի կլոր երկաթ-բետոնե հորերում:

Նախագծվող պոմպակայանում տեղադրված պոմպային կայանի աշխատանքն ավտոմատացվելու է այնպես, որ վթարային իրավիճակում, ջրամբարում նվազագույն վթարային մակարդակի դեպքում ավտոմատ կերպով անջատվի նաև աշխատող պոմպը:

Ջրագծերի տեղադրման խորությունը որոշվում է գրունտի սառեցման պայմանից: Ետլիցքը խողովակների վրա 0.2մ շերտով իրականացվելու է ավազային գրունտով, խողովակների տակ ապահովվելով 10սմ ավազի նախապատրաստական շերտ:

<sup>2</sup>HDPE



Կենցաղային կոյուղու համակարգն ապահովելու է մասնաշենքերից կեղտաջրերի ինքնահոս հեռացման, մաքրման և դեպի գետ կամ մոտակա ջրհավաք լցնելու հնարավորությունը, բացառելով սանիտարա-հիգիենիկ նորմերի խախտումը: Կոյուղու բակային ցանցը իրականացվելու է ինքնահոս եղանակով: Այն հավաքելու է մասնաշենքերի կոյուղու թողարկներից կեղտաջրերը և հեռացնելու է դեպի տեղանքի ցածրադիր մասում նախատեսված մաքրման կայան:

Դիզելային ավտոհավաքակայանի ջրի գումարային հաշվարկային ելքը, ներառյալ արտադրական և վարչական շենքերը, կազմում է 15.0մ<sup>3</sup>: Նախագծով նախատեսվում է տեղադրել Q=15.0մ<sup>3</sup>/օր արտադրողականությամբ կենցաղային կեղտաջրի մաքրման ТОПАЗ-100 կոմպակտ կայան, որտեղ կատարվելու է եռաստիճան մաքրում (**Հավելված 1, կառույց 10**): Կայանի կառուցվածքը և աշխատանքի սկզբունքային սխեման ներկայացված են **Հավելված 4**-ում: Լրիվ կենսաբանական մաքրումից հետո մաքրված ջրերը հեռացվելու են դեպի գետ կամ օգտագործվելու է ոռոգման նպատակով: Կայանը բաղկացած է լինելու հետևյալ բյուրերից՝

- ընդունիչ խուց,
- ակրացիայի բլոկ,
- պարզեցման բլոկ,
- տիդմի խտացման բլոկ:

Կայանից առաջ նախատեսվում է իրականացնել ճաղավանդակի հոր՝ առավել խոշոր մասնիկների բռնման համար: Մաքրված կեղտաջրերի բնութագրեր են՝  $\text{Թ-Կ}^{120}$  10-20մգ/լ սահմաններում,  $\text{Թ-Բ}^{170}$  70-100մգ/լ սահմաններում, N և  $\text{NH}_4^+$  իոնների պարունակությունը 15-20մգ/լ:

Մասնաշենքերի տանիքներից, տարածքի ցածրադիր մասերում և ճանապարհներին տեղադրված անձրևընդունիչ հորերից, ինչպես նաև հատակների լվացումից առաջացած մակերևութային յուղերով և բեռնակրով աղտոտված ջրերը հեռացվելու են անձրևատար կոյուղու ներտարածքային ցանցով դեպի տարածքի ցածրադիր մասում նախատեսված մաքրման կառույցներ (**Հավելված 1, կառույց 11**): Համակարգը ընդգրկվելու է անձրևընդունիչները, ներտարածքային ցանցը՝ իր դիտահորերով և GSOL տիպի մաքրման կոմպակտ կայանները, որոնց կառուցվածքը բերված է **Հավելված 5**-ում: Կենցաղային և ներտարածքային անձրևատար կոյուղու ցանցերը իրականացվելու են պոլիէթիլենային ծալքավոր SN8 տիպի խողովակներից՝ ռետինե սեղմիչ օղակներով:

Տարածքի ցածրադիր մասում նախատեսվում է տեղադրել 2 հատ՝ GSOL - 10/50 և 1 հատ՝ GSOL - 5/20 տիպի հեղեղային կոյուղու մաքրման կոմպակտ կայաններ: Ընտրված մաքրման կոմպակտ կայանների աշխատանքային սկզբունքը հետևյալն է՝ ջուրը բաշխիչ հորից մուտք է գործելու կայանի պարզարան հանդիսացող բաժանմունք, որտեղ տեղի է ունենալու ծանր մասնիկների նստեցում, այնուհետև ջուրն ուղղորդվելու է դեպի կլանիչ գոտի, որտեղ տեղի է ունենալու վերջնական մաքրումը, որից հետո ջուրը հեռացվելու է: Մաքրման կայանը նավթամթերքի պարունակությունը հեռացվող ջրերում հասցնում է մինչև 0.5 մգ/լ խտության:

Արտադրական հրապարակի տարածքից մթնոլորտային տեղումներից առաջացած հոսքերի քանակը կազմելու է մոտ 119/վրկ:

### 5.1.3 Արտադրական և վարչակենցաղային մասնաշենք

#### *Ճարտարապետական մաս*

Աշխատանքային նախագծով նախատեսվում է կառուցել արտադրական նշանակության և վարչակենցաղային մասնաշենք (**Հավելված 1, կառույց 1 (1.1)**), որի չափսերն են 197մ × 42մ

(36մ) × h8.4մ=18մ (փոփոխական): Նախագծվող մասնաշենքի հատակագիծը բերված է **Հավելված 6-ում**: Այն գտնվելու է Դիզելային ավտոհավաքակայանի գլխավոր մուտքի ձախակողմյան մասում: Արտադրական մասնաշենքը իրենից ներկայացնելու է մեկ հարկանի շինություն, որը տեխնոլոգիական պահանջներից ելնելով, բաժանված է ըստ բարձրությունների՝ մի քանի մասերի:

Առաջին հատվածում (42.0մ × 96.0մ)՝ որից 24.0մ × 96.0մ հատվածի բարձրությունը կազմելու է 18մ, տեղադրվելու են երկու կոունկ-հեծաններ՝ 10տ և 30տ բեռնունակությամբ: 18.0մ × 96.0մ հատվածի բարձրությունը կազմելու է 8.4մ, որտեղ տեղադրվելու է մեկ կոունկ-հեծան 10տ բեռնունակությամբ: Առաջին հատվածի գլխավոր հատակագիծը պատկերված է **Հավելված 7-ում**:

Առաջին հատվածի արտադրական նշանակության 18մ բարձրությամբ մասնաշենքը հատկացվելու է վերանորոգման արտադրամասին և նախատեսվելու է մեծ տեխնիկայի նորոգման համար: Ցածր հատվածը՝ նախատեսվելու է մեքենաների բաղադրիչ մասերի նորոգման, հավաքման, լվացման և մարտկոցների նորոգման համար:

Երկրորդ հատվածը վարչակենցաղային մասնաշենքն է (հատակագիծը պատկերված է **Հավելված 9-ում**), որի չափերն են 12մ × 36մ × h12մ: Այն լինելու է 4 հարկանի: 1-2 հարկերը լինելու են կենցաղային նշանակության, ինչը նախատեսված է արտադրական հրապարակում գտնվող բոլոր մասնաշենքերի երեք հերթափոխում աշխատող 265 աշխատողների համար՝ կանանց և տղամարդկանց անհատական հանդերձարաններ, ցնցուղարաններ: 3-4 հարկերը նախատեսված են որպես վարչական անձնակազմի աշխատասենյակներ, խոհանոցային բլոկով: Մասնաշենքը ունենալու է տարահանման երկու աստիճանավանդակ, մետաղական աստիճաններ կենցաղային երկրորդ հարկից տարահանվելու հնարավորությամբ: Մասնաշենքի մի հատվածը ունենալու է 6 մ բարձրության անցում, որը հնարավորություն կտա արտադրական նշանակության երկու հատվածները իրար միացնել: Հակահրդեհային պահանջներից ելնելով երկու հատվածների միջև նախատեսված է տեղադրել մետաղական դարպասներ, որպեսզի հրդեհի ժամանակ կրակը չանցնի մյուս կողմ: Նույն պահանջներից ելնելով, առաջին հարկի դռները և բոլոր պատուհանների շրջանակները նախատեսված են այրումից, իսկ ապակիները թրծված ապակուց: Այս մասում բակի կողմի աստիճանավանդակի մոտ առաջին և երկրորդ հարկերում լինելու է լվացքատուն, չորանոց, մաքրված հագուստի պահեստ:

Երրորդ հատվածը (հատակագիծը պատկերված է **Հավելված 8-ում**) լինելու է 84.0մ × 36.0մ չափերով և ըստ տեխնոլոգիական պահանջների ունենալու է տարբեր՝ 8.4մ - 18.0մ բարձրություններ: Յուրեղի պահման համար նախատեսված հատվածը ունենալու է 8.4մ բարձրություն, որտեղից օգտագործված յուղը խողովակով լցվելու է կաթսայատանը կից գտնվող 20տ տարողության մետաղական ռեզերվուարի մեջ և օգտագործվելու է ջեռուցման նպատակով: Մյուս մասում նախագծվել է մեքենաների ներկման և չորացման համար տարածք, որի բարձրությունը նույնպես կազմում է 8.4մ: Նեկրման և չորացման հատվածի մոտ տեղակայված է լինելու նյութերի պահեստային տարածքը, 12 մ լայնությամբ, 8.4 մ բարձրությամբ:

Երրորդ հատվածի վերջին մասը ունի 36.0մ × 36.0մ չափեր և ըստ տեխնոլոգիական պահանջների՝ 8.4մ - 18.0մ բարձրություններ: 18մ հատվածը նախատեսված է զոդման աշխատանքների իրականացման համար, որտեղ տեղակայված է լինելու 1 հատ 50/10տ կոունկ-հեծան: Ցածր հատվածներում տեղակայվելու են յուրեղի փոխման և զոդման աշխատանքները իրականացնելու տեղամասերը: Բոլոր տեղամասերը, բացի հատուկ պահանջներով տարածքներից, բաժանված են լինելու իրարից 3.2 մ բարձրությամբ միջնորմով, սվաղված երկու կողմից ցեմենտաավազային շաղախով: Մասնաշենքը նախագծվել է մետաղական կարկասով, 12մ երկարություն ունեցող

մետաղական ֆերմաներով և թռիչքներով, որի պատերը և ծածկը նախատեսված է իրականացնել 100մմ հաստությամբ սենդվիչ սալերով:

Պատի սենդվիչ սալերը նախատեսված է ամրացնել ֆախվերգային մետաղական պլաներով, իսկ որպես հիմք ծառայելու է բետոնյա գետնախարիսիսը, որը դրսի կողմից երեսապատված է լինելու 100մմ պոլիուրետանային սալիկներով, վերջինս երեսապատվելու է բազալտյա 30մմ սալիկներով՝ մետաղական ցանցի վրա:

Արտադրական մասնաշենքի բոլոր մուտքերը նախատեսված են իրականացնել մետաղական կոնստրուկցիաներով, սենդվիչ սալերով հավաքված նախամուտքերից: Մեքենաների համար նախատեսված են մուտքեր՝ դեպի վերև բացվող դարպասներով: Բոլոր տարածքների հատակների լվացման համար մուտքերի մոտ նախատեսված է տեղադրել մետաղական ջրահեռացման վաքեր: Տեխնոլոգիական պահանջներից ելնելով, արտադրական մասնաշենքերի հատակները նախատեսված են երկու տիպերով: Ծանր տեխնիկայի կայանատեղերի համար 400մմ երկաթբետոնյա սալ B30 դասի բետոնով տոպինգային մշակումով, մյուս հատվածները 100մմ նույն դասի բետոնով: Յուրը փոխելու, ներկման նախապատրաստական գոտում, գողման արտադրամասերում նախատեսված է տեղադրել 600մմ × 600մմ չափերով թուջե սալեր: Ներկման արտադրամասի հատակը նախատեսված է բարձրացնել 200մմ բետոնյա պլաներով, ծածկելով մետաղական շերտապողպատով 50մմ × 50մմ բջիջներով՝ ապահովելով մեքենայի չորացման համար տաք օդ՝ կից օդափոխության խցից:

Մեծ տեխնիկայի նորոգման տեղամասում մեքենան տակից գննելու համար նախատեսված է երկու հատ փոստրակներ՝ 1.0մ խորությամբ: Արտադրական տեղամասերում պատուհանների բացումը նախատեսված է իրականացնել հեռակառավարմամբ և մեխանիկական մեթոդով, քանի որ տեղադրված են ոչ հասանելի բարձրության վրա:

Հակահրդեհային պահանջներից ելնելով ամբողջ արտադրական մասնաշենքը ապահովված է լինելու ինքնաշխատ հրդեհաշիջման ջրային համակարգով, որի պոմպերը տեղադրվելու են պոմպակայանում:

Ըստ նորմատիվ պահանջների նախատեսվող գործունեության տարածքում կկառուցվի 4 զուգարան և լվացարան: Տեխնոլոգիական պահանջներից ելնելով մշակվել է տեխնոլոգիական սարքավորումներով հատակագիծ: Տանիքը լինելու է երկլանջ և ծածկվելու է 100մմ սենդվիչ սալով, որի վրա կտեղադրվեն 800մմ տրամագծով դեֆլեկտորներ, իսկ ֆերմաների տարածքում օդափոխության սարքեր: Տանիքից ջրահեռացումը նախատեսված է կազմակերպել ջրհորդաններով, տաքացվող համակարգով: Ծեփի ճակատների վրա նախատեսված է իրականացնել հակահրդեհային մետաղական աստիճաններ և անվտանգության ճաղավանդակ: Բոլոր մետաղական կոնստրուկցիաները ներկվելու են հակահրդեհային հակակոռոզիոն ներկով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախագծվող մասնաշենքը գտնվում է մեծ թերություն սարի տակ, որտեղով անցնում է ավտոճանապարհ և կարող են փլուզումներ առաջացնել, ինչի արդյունքում ֆիզիկական վնաս կհասցվի մասնաշենքին՝ նպատակահարմար է գտնվել մասնաշենքի երկարությամբ կառուցել պաշտպանիչ հենապատ (տես **Բաժին 5.1.10**-ը):

**Ջրամատակարարում և կոյուղի**

Մասնաշենքում նախատեսված են հետևյալ համակարգերը՝

- 1) *Ջրամատակարարում*

Արտադրական և վարչակենցաղային մասնաշենքի ջրամատակարարումն իրականացվելու է խմելու ջրի ջրամբարից՝ պոմպերի միջոցով: Ջրմուղի ներքին ցանցը լինելու է փակուղային և մոնտաժվելու է պոլիպրոպիլենային խողովակներից: Մայրուղու խողովակները անցնելու են առաջին հարկի առաստաղով և ջերմամեկուսացվելու են ռետինե ջերմամեկուսիչ նյութով:

2) *Տաք ջրամատակարարում*

Տաք ջրամատակարարումը իրականացվելու է կաթսայատնից: Ներքին ցանցը մոնտաժվելու է պոլիպրոպիլենային խողովակներից: Մայրուղի խողովակները անցնելու են առաջին հարկի առաստաղով և ջերմամեկուսացվելու են ռետինե ջերմամեկուսիչ նյութով:

3) *Հակահրդեհային ու հատակների լվացման ջրամատակարարում և ջրահեռացում*

Հակահրդեհային ջրամատակարարումն իրականացվելու է հակահրդեհային ջրամբարից հրշեջ պոմպերի միջոցով: Հակահրդեհային համակարգը օղակային է արտադրական հատվածում և նախատեսված է պողպատե էլեկտրատեղակայվող խողովակներից: Մայրուղի խողովակները անցնում են +6.00 միշով: Հատակների լվացումը իրականացվում է հակահրդեհային ցանցից: Հատակների լվացման կեղտաջրերը հավաքվելու են ջրհավաք առվակներում, այնտեղից բակային ցանցով հեռանալու են անձրևատար կոյուղու մաքրման կայան:

4) *Կենցաղային կոյուղի*

Կենցաղային կոյուղու կեղտաջրերը ինքնահոս հեռացվելու են բակային ցանց, որից հետո հեռանալու են կենցաղային կոյուղու մաքրման կայան: Կոյուղու ցանցը իրականացվելու է պոլիվինիլքլորիդային խողովակներից՝ ռետինե սեղմիչ օղակներով:

5) *Կեղտաջրեր*

Հատակների լվացման կեղտաջրերը հավաքվում են ջրհավաք առվակներում, այնտեղից բակային ցանցով հեռանում են անձրևատար կոյուղու մաքրման կայան:

**Ջեռուցում և օդափոխություն**

Արտադրական և վարչակենցաղային մասնաշենքում ջեռուցումն իրականացվելու է կաթսայատնից: Նախագծված է ջրի փակուղային շարժումով ջեռուցման համակարգ: Մատակարարող և հետադարձ խողովակները անցկացվելու են պատի վրայով՝ շրիշակների վերևով: Դռների դիմաց խողովակները անցկացվելու են հատակի շերտի միջով, ենթարկվելով ջերմային մեկուսացման՝ հատուկ ռետինե ջերմամեկուսիչներով: Որպես ջեռուցիչ սարքեր, ընտրված են եվրոպական արտադրության այլումինե ջեռուցման մարտկոցներ՝ h=500մմ բարձրությամբ:

Նախագծված է ընդհանուր փոխանակման օդափոխության համակարգ՝ մեխանիկական դրդմամբ: Վարչակենցաղային հատվածի առաջին և երկրորդ հարկերում օդի ներմուծումը իրականացվելու է առաստաղների տակ տեղադրված տեղակայանքների միջոցով: Օդի արտածումը հանդերձարաններից, լոգարաններից և սանհանգույցներից կատարվելու է անցուղային օդամուղների միջոցով: Երրորդ և չորրորդ հարկերում օդի ներածում-արտածումը իրականացվելու է առաստաղների տակ տեղադրված ներածման-արտածման տեղակայանքների միջոցով:

#### 5.1.4 Կաթսայատունը և ջեռուցման ցանց

Կաթսայատունը (**Հավելված 1, կառույց 4**) նախագծվել է 18.0մ × 24.0մ × h7.8մ երկաթ-բետոնյա պուլներով, պատի սենդվիչ 100մմ սալերով: Պատի 900մմ բարձրությամբ գետնախարսխային հատվածը նախատեսված է իրականացնել բազալտե 30մմ հաստությամբ սալով՝ երեսապատում: Կաթսայատան տանիքը նախատեսված է իրականացնել հարթ, փոքր թեքությամբ, կազմակերպված ջրատար խողովակներով անձրևաջրերի հեռացման համար մետաղական ֆերմաների վրա, տանիքը կլինի 100մմ սենդվիչ սալով, որի վրա կտեղադրվի 3 հատ դեֆլետոր: Կաթսայատան հատակագիծը պատկերված է **Հավելված 10**-ում:

Կաթսայատանը տեղադրվելու են հեղուկ վառելիքով աշխատող երկու «CRONE» CLW 170 տեսակի եվրոպական արտադրության ջրատաքացուցիչ կաթսաներ՝ յուրաքանչյուրը 6000կՎտ ջերմարտադրողականությամբ: Հեղուկ վառելիքի այրումից առաջացած ծխազագերի հեռացման համար յուրաքանչյուր կաթսայական տեղակայանքը հազեցած է 21մ բարձրությամբ ծխատարով: Վարչական շենքի տաք ջրամատակարարման համար տեղադրվելու են բանեցված / մշակված յուրով աշխատող երկու Nortec-W-B-200-S տեսակի եվրոպական արտադրության կաթսաներ՝ յուրաքանչյուրը 200 կՎտ ջերմարտադրողականությամբ: Nortec-W-B-200-S տեսակի կաթսաներից այրված գազերը հեռացվելու են երկու 12մ երկարությամբ ծխատարերով:

Ջեռուցման համակարգ տրվող ջրի ջերմաստիճանն է՝ T1=90°C, T2=70°C, տաք ջրամատակարարմանը՝ T3=48°C, T4=15°C:

Տարածքի համար ջերմության ծախսը կազմում է՝

- Ջեռուցման և օդափոխության համար  $Q_{\text{Ջեռ.}}$  = 6355 կՎտ,
- Տաք ջրամատակարարման համար  $Q_{\text{Տ.Ջ.}}$  = 325 կՎտ:

Կաթսայատան կառույցում նախատեսվում է օպերատորի աշխատասենյակ, սանհանգույց՝ զուգարանով և լոգասենյակով: Մուտքերի դարպասների մոտ նախատեսված են յուղային զանգվածների որսիչի համար վաքեր: Քանի որ կաթսաները պետք է աշխատեն հեղուկ վառելիքով, կաթսայատան մի հատվածը նախատեսված կլինի հեղուկ 50տ վառելիքի մետաղական ռեզերվուարի համար:

Կաթսայատանը կից կառուցվելու է հեղուկ վառելիքի ստորգետնյա ռեզերվուարների տեղամասը (**Հավելված 1, կառույց 5**): Այն իրենից ներկայացնելու է հոր, որտեղ տեղադրվելու են հեղուկ վառելիքի պահման երկու 50տ տարողությամբ և օգտագործված յուղի պահեստավորման համար մեկ 25տ տարողությամբ ստորգետնյա մետաղական ռեզերվուարներ: Հորը ծածկվելու է մետաղական ծածկով:

Կաթսայատան անհրաժեշտ օդափոխությունը ապահովելու համար դարպասները նախատեսված են մետաղական շերտավարագույրով: Հակահրդեհային պահանջներից ելնելով տանիքի սպասարկման նպատակով նախատեսված է ճակատի վրա տեղադրել մետաղական աստիճան: Հարկ է նշել, որ բոլոր մետաղական կոնստրուկցիաները պատվելու են հակակոռոզիոն և հակահրդեհային ներկի երկշերտ ծածկույթով:

Հակահրդեհային ջրամատակարարումն իրականացվելու է հակահրդեհային ջրամբարից հրշեջ պոմպերի միջոցով: Հակահրդեհային ելքը կաթսայատան համար կազմելու է 2 × 2.5/վրկ: Կաթսայատանը նախատեսված են Ø=50մմ հրշեջ ծորակներ L=20մ փողակներով և Ø=16մմ ծայրափողով: Հակահրդեհային համակարգը նախատեսված է պողպատե էլեկտրաեռակցվող խողովակներից:

Աշխատանքային նախագծով նախատեսվում է կաթսայատան ավտոմատացում: Նախագիծը կատարված է գոյություն ունեցող տեխնիկական նորմերի և կանոնների (ՇՆՊ 3.05.07-85, ՇՆՊ 2.11.03-93), տեխնիկական միջոցների ընտրման և կիրառման առաջարկների հիման վրա:

Կաթսայատան ջրամատակարարումն իրականացվելու է խմելու ջրի ջրամբարից՝ պոմպերի միջոցով: Ջրմուղի ներքին ցանցը լինելու է փակուղային և մոնտաժվելու է պոլիպրոպիլենային խողովակներից: Մագիստրալի խողովակները անցնելու են +5.50 միշով և ջերմամեկուսացվելու են ռետինե ջերմամեկուսիչ նյութով:

Կենցաղային կոյուղու կեղտաջրերը ինքնահոս հեռացվելու են բակային ցանց, որը լցվելու է մաքրման կայան: Կոյուղու ցանցը իրականացվելու է պոլիվինիլքլորիդային խողովակներից՝ ռետինե սեղմիչ օղակներով:

Հատակների լվացումը իրականացվելու է հակահրդեհային ցանցից՝ ռոտզման ծորակների միջոցով: Հատակների լվացման կեղտաջրերը կիսախողովակների միջոցով ինքնահոս լցվելու են բակային ցանց, որից հետո՝ անձրևաջրերի մաքրման կայան:

Լուսավորությունն իրականացվելու է լուսադիոդային լուսատուներով: Նախատեսված են աշխատանքային և էվակուացիոն լուսավորության ցանցեր: Էլեկտրական հոսանքի վնասվածքներից պաշտպանվելու համար նախատեսված են ներքին և արտաքին հողանցման կոնտուրներ:

### 5.1.5 Անվադողերի նորոգման մասնաշենք

Անվադողերի նորոգման մասնաշենքը (**Հավելված 1, կառույց 3**) գտնվելու է արտադրական և վարչակենցաղային մասնաշենքի հարևանությամբ, արդ. հրապարակի ձախակողմյան հատվածում: Այն իրենից ներկայացնում է մեկ հարկանի 18.0մ × 48.0մ չափերով շինություն, որում տեղակայված են լինելու անվադողերի նորոգման և մոնտաժման տեղամասերը՝ իրարից բաժանվելով 3.2մ բարձրությամբ միջնորմով, ինչպես նաև գրասենյակային տարածքը և զուգարանը:

Մասնաշենքի գլխավոր հատակագիծը բերված է **Հավելված 11**-ում: Այն նախագծվել է մետաղական կարկասով, 12մ և 6մ թռիչքներով մետաղական ֆերմաներով, որոնց պատերը և ծածկը նախատեսված է իրականացնել 100մմ հաստությամբ սենդվիչ սալերով: Անվադողերի նորոգման մասնաշենքի մուտքերը նախատեսված է իրականացնել մետաղական կոնստրուկցիաներով, սենդվիչ սալերով հավաքված երկու նախամուտքերից: Մեքենաների համար նախատեսվելու են երկու մուտքեր՝ դեպի վերև բացվող դարպասներով: Տեխնոլոգիական պահանջներից ելնելով, նախատեսված է 10/5 տ կռունկ-հեծան: Գրասենյակի և զուգարանի պատերը նախատեսված է իրականացնել 200մմ պեմզաբլոկից, կարկասը մետաղական 200մմ × 200մմ չափի սյուներով:

Անվադողերի մասնաշենքի տանիքը երկլանջ է՝ ծածկված 100մմ սենդվիչ սալով, որի վրա տեղադրվելու են 800մմ տրամագծով 8 հատ դեֆլեկտորներ, իսկ ֆերմաների տարածքում օդափոխության սարքեր: Տանիքից ջրահեռացումը իրականացվելու է ջրատար խողովակներով:

Շենքի երկու ճակատների վրա նախատեսված է իրականացնել հակահրդեհային մետաղական աստիճաններ, անվտանգության ճաղավանդակ: Հարկ է նշել, որ բոլոր մետաղական կոնստրուկցիաները ներկվելու են հակակոռոզիոն և հակահրդեհային ներկի երկշերտ ծածկույթով:

### ***Ջրամատակարարում և կոյուղի***

Անվադողերի նորոգման մասնաշենքի ջրամատակարարումն իրականացվելու է խմելու ջրի ջրամբարից՝ պոմպերի միջոցով: Ջրմուղի ներքին ցանցը լինելու է փակուղային և մոնտաժվելու է պոլիպրոպիլենային խողովակներից: Մայրուղու խողովակները անցնելու են առաջին հարկի առաստաղով և ջերմամեկուսացվելու են ռետինե ջերմամեկուսիչ նյութով:

Կենցաղային կոյուղու կեղտաջրերը ինքնահոս հեռանալու են դեպի մաքրման կայան: Կոյուղու ցանցը իրականացվելու է պոլիվինիլքլորիդային խողովակներից՝ ռետինե սեղմիչ օղակներով: Հատակների և մեքենամասերի լվացման կեղտաջրերը լցվելու են հատակի վրա նախատեսված կիսախողովակ առվակի մեջ և հեռացվելու են դեպի մաքրման կայան: Հակահրդեհային ջրամատակարարումն իրականացվելու է հակահրդեհային ջրամբարից՝ հրշեջ պոմպերի միջոցով:

### ***Ջեռուցում և օդափոխություն***

Անվադողերի մասնաշենքում ջեռուցման համակարգ: Ջեռուցումը իրականացվելու է կաթասյա-տնից: Անվադողերի մասնաշենքում նախատեսված է իրականացնել ջրի փականային շարժումով ջեռուցման համակարգ: Որպես ջեռուցիչ սարքեր ընտրված են լեհական արտադրության օդային ջեռուցման սարքեր, որոնք աշխատում են վերաշրջանառու օդով:

Մասնաշենքում նախատեսվում է իրականացնել ընդհանուր փոխանակային օդափոխության համակարգ՝ մեխանիկական դրդմամբ: Մաքուր օդի ներածումը իրականացվելու է լեհական արտադրության ներածման սարքերի միջոցով, որոնք ամրացվում են պատերին: Օդի արտածումը իրականացվելու է տանիքային օդամուղների միջոցով: Դարպասների վերևում նախատեսված են օդային պատվարներ՝ էլեկտրական սնուցմամբ:

### ***Հրդեհի ազդարարման համակարգ***

Անվադողերի մասնաշենքում լինելու է հրդեհի ահագանգման հասցեավորված համակարգ, որը նախատեսված է հրդեհի օպերատիվ հայտնաբերման, աշխատակիցներին հրդեհի մասին նախազգուշացման, ինչպես նաև տագնապի ազդանշանի ձևավորման համար:

## **5.1.6 Ծաշարան**

Ծաշարանը (**Հավելված 1, կառույց 2**) իրենից ներկայացնելու է մեկ հարկանի, 60մ × 15.8մ × 4.2մ չափերի մի շինություն, որը կունենա 126 նստատեղով ճաշարահ, խոհանոց և բուժկետ: Ծաշարանի գլխավոր հատակագիծը բերված է **Հավելված 12**-ում:

Գլխավոր հատակագծում ճաշարանը տեղակայված է արտադրական գոտու կենտրոնական մասում: Այն ունենալու է երեք մուտք, բոլոր երեք մուտքերը իրականացվելու են նախամուտքերով: Կենտրոնական մուտքը նախատեսված է դեպի ճաշարահ, ուր աջ և ձախ կողմերում նախատեսված են հանդերձարաններ, մուտքից հետո լվացարաններ և զուգարաններ: Շենքի ձախակողմյան հատվածի մուտքը նախատեսված է ճաշարանի պահեստային և արտադրական տարածքների համար: Շենքի աջակողմյան հատվածում առանձին մուտքով տեղակայվելու է բուժկետը, որը ունենալու է առաջին օգնության համար անհրաժեշտ սենյակներ: Ծաշարանում նախատեսված են բոլոր անհրաժեշտ նորմատիվային տարածքները՝ խոհանոցային հատված պահեստային մասեր, սառնարանային խցիկ, արտադրամասեր և այլն: Նախատեսված է կառուցել կենցաղային տարածքներ՝ լոգասենյակ, զուգարան, հանգստի սենյակ:

Ճաշարանի տարածքը նախագծվելու է երկաթ-բետոնե սյուներով, ծածկով, 400մմ հաստությամբ պեմզաբլոկից բաղկացած պատերով, որոնք երեսապատվելու են ջերմամեկուսիչ 100մմ հաստությամբ պոլիուրետանային սալերով: Պատի գետնախարսխային հատվածը լինելու է 900մմ բարձրությամբ: Պատերը նախատեսվում է երեսապատել բազալտե 30մմ հաստությամբ սալով:

#### ***Ջրամատակարարում և կոյուղի***

Շենքի ջրամատակարարումը իրականացվելու է խմելու ջրի ջրամբարից արտաքին ջրամատակարարման ցանցի միջոցով: Տաք ջրամատակարարումը նախատեսված է անհատական էլ. ծավալային ջրատաքացուցիչների միջոցով:

Հարկերում սանհանգույցներում և խոհանոցներում սանիտարական սարքերին սնող սառը և տաք ջրագծերը մոնտաժվում են պատերի վրայով հարդարման շերտի հետևում: Բոլոր խողովակագծերը ջերմամեկուսացվում են գլանաձև ջերմամեկուսիչներով:

Ճաշարանի կենցաղային կեղտաջրերը հարկերի սանիտարական սարքերից ինքնահոս կերպով կանգնակների միջոցով հեռացվելու են դեպի  $\pm 0.00$  նիշի հարկի հատակի տակով անցնող մագիստրալ խողովակագծեր, այնուհետև մագիստրալի խողովակագծերի միջոցով ուղղվելու են դեպի կոյուղու արտաքին ցանց: Բոլոր մագիստրալ խողովակագծերը տեղադրվելու են 0.02 թեքությամբ՝ դեպի կոյուղու ելք: Կենցաղային կոյուղու խողովակագծերը ընտրված են պոլիվինիլքլորիդային խողովակներից՝ ռետինե սեղմիչ օղակներով:

#### ***Ջեռուցում***

Ճաշարանը ջեռուցվելու է կաթսայատնից: Որպես ջեռուցման մարտկոցներ ընտրված են պողպատե պանելային մարտկոցները, 12 տիպի,  $h=500$ մմ բարձրությամբ, տարբեր երկարությամբ: Ջեռուցման համակարգի խողովակագծերը մոնտաժվելու են պոլիպրոպիլենային խողովակներից: Ջեռուցման համակարգից օդի հեռացումը կատարվելու է ջեռուցման մարտկոցների վրա տեղադրված օդի հեռացման ծորակների միջոցով

#### ***Հակահրդեհային համակարգ***

Ճաշարանի մասնաշենքի համար նախագծված է հակահրդեհային ջրամատակարարման համակարգ՝ հակահրդեհային ջրամատակարարման ներքին ցանց, հրշեջ փականներով, փողորակներով և  $d=16$ մմ ծայրափողով՝  $1 \times 2.6$ /վրկ ծախսով հրշեջ փականների համար: Հակահրդեհային համակարգի համար ջրամատակարարման մագիստրալ խողովակագծերը տեղադրվելու են  $\pm 0,00$  հարկի առաստաղի տակ: Հակահրդեհային ջրամատակարարման համակարգի խողովակագծերը նախատեսված են պողպատե էլ. եռակցված խողովակներից՝ ըստ GOST 10704-91: Բոլոր խողովակագծերը ներկվելու են յուղաներկի երկշերտ ծածկույթով:

### **5.1.7 Մեքենաների լվացման մասնաշենք**

Մեքենաների լվացման մասնաշենքն (**Հավելված 1, կառույց 14**) իրենից ներկայացնում է  $24.0մ \times 24.0մ \times h16.8մ$  առանցքային չափերով մեկ հարկանի քառակուսի կառույց: Ներքին տարածքը ներառում է՝ նախամուտք, մեքենաների լվացման սրահ և անձնակազմի սանհանգույց: Մեքենաների համար լվացման սրահ մտնելու և դուրս գալու համար նախատեսված են տարանցիկ, առանձին մուտքի և ելքի ուղղություններ: Լվացման սրահը նախատեսված է միաժամանակ երկու մեքենայի լվացման համար: Այդ նպատակի համար կողային ճակատներում նախատեսվելու են



մուտքի և ելքի համար բարձրացվող և իջեցվող փեղկերով երկուական դարպասներ: Մեքենաների վրացման մասնաշենքի գլխավոր հատակագիծը պատկերված է **Հավելված 13**-ում:

Ելնելով տեղական կլիմայական պայմաններից, անձնակազմի մասնաշենք մուտքը նախատեսվում է իրականացնել նախամուտքի միջոցով, որին կից նախատեսված է կառուցել անձնակազմի համար սանհանգույց: Նախամուտքի և սանհանգույցի միջնորմներն իրականացվելու են 100մմ թեթև բետոնե բլոկից՝ 2.5մ բարձրությամբ, որը ծածկվելու է 100մմ հաստություն ունեցող առանձին սենդվիչ սալերով:

Լվացման սրահում և նախամուտքում իրականացվելու է տոպինգային երեսով հատակ, իսկ սանհանգույցում՝ կերամիկական սալիկներով հատակներ: Հաշվի առնելով սպասարկվող բեռնատար մեքենաների քաշը՝ հատակների հիմքերը նախատեսվում է իրականացնել երկաթբետոնե B30 դասի 400մմ հաստությամբ սալերից, իսկ հիմնատակը՝ 600մ հաստությամբ տոփանված խիճից: Խճի տոփանումը կատարվելու է առանձին, 3 շերտերով: Ներսի լուսավորության և օդափոխության համար ճակատներում 10.80 նիշի վրա նախատեսված են մետաղապլաստե պատուհաններ, որոնց եզրային փեղկերը բացվում-փակվում են հեռակառավարման վահանակներով: Մասնաշենքը կառուցվելու է մետաղական կարկասով, կրող կոնստրուկտիվ տարրերի երկայնական և լայնական 6.0մ × 6.0մ թռիչքներով և ծածկի մետաղական 24.0մ թռիչքի ֆերմաններով: Պատերը և տանիքի ծածկը իրականացվելու են 100մմ հաստությամբ պոլիուրետանային շերտով, գործարանային պայմաններում ներկված ցինկապատ թիթեղից, սենդվիչ տիպի սալերից:

### ***Ջեռուցում և օդափոխություն***

Մեքենաների վրացման մասնաշենքում նախատեսված է ջրային ջեռուցման համակարգ: Ջեռուցումն իրականացվելու է կաթապատնից: Նախագծված է ջրի փակուղային շարժումով ջեռուցման համակարգ: Մատակարարող և հետադարձ խողովակները անցկացվելու են պատերի վրայով: Խողովակները ենթարկվելու են ջերմային մեկուսացման՝ հատուկ ռետինե ջերմամեկուսիչով: Որպես ջեռուցիչ սարքեր ընտրված են լեհական արտադրության օդային ջեռուցման սարքեր, որոնք աշխատում են վերաշրջանառու օդով:

Մեքենաների վրացման մասնաշենքում նախագծված է ընդհանուր փոխանակային օդափոխության համակարգ՝ մեխանիկական դրոմամբ: Օդի ներածումը իրականացվելու է լեհական արտադրության օդային սարքերի միջոցով, որոնք աշխատում են դրսից մաքուր օդի ներմուծումով: Օդի արտածումը իրականացվելու է տանիքային օդամուղների միջոցով: Դարպասների վերևում նախատեսված են օդային պատվարներ՝ էլեկտրական սնուցմամբ:

### ***Ջրամատակարարում և կոյուղի***

Մեքենաների վրացման կայանում վրացումը իրականացվելու է ջրի շրջապտույտ համակարգով: Լվացման կեղտաջրերը հեռացվելու են դեպի YKO-5 մակնիշի մաքրման կայանի մոտ գտնվող 13մ<sup>3</sup> ծավալով մերձափոս, որտեղից խորքային պոմպով մղվելու են մաքրման կառուցվածքներ (**Հավելված 1, կառույց 8**): Մաքրված ջուրը ինքնահոս հետ է վերադառնալու դեպի կարչերների սարք: Ջրամատակարարման շրջապտույտային եղանակը ջրակորուստները հասցնելու է

նվազագույնի: Ցանցը նախատեսվում է իրականացնել պոլիպրոպիլենային խողովակներից: Մագիստրալի խողովակները անցնելու են լվացման կայանի առաստաղով և ջերմամեկուսացվելու են ռետինե ջերմամեկուսիչ նյութով: Մաքրումից հետո շրջապտույտի մեջ գտնվող ջրերում նավթամթերքների պարունակությունը կլինի 0.5մգ/լ, իսկ կախված մասնիկների քանակը՝ 20մգ/լ:

Հակահրդեհային ջրամատակարարումն իրականացվելու է հակահրդեհային ջրամբարից հրշեջ պոմպերի միջոցով: Հակահրդեհային ելքը վերանորոգման արտադրամասի համար կազմվելու է  $2 \times 5.0$ լ/վրկ: Հակահրդեհային համակարգը նախատեսված է պողպատե էլեկտրատեղակայվող խողովակներից: Մագիստրալի խողովակները անցնելու են +7.00 միշով: Հատակների լվացումը իրականացվելու է հակահրդեհային ցանցից:

Հատակների և մեքենամասերի լվացման կեղտաջրերը լցվելու են հատակի վրա նախատեսված կիսախողովակ առվակների մեջ, որտեղից լցվելու են ջրընդունիչ կոնքեր՝ մեխանիկական մաքրման համար և բակային ցանցով հեռացվելու են դեպի մաքրման կայան: Կոյուղու ցանցը իրականացվելու է պոլիվինիլքլորիդային խողովակներից՝ ռետինե սեղմիչ օղակներով:

### 5.1.8 Էլեկտրաէներթակայան

Ենթակայանի շինությունը (**Հավելված 1, կառույց 6**) իրենից ներկայացնում է մեկ հարկանի արտաքին չափսերով  $10.8 \times 7.8$ մ կառույց: Ներսում նախատեսված է իրականացնել պատերի հարդարում ցեմենտավազյա սվաղով, բացվածքներում տեղակայվելու է մետաղական շերտավարագույր, որոշ դռներ նույնպես ունենալու են մետաղական շերտավարագույր: Ծեփի պատերը նախատեսված է իրականացնել 400մմ կանոնավոր տուֆ քարից, ծածկը՝ միաձույլ երկաթբետոնից: Պատերի մեջ, մուտքերի դարպասների մոտ տեղակայվելու են միաձույլ երկաթբետոնե միջուկներ:


Էլ. տրանսֆորմատորների համար նախատեսված է փորել երկու հատ փոսորակներ -0.80 մ խորությամբ, որտեղից մալուխների ստորգետնյա անցկացման համար նախատեսված է տեղադրել ստորգետնյա խողովակներ: Բոլոր փոսորակների հատակի մակարդակով՝ եզրերում, նախատեսված են անկյունակներ: Տրանսֆորմատորների տակ տեղակայված փոսորակների մեջ լինելու են ավազով յուղի որսիչներ և խողովակ՝ յուղը դատարկելու համար:

### 5.1.9 Հենապատերի կառուցում


Հաշվի առնելով, որ հատկացված տարածքը գտնվում է գոյություն ունեցող բացահանքի սահմաններում, որտեղ ձևավորված են ճանապարհների բարդ ցանց և որի ստորոտում կառուցապատումը կատարվել է օղակաձև տարբերակով, տեղակայված շինությունները՝ քարերի փլուզումներից պաշտպանելու համար կառուցվելու /տեղադրվելու են երկու հենապատեր: Առաջին հենապատը կառուցվելու է անվաղողերի մոնտաժման և նորոգման մասնաշենքից կից՝ երկաթ-բետոնից, իսկ երկրորդը՝ արտադրական և վարչակենցաղային մասնաշենքի ետնամասում քարեբետոնից: Հենապատերի դիրքը Դիզեյային ավտոհավաքակայանի գլխավոր հատակագծի վրա պատկերված է **Նկար 5.3**-ում: Հենապատերի կառուցման աշխատանքների նյութածախսը բերված է **Հավելված 21**-ում:

Թե հենապատ 1-ի և թե հենապատ 2-ի կառուցվածքները և կազմերը ներկայացված է ստորև **Նկար 5.2**-ում, իսկ կտրվածքները՝ **Հավելվածներ 14-15**-ում:

### Նկ. 5.2. Կառուցվող հենապատերի կառուցվածքները և կազմերը




Հենասյառ 1



Հենասյառ 2

Նկ. 5.3. Դիզեյային ավտոհավաքակայանի հատակագիծը՝ հենապատերի նշագրմամբ



## 5.2 Պայթուցիկ նյութերի նոր պահեստի տեխնիկական բնութագիրը

### 5.2.1 Ընդհանուր նկարագիրը

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է «ԶՊՄԿ» ՓԲԸ-ի բացահանքի տարածքում: Ցանկապատված 4.68 հա տարածքում նախատեսվում է կառուցել պայթուցիկ նյութերի նոր պահեստ, որի գլխավոր հատակագիծը ներկայացված է **Հավելված 16**-ում: Աշխատանքային նախագծով ծախսային պահեստում լինելու են հետևյալ կազմով շինությունները՝

- 50տ համար պայթուցիկ նյութերի պահեստ՝ 12մ × 12մ × 3մ առանցքային չափերով՝ մեկ հատ,
- պայթուցիկ միջոցների պահեստ՝ 12մ × 12մ × 3մ առանցքային չափերով՝ մեկ հատ,
- 600տ համար ամոնիակային սելիտրայի պահեստ՝ 18մ × 48մ × 5մ առանցքային չափերով՝ մեկ հատ,
- պայթուցիկի պատրաստման մասնաշենք 5մ × 8.5մ × 3մ առանցքային չափերով՝ մեկ հատ,
- դիտակետեր 2.5մ × 2.5մ × 2.5մ առանցքային չափերով՝ 3 հատ,
- յուրաքանչյուր մուտքի մոտ մեկ հատ հսկիչ-անցագրային կետ, ընդամենը 2 հատ՝ 3.4մ × 7.4մ × 3մ առանցքային չափերով:

Ցանկապատից դուրս մոտ 0.22 հա տարածքի վրա նախագծվել է՝

- կենցաղային մասնաշենք, 9մ × 24մ × 3մ առանցքային չափերով,
- երկու ավտոմեքենայի համար ավտոտնակ 12մ × 15մ × 5մ առանցքային չափերով,
- կայանատեղի՝ ծառայողական և այցելուների մեքենաների համար:

ՀՀ կառավարության 06.03.2008թ.-ի թիվ 291-Ն որոշմամբ սահմանված անվտանգությանը վերաբերվող պահանջներից ելնելով՝ վերը թվարկված բոլոր պայթուցիկ նյութեր պարունակող շենքերից մինչև արտաքին ցանկապատ, պահպանվել է 40մ հեռավորություն, իսկ միմյանց միջև 55մ (Պատվիրատուի պահանջով): Աշխատանքային նախագծին տրվել է արտադրական վտանգավոր օբյեկտի նախագծային փաստաթղթերի տեխնիկական անվտանգության փորձաքննության վերաբերյալ թիվ 1692 եզրակացությունը, որը ներկայացված է **Հավելված 17**-ում:

Բոլոր շենքերին և շինություններին մոտենալու համար նախատեսված է ներքին ասֆալտապատ ճանապարհային ցանց: Պատվիրատուի պահանջով գլխավոր ճանապարհների լայնությունը ընդունվել է 10.5մ, իսկ երկրորդական ճանապարհների լայնությունը՝ 6.0մ, մոտ 40տ բեռնվածության մեքենաների համար: Դիտակետերի մոտեցման համար նախատեսվել են ասֆալտապատ հետիոտնային ճանապարհներ:

Նախատեսվող գործունեության տարածքում նախատեսվում է իրականացնել հետևյալ ինժեներական համակարգերը՝

- էլ. լուսավորության համակարգ,
- տեսահսկման համակարգ,
- խմելու ջրի մատակարարման համակարգ,
- կոյուղու համակարգ,
- հակահրդեհային ջրամատակարարման համակարգ,

- շանթարգելման համակարգ:

Ցանկապատի ներսում գտնվող պահեստային շենքերի մոտ լինելու է տեղային լուսավորություն: Հաշվի առնելով, որ պայթուցիկ նյութերի, միջոցների և սելիտրայի պահեստները աշխատելու են միայն օրվա լուսավոր ժամերին՝ դրանցում լուսավորության համակարգ չի նախատեսվում: Վերը նշված պահեստներում ջեռուցման համակարգ նույնպես չի նախատեսվում:

Արհեստական լուսավորության և ջեռուցման համակարգեր նախատեսված են միայն աշխատանքային վայրերում: Դրանք են՝ հսկիչ-անցագրային կետերը (այսուհետ՝ ՀԱԿ), կենցաղային և պայթուցիկի պատրաստման մասնաշենքերը, ավտոտնակը և դիտակետերը:

Նախատեսվող գործունեության տարածքի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ մոտակայքում ջրային բնական աղբյուրներ և գործող ջրամատակարարման ցանց չկա, որի հետևանքով խմելու և հակահրդեհային ջրի անհրաժեշտ պաշարները, նախատեսվել է կուտակել ջրամբարներում՝ ավտոցիստերներով:

Կոյուղու համակարգը իր մեջ ներառում է նաև մաքրման կայան և ջրավազան: Մաքրման կայանից մաքուր ջուրը հավաքվելու է հատուկ ջրավազանի մեջ, որը «ԶՊՄԿ» ՓԲԸ-ի հայեցողությամբ կարող է ավտոցիստերներով տեղափոխվել Հարստացուցիչ Ֆաբրիկա՝ արտադրական կարիքների համար, և/կամ դեպի ավտոմեքենաների լվացման կայան, և/կամ հարակից տարածքների կանաչ գոտիների ոռոգման նպատակով:

### 5.2.2 Պայթուցիկ նյութերի և միջոցների պահեստները

Պայթուցիկ նյութերի և միջոցների պահեստները մեկ հարկանի են, նախատեսված են իրակա-նացնել երկաթ-բետոնե կրող կոնստրուկցիաներով, երկաթ-բետոնե ծածկով, պատերը բետոնյա ամրանավորված բլոկներով, տանիքը լանջավոր, ձեղնահարկով: ՀՀ կառավարության 06.03.2008թ.-ի թիվ 291-Ն որոշման 224 կետի համաձայն, յուրաքանչյուրը ունի երկու նախամուտք՝ բացթողման և հետընդունման համար:

ՀՀ կառավարության նույն որոշման 21 կետի համաձայն պայթուցիկ նյութերի և պայթուցիկ միջոցների պահեստներից յուրաքանչյուրն ունի բեռնաթափման և բեռնաբարձման հրապարակ-ներ: Յուրաքանչյուր շենքի ճակատի վրա տեղադրված է հակահրդեհային վահանակ՝ իր առաջնային հրդեհամարման պարագաներով: Պահեստներում նախատեսված է տեղադրել հատուկ փոշիով ավտոմատ հրդեհաշիջման և ազդանշանային համակարգ: Պահեստների մուտքերն ապահովվելու են ծածկոցով:

ՀՀ կառավարության 06.03.2008թ.-ի թիվ 291-Ն որոշման 242 կետի համաձայն, պայթուցիկ նյութերի և միջոցների պահեստների պատուհանները պաշտպանվելու են մետաղական ճաղավանդակներով:

### 5.2.3 Պայթուցիկ պատրաստման մասնաշենքը

Պայթուցիկի պատրաստման պահեստը իրենից ներկայացնում է մեկ հարկանի շինություն՝ աշխատասենյակով և պահեստային տարածքով: Պայթուցիկի պատրաստման մասնաշենքը նախատեսված է թվով չորս աշխատակիցների համար՝ երկու աշխատասեղաններով, մեկ օրվա արտադրանքի պահուստի համար պահեստային հատվածով: Մասնաշենքը նախատեսված է իրականացնել երկաթ-բետոնե կարկասով, բետոնե ամրանավորված բլոկներով, երկաթ-բետոնե

ծածկով, տանիքը՝ լանջավոր, ձեղնահարկով: Մասնաշենքում իրականացվելու է մեխանիկական օդափոխություն՝ ներածման և արտածման համակարգերով: Օդափոխության սարքերը անվտանգության նկատառումներից ելնելով տեղադրվելու են դրսում՝ առանձին մետաղական հարթակների վրա: Մասնաշենքի մուտքի հարթակը պաշտպանվելու է ծածկոցով: Հաշվի առնելով նախատեսվող գործունեության տարածաշրջանի բնակլիմայական պայմանները՝ մասնաշենքի պատերը մեկուսացվելու են 100մմ հաստությամբ չիրկիզվող պոլիուրետանով, որի վրա նախատեսված է իրականացնել ցեմենտաավազային սվաղ՝ մետաղական ցանցի վրա և ներկում: Մասնաշենքի ջեռուցման համակարգը իրականացվելու է հոսանքով:

Նախատեսված է տեղադրել հատուկ փոշիով ավտոմատ հրդեհաշիջման, տեսահսկման և հակահրդեհային ազդանշանային համակարգեր: Մասնաշենքի մուտքն ապահովվելու է ծածկոցով:

ՀՀ կառավարության 06.03.2008թ.-ի թիվ 291-Ն որոշման 242 կետի համաձայն, պայթուցիկի պատրաստման մասնաշենքի պատուհանները պաշտպանվելու են մետաղական ճաղավանդակներով: Մասնաշենքում նախատեսվում է տեղադրել հոսանքով աշխատող ջեռուցման սարք:

#### 5.2.4 Ամոնյակային սելիտրայի պահեստը

Մինչև 600տ ընդհանուր տարողությամբ ամոնիակային սելիտրայի պահեստում նախատեսվել է տեղադրել 1100կգ և 500կգ քաշով հատուկ տարաներով (бардан) ամոնիակային սելիտրա: Դրանց տեղաբաշխման միմյանց միջև հեռավորությունները և հատակագծային լուծումները որոշվել են նմանատիպ օբյեկտների տիպարային նախագծման փորձի ուսումնասիրության արդյունքում:

Պահեստային շենքի կոնստրուկցիաները նախատեսված է իրականացնել երկաթբետոնե կրող կոնստրուկցիաներով, պատերը՝ ամրանավորված բետոնե բլոկներով, ծածկը՝ մետաղական ֆերմաներով, ծածկված 100մմ հաստությամբ տանիքի սենդվիչով: Տանիքը լինելու է լանջավոր:

Պահեստային շենքի երկայնական ուղղությամբ թվով 7 հատ մուտքերը (դարպասները) բացվում են դրանց առջև 6մ լայնությամբ հարթակի վրա: Շենքի հատակը և մուտքերի դիմացի հարթակը բարձրացված են սպասարկող ճանապարհից 1.3մ չափով, որպեսզի մեքենայի թափքի բարձրությունը հնարավորինս մոտենա բեռնաթափման հարթակին, իսկ որպեսզի բեռնաթափումը կատարվի ամբարձիչի միջոցով, նյութերի բեռնաթափման հարթակի վրա տեղադրվել է էլեկտրական շարժական հարթեցուցիչ-հարթակ, որը հնարավորություն է տալիս՝ հարթությունը փոխելով հավասարեցնել հարթակի նիշը մեքենայի թափքի նիշի հետ, քանի որ տարբեր սպասարկող մեքենաների թափքի բարձրությունները տարբեր են: Շարժական հարթակի վրա նախատեսված է ծածկոց՝ բնական տեղումներից պաշտպանելու համար:

Սելիտրայի պահեստում տարաները տեղաբաշխվելու են տիպարային նախագծի հիմքով, ինչպես նաև հաշվի առնվելով СНиП II-108-78 «Склады сухих минеральных удобрений» շինարարական նորմերի 4.6.2 կետի պահանջները:

Ամոնիակային սելիտրայի պահեստին կից նախագծվել է մասնաշենք, որտեղ տեղակայված է լինելու սելիտրան մշակելու և մեքենան սելիտրայով լիցքավորելու 17մ<sup>3</sup> տարողությամբ բունկեր՝ չժանգոտվող թիթեղից:

Սելիտրան պահեստից ամբարձիչով տեղափոխվելու է սելիտրայի մշակման մասնաշենք և լցվելու է հատուկ տարայի մեջ, որտեղ տեղադրված է լինելու սելիտրան աղալու սարք՝ խոնավությունից առաջացած խոշոր մասնիկները մանրացնելու համար: Սելիտրայի մշակման մասնաշենքի

տեղադրման համար դիրքն ընտրված է տեղանքի ռելիեֆի օգտագործմամբ՝ բարձման ու պատրաստման վայրի հատակի նիշերի մոտ 8 և ավելի մետր տարբերությամբ:

Պահեստի ներսում նախատեսված է տեղադրել հակահրդեհային ազդանշանային համակարգ СНиП 11-108-78 Склады сухих минеральных удобрений" նորմերի 11.5 կետի համաձայն: Հակահրդեհային ազդանշանային համակարգը ազդանշանները հսկվում են ՀԱԿ-երում:

Հարկ է նշել, որ թվարկված բոլոր երեք պահեստների մասնաշենքերում կա բնական օդափոխություն՝ պատուհանաշարքում օդափոխության համար նախատեսված ճաղավանդակների և դեֆլեկտորի միջոցով:

ՀՀ կառավարության 06.03.2008թ.-ի թիվ 291-Ն որոշման 242 կետի համաձայն մասնաշենքերի բոլոր պատուհանների վրա նախատեսված են մետաղական ճաղավանդակներ:

### 5.2.5 Հսկիչ-անցագրային կետերը

ՀԱԿ-երը տեղադրվելու են ցանկապատված տարածքի մուտքի և ելքի դարպասների մոտ: Հսկիչ-անցագրային կետերը նախատեսված է իրականացնել երկայթ-բետոնե կարկասով, պատերը բետոնյա ամրանավորված բլոկներով, երկայթ-բետոնե ծածկով: Տանիքը լինելու է լանջավոր և ունենալու է ձեղնահարկ:

Հսկիչ-անցագրային կետը ունենալու է աշխատասենյակ (12.9մ<sup>2</sup>), միջանցք (4.2մ<sup>2</sup>)՝ որտեղ կտեղադրվի "Турникет": ՀԱԿ-ի վերջնամասում տեղակայվելու է սանհանգույց (զուգարան), որը կծառայի նաև ցանկապատից ներս գտնվող բոլոր աշխատակիցներին:

ՀԱԿ-երը տեղակայվելու են այնպես, որպեսզի դրանց հսկողության տակ գտնվեն բոլոր պահեստների, պայթուցիկի պատրաստման մասնաշենքի մուտքերը, ճանապարհային ցանցը, դիտակետերը, խմելու ջրի և հակահրդեհային ավազանները:

### 5.2.6 Կենցաղային մասնաշենքը

Ցանկապատից դուրս տեղակայվելու է կենցաղային մասնաշենք, որը ծառայելու է հանքում պայթեցման աշխատանքներ իրականացնող թվով 30 անձնակազմի համար, որից երկուսը կանայք են: Կենցաղային մասնաշենքը իրենից ներկայացնելու է մեկ հարկանի, 24մ × 9մ առանցքային չափերով շենք, որի կազմում նախատեսված են հետևյալ տարածքները՝

- Նախամուտք,
- Ճաշարահ՝ 30 աշխատակիցների համար,
- Լվացարաններ՝ ձեռքերի չորացնող սարքերով,
- Տղամարդկանց հանդերձարան՝ 28 հոգու համար,
- Կանանց հանդերձարան՝ 2 հոգու համար,
- Տղամարդկանց և կանանց ցնցուղարաններ և զուգարաններ,
- Պահեստապետի աշխատասենյակ,
- Տնտեսական իրերի պահեստ,
- Կաթսաներ (կենցաղային),
- Էլեկտրավահանակային տարածք:



Կենցաղային մասնաշենքը իր տեխնոլոգիական պահանջներով բաժանվելու է մի քանի ֆունկցիոնալ գոտիների՝

- Հանգստի գոտի՝ ճաշարահի տեսքով, որը նախատեսված է կիսաֆաբրիկատներով աշխատելու համար: Խոհանոցային մասում կա՝ էլեկտրական թեյնիկ, էլեկտրական վառարան, սառնարաններ, սպասքեղենի լվացման կետ: Ճաշարահին կից տեղակայված են լվացարաններ՝ ձեռքերի չորացման սարքով:
- Կենցաղային գոտի՝ որտեղ տեղակայված են տղամարդկանց և կանանց հանդերձարանները, իրենց ցնցուղարաններով և զուգարաններով,
- Տնտեսական գոտի՝ որտեղ տեղակայված են շենքի ինժեներական ենթակառուցվածքների սպասարկման տարածքները, կաթսայատունը և էլեկտրավահանակները,
- Վարչական գոտի:

Հարկ է նշել, որ կենցաղային, սպասարկման և վարչական տարածքների մուտքերը առանձնացված են: Հանդերձարաններում զգեստի պահարանները միաժամանակ նախատեսված է օգտագործել նաև որպես չորանոց, որոնք անհրաժեշտության դեպքում կմիացվեն: Բոլոր չորանոց-պահարանները միացած են առանձին օդափոխության համակարգին: Ջեռուցման համակարգը նախատեսված է իրականացնել հոսանքով: Կենցաղային մասնաշենքի բոլոր մուտքերը ապահովվելու են ծածկոցներով:

### 5.2.7 Ավտոտնակները

Աշխատանքային նախագծով նախատեսվում է ավտոտնակի կառուցում՝ սելիտրա մշակող երկու մեքենաների համար: Ավտոտնակը տեղակայված է լինելու գլխավոր ճանապարհի վրա՝ ցանկապատից դուրս:

Ավտոտնակը իրենից ներկայացնելու է մեկ հարկանի, 12մ × 15մ × 5մ առանցքային չափերով շինություն, որը կունենա երկկողմանի մետաղապլաստե բացվող և չբացվող պատուհաններ: Ավտոտնակը բաղկացած է լինելու մետաղական կոնստրուկցիաներից, որի պատերը և տանիքը ծածկված են լինելու 100մմ հաստությամբ ունեցող չիրկիզվող սենդվիչ սալերով: Այն ապահովվելու է հատուկ փոշիով աշխատող ավտոմատ հրդեհաշիջման սարքով, հակահրդեհային ազդանշանային համակարգերով, որը կմիացվի ՀԱԿ-երին: Ծիմության պարագծով կառուցվելու է 900մմ բարձրությամբ բետոնե պատ, որը դրսի կողմից երեսպատվելու է բազալտե սալերով, իսկ ներսի կողմից՝ մետաղական ցանցի վրա, սվաղվելու է ցեմենտաավազային շաղախով: Հակահրդեհային անվտանգության և տանիքի սպասարկման համար ավտոտնակը ունենալու է մետաղական հակահրդեհային աստիճան:

### 5.2.8 Դիտակետը

Նախատեսվող գործունեության տարածքում տեղադրվելու են երեք դիտակետեր, որոնք տեղակայվելու են պայթուցիկ նյութերի և միջոցների, ինչպես նաև սելիտրայի պահեստների տեսադաշտերում: Դիտակետերը իրենցից ներկայացնելու են մեկ հարկանի 4.3մ × 4.3մ × 2.3մ արտաքին չափերով շինություններ, որոնք հողի մակերեսից կլինեն 4մ բարձրության վրա: Դիտակետերում նախատեսված կլինեն փակ տաքացվող տարածքներ՝ բացօթյա պատշկամբով, որտեղից պետք է իրականացվի հերթապահություն: Դիտակետ բարձրանալու համար օգտագործվելու է մետաղական աստիճան: Ջեռուցումը իրականացվելու է հոսանքով աշխատող ջեռուցիչներով: Հաշվի առնելով նախատեսվող գործունեության տարածաշրջանի բնակլիմայական

ցուրտ պայմանները՝ դիտակետերի տանիքները, հատակը և պատերը ջերմամեկուսացվելու են 100մմ հաստությամբ չիրկիզվող պոլիուրենտային սալիկներով, որից հետո մետաղական ցանցի վրա իրականացվելու է ցեմենտաավազային սվաղ՝ ներկումով: Գիշերային ժամերի լուսավորության համար պատշգամբի բոլոր կողմերից տեղադրվելու են շարժական լուսարձակներ:

### 5.2.9 Ավտոկայանատեղի

Նախատեսվող գործունեության տարածքում կառուցվելու է ասֆալտապատ հրապարակ՝ ծառայողական մեքենաների և այցելու մեքենաների կայանման համար, որը նախագծվելու է ՀԱԿ-ի մոտ՝ դարպասներին կից տարածքում:

### 5.2.10 Էլեկտրամատակարարումը

Աշխատանքային նախագծով էլեկտրամատակարարման համար նախատեսվում է իրականացնել հետևյալ մոնտաժային աշխատանքները՝

- Մուտքա-բաշխիչ սարքավորման տեղադրում,
- Էլ.ուժային և լուսավորության սարքավորումների տեղադրում,
- Մայրագծային և խմբային գծերի անցկացում,
- Հողանցման կոնտուրի տեղադրում,
- Շանթարգելման պաշտպանության համակարգի տեղադրում:

Ընդհանուր առմամբ, տարածքի շենքերի էլեկտրական սարքավորումների մատակարարումը իրականացվում է տարածքի լրակազմ տրանսֆորմատորի ենթակայանից (ԼՏԵ 630կՎԱ)՝ երկու առանձին գծերի միջոցով:

Ցածր լարման հիմնական էլեկտրական վահանակները տեղադրված են յուրաքանչյուր ոչ պայթուցիկ մասնաշենքերում: Էլ. էներգիայի սնող ցանցի լարումը 380/220Վ է, հաճախականությունը՝ 50Հց:

ԼՏԵ-ից հիմնական սնուցման մալուխները ավարտվում են մասնաշենքերի ցածր լարման հիմնական էլեկտրական վահանակներում միաձույլ պատյանով, ջերմամագնիսական խզիչով ավտոմատ անջատիչներում: ԼՏԵ-ի ցածր լարման վահանակների հատվածում հիմնական վահանակները տեղադրվելու են հատակին՝ միակողմ սպասարկման սարքավորմամբ: Իսկ մասնաշենքերի վահանակները մոնտաժվելու են պատի մեջ:

Էլ.էներգիայի բաշխումը օդափոխության սարքավորումներին և պոմպերին իրականացվելու է տեղադրված համապատասխան բաշխիչ վահանների օգնությամբ: Մայրագծային մալուխները վահանակային հատվածում անց են կացվում վաքերով: Էլեկտրաէներգիայի բաշխումը սպառիչներին իրականացվելու է վաքերով, առաստաղի տակով, պատերով ուղղաձիգ հատվածներում, ինչպես նաև կախովի առաստաղի վերնամասով, պղնձե մալուխներով և հաղորդալարերով:

Օդափոխիչ համակարգի համար նախատեսվելու է ձեռքով, ավտոմատ և հեռակա կառավարում:

Աշխատանքային նախագծով նախատեսվում է հրդեհի դեպքում ծխահեռացման համակարգերի կենտրոնացված անջատումներ: Ավտոմատ անջատման և միացման ազդանշանը ստացվում է հակահրդեհային ազդանշանային համակարգի կողմից՝ ինտերֆեյս սարքավորման միջոցով:

Մասնաշենքերի հողանցման համակարգը միացվելու է մասնաշենքերի տարածքում ԼՏԵ-ի մոտակայքում կառուցված հողանցման 0.4կՕհմ դիմադրողականությամբ փակ շղթայից (կոնտուր):

### 5.2.11 Հակահրդեհային համակարգը

Նախատեսվող գործունեության վայրում տեղադրվելու է հրդեհի ահագանգման հասցեավորված համակարգ, որը հնարավորություն է տալիս ճշգրտությամբ որոշել տեղեկատվություն հաղորդող ազդասարքի տեղը և համապատասխան ձևով արձագանքել առաջացած տագնապի կամ անսարքության ազդանշաններին: Նախագծված հրդեհի ահագանգման համակարգը նախատեսված է հրդեհի օպերատիվ հայտնաբերման, աշխատակիցներին հրդեհի մասին նախազգուշացման, ինչպես նաև տագնապի ազդանշանի ձևավորման համար՝ նախապես տրված ալգորիթմներին համապատասխան: Բոլոր ազդասարքերը տեղադրված են այն հաշվարկով, որպեսզի անհրաժեշտ ժամանակին հայտնաբերվի ահագանգման տեղամասը: Հրդեհի ազդարարման համակարգը աշխատում է երկու ռեժիմով՝ "Ավտոմատ միացում" և "Ձեռքով միացում":

Հրդեհաանվտանգության նկատառումներից ելնելով պայթուցիկ նյութերի և միջոցների պահեստում, պայթուցիկի պատրաստման մասնաշենքում նախատեսված է տեղադրել՝

1. ծխային տվիչ (дымовой датчик),
2. ջերմային տվիչ (теплодатчик),
3. հրդեհաշիջման սարք (пожаротушение),

իսկ ամոնյակային սելիտրային պահեստում՝

1. ջերմային տվիչ (теплодатчик),
2. հրդեհային ազդարարման սարք (пожарная сигнализация):

Ծխի հասցեային ազդարարների ընտրության ժամանակ հաշվի են առնվել աշխատանքի հուսալիությունը, հայտնաբերման արագությունը և աշխատանքի պարզությունը, որի արդյունքում օգտագործվելու են հետևյալ ազդարարները՝

1. Ծխի հասցեային ազդարար՝ ДИП-34А-03,
2. Հասցեային ձեռքի ազդարար՝ ИПР 513-3АМ,
3. Լուսաձայնային ազդարար՝ Маяк-12-3М,
4. Լուսաձայնային ազդարար (արտաքին կիրառման)՝ МАЯК-12-КПМ1 НИ:

### 5.2.12 Ջրամատակարարում և կոյուղի

#### 1) Իրնելու տնտեսական ջրամատակարարման համակարգ

Այս համակարգը նախատեսված է թվով 2 հսկիչ անցագրային կետերի և անձնակազմի կենցաղային մասնաշենքի սանիտարական սարքերին սառը ջուր մատակարարելու համար: Համակարգը ընդգրկում է խմելու ջրի ջրամբարը, պոմպակայանը համատեղ հրշեջ պոմպերով, բաշխիչ ցանցը իր փակող և կարգավորող արմատուրաներով:

#### 2) Իրնելու կենցաղային ջրի ջրամբար

Նախագծվում է խմելու ջրի երկաթբետոնյա մեկ ջրամբար 27.0մ<sup>3</sup> ծավալով: Աշխատանքային նախագծով նախատեսվում է կառուցել ուղղանկյուն 3.0մ × 3.0մ չափերի h=3.0մ ներքին չափերով

ստորգետնյա ջրամբար՝ թմբապատված, մտոցով և պարզեցված օդակլանիչ ֆիլտրով: Քանի որ մոտակայքում չկան ջրաղբյուրներ կամ գործող ջրագիծ, խմելու ջուրը բերվելու է ավտոցիստեռներով և պարբերաբար՝ մի քանի օրը մեկ, լցվելու է ջրամբար:

3) *Պոմպակայան*

Պոմպակայանի շենքը իրենից ներկայացնելու է կիսազետնափոր երկաթբետոնե կառույց, որտեղ տեղադրվելու են խմելու տնտեսական, ներքին և արտաքին հրդեհաշիջման պոմպային կայանքներ: Խմելու ջրամատակարարման համար ընտրված է 2 պոմպով և մենբրանային ճնշումային բաքով պոմպային կայանք: Ներքին հակահրդեհային համակարգի համար ընտրված է 2 պոմպով (1 աշխատող, 1 պահուստային) պոմպային կայանք:

Արտաքին հրշեջ համակարգի համար նախատեսված է կայանք 2 պոմպով (1 աշխատող, 1 պահուստային):

Անհրաժեշտ է ավտոմատացնել նախագծվող պոմպակայանում տեղադրված պոմպային կայանի աշխատանքն այնպես, որ վթարային իրավիճակում, ջրամբարում նվազագույն վթարային մակարդակի դեպքում ավտոմատ կերպով անջատվի նաև աշխատող պոմպը:

4) *Խմելու ջրամատակարարման բաշխիչ ցանց*

Խմելու ջրի ջրամատակարարման ներտարածքային ցանցը իրականացվելու է բարձր խտության պոլիէթիլենային (ԲԽՊԷ) տիպի խողովակներից P=1.0ՄՊա՝ համաձայն գործող չափորոշիչների:

Ջրագծերի տեղադրման խորությունը որոշվելու է գրունտի սառեցման պայմանից, ապահովելով նաև խողովակների՝ մեխանիկական ուժերից չվնասվելու պայմանը՝ ունենալ խողովակի վրա 1.0մ հողի շերտ: Խողովակների վրա ետլիցքը իրականացվելու է 0.2մ հաստության ավազային գրունտով, խողովակների տակ ապահովել 10սմ ավազի նախապատրաստական շերտ:

5) *Հակահրդեհային ջրամատակարարման համակարգ*

Պահեստային շենքերի և սիլիտրայի մշակման մասնաշենքի ներքին հրդեհաշիջման, ինչպես նաև տարածքի հրդեհամարման համար նախատեսված է հրդեհաշիջման առանձին համակարգ: Համակարգի սնման աղբյուր են հանդիսանում երկու հակահրդեհային ջրամբարները յուրաքանչյուրը 250մ<sup>3</sup> ծավալով:

Նախատեսված է բարձր ճնշման հակահրդեհային համակարգ: Պոմպակայանում մասնաշենքերի ներքին հրդեհաշիջման համար ընտրված է 2 պոմպով (1 աշխատող, 1 պահուստային) պոմպային կայանք: Արտաքին հրշեջ համակարգի համար նախատեսված է կայանք 2 պոմպով (1 աշխատող, 1 պահուստային):

Ջրմուղի ցանցը լինելու է օդակային և մոնտաժվելու է ԲԽՊԷ խողովակներից P=1.0ՄՊա՝ ըստ ԳՕՍՏ 18599-83:

Արտաքին հրդեհամարումը իրականացվելու է ստորգետնյա հրշեջ հիդրանտներից, որոնք տեղադրվելու են օդակաձև ցանցի վրա նախատեսված ջրմուղի կլոր երկաթբետոնե հորերում:

6) *Հակահրդեհային ջրամբար*

Հակահրդեհային ջրամբարների ծավալը կազմում է  $2 \times 250\text{մ}^3$ : Նախատեսվում է կառուցել ուղղանկյուն 12.0մ  $\times$  6.0մ չափերի  $h=4.0\text{մ}$  ներքին չափերով ստորգետնյա երկաթբետոնե երկու ջրամբարներ թմբապատված, մտոցներով: Ջրամբարների ծավալը հաշվարկված է, հաշվի առնելով ներքին հրդեհի և արտաքին հրդեհի մարման ջրապահանջը, որը կազմում է 25լ/վ, (15լ/վ 3ժ

տևողությամբ արտաքին մեկ հրդեհի մարման և 2x5/վ 3ժ տևողությամբ ներքին հրդեհի մարման համար): Քանի որ մոտակայքում չկան ջրաղբյուրներ կամ գործող ջրագիծ, հակահրդեհային ջրամբարները լցվում են ավտոցիստեռներով բերվող ջրով: Ջրամբարներում համաձայն նորմերի, դատարկող և գերլցման խողովակներ չի նախատեսվում:

7) *Կենցաղային կոյուղու համակարգ*

Կենցաղային կոյուղու համակարգն ապահովելու է մասնաշենքերից կեղտաջրերի ինքնահոս հեռացման, մաքրման և հետագա օգտագործման հնարավորությունը, բացառելով սանիտարա-հիգիենիկ նորմերի խախտումը: Կոյուղու բակային ցանցը լինելու է ինքնահոս: Այն հավաքելու է մասնաշենքերի կոյուղու թողարկներից կեղտաջրերը և հեռացնելու է տեղանքի ցածրադիր մասում նախատեսված մաքրման կայան:

Նախագծով նախատեսվում է  $Q=7.0\text{մ}^3/\text{օր}$  արտադրողականությամբ կենցաղային կեղտաջրի մաքրման կոմպակտ կայան՝ ТОПА3-40 տիպի, որտեղ կատարվելու է եռաստիճան մաքրում, և լրիվ կենսաբանական մաքրումից հետո մաքրված ջրերը հավաքվելու և օգտագործվելու են կամ ոռոգման, կամ այլ նպատակներով:

Կայանը բաղկացած է հետևյալ բյուրներից.

- ընդունիչ խուց,
- անբացիայի բյուր,
- պարզեցման բյուր,
- տիղմի խտացման բյուր:

Կայանից առաջ նախատեսվում է ճաղավանդակի հոր առավել խոշոր մասնիկների բռնման համար:

Մաքրված կեղտաջրի բնութագրեր են՝  $\text{Թ-Կ}^{\text{Պ}}_{20}$  10-20մգ/լ սահմաններում,  $\text{Թ-Ք}^{\text{Պ}}$  70-100մգ/լ, N և NH4 իոնների պարունակությունը 15-20մգ/լ:

Կոյուղու ներտարածքային ցանցը իրականացվելու է պոլիէթիլենային ծայքավոր SN8 տիպի խողովակներից՝ ռետինե սեղմիչ օղակներով: Խողովակների պտտման անկյուններում, թեքությունների փոփոխման տեղերում, ուղղագիծ հատվածների յուրաքանչյուր 50մ-ը մեկ տեղադրվելու են կոյուղու կլոր երկաթբետոնե հորեր:

**5.3 Թիվ 1, 2 և 4 դյուկերների հակավթարային և սպասարկման ավազանների տեխնիկական բնութագիրը**

**5.3.1 Ընդհանուր նկարագիրը**


«ԶՊՄԿ» ՓԲԸ-ի հարստացուցիչ ֆաբրիկայից պոչերը տեղափոխվում են Արծվանիկի պոչամբար պոչատարների միջոցով՝ ինքնահոս եղանակով: Այն անցնում է խիստ կտրտված խորը կիրճերով, թունելներով և դյուկերներով, 10-250մ երկարությամբ կամրջային անցումներով: Թունելային անցումներում և բաց տեղամասերում պոչատարը բաղկացած է երկու երկաթ-բետոնե վաքերից, որոնցից մեկը՝ աշխատող է, մյուսը՝ պահեստային: Վաքի կտրվածքը  $70 \times 100(\text{h})$ սմ է, հատակը երեսպատված է քարե ձուլվածքային սալիկներով՝  $\delta=30$ սմ, իսկ պատերը երեսպատված են 50սմ բարձրությամբ քարեձուլվածքային սալիկներով՝  $\delta=15$ սմ: Վաքերը ծածկված են հավաքովի երկաթ-բետոնե սալերով: Թիվ 1, 2 և 4 դյուկերները իրենցից ներկայացնում են պողպատե խողովակաշար, երկու  $\text{Ø}720 \times 10$ սմ և մեկ  $\text{Ø}1020 \times 10$ սմ, որը հիմնականում ներպատված քարե ձուլվածքով, իսկ թիվ 3 դյուկերը փոխարինվել է երկու երկաթ-բետոնե վաքերով:

Խողովակները տեղադրված են միջանկյալ և խարսխային հենարանների վրա: Ջերմային ընդարձակումները համակշռվում են խժժոցային կոմպենսատորով: Հարստացուցիչ ֆարրիկայից մինչև պոչամբար պոչատարի երկարությունը կազմում է 34.5կմ, նիշերի տարբերությունը մոտ 800.0մ է, բաց տեղամասերը՝ 12.3կմ, թունելային տեղամասերը՝ 17.4կմ, դյուկերները՝ 4.8կմ:

### 5.3.2 Դյուկերային անցումներ

Այն տեղամասերում, որտեղ պոչատարի ուղեգիծը հանդիպում է լայն ու խոր ձորի, կառուցում են ճնշումային խողովակաշարեր՝ դյուկերներ: Պողպատե խողովակներից դյուկերները կարող են աշխատել գործնականորեն ցանկացած ճնշման դեպքում: Դյուկերները կարող են լինել մեկ և մի քանի գծանի, իսկ խողովակները՝ տեղադրված մակերևույթին կամ թաղված: **Նկար 5.4**-ում բերված է մակերևույթին տեղադրված դյուկերի երկայնական կտրվածքը:

**Նկ. 5.4.** Դյուկերի երկայնական կտրվածքը



որտեղ 1-ը մուտքամասն է, 2-ը և 3-ը՝ համապատասխանաբար խարսխային և միջանկյալ հենարաններն են, 4-ը՝ կոմպենսատորներ, 5-ը՝ ելքամաս, 6-ը՝ դյուկերի դատարկման ջրթող և 7-ը՝ մետաղական էստակադա:

Դյուկերների կոնստրուկցիաներին ներկայացվում է մի շարք պահանջներ կապված շահագործման ընթացքում գննման, նորոգման, մաքրման և դատարկման հնարավորությունների ստեղծման հետ, իսկ գլխային հանգույցները պետք է լինեն անջրայթափանց: Բաց խողովակաշարերի վրա ազդող երկայնական և նորմալ ուժերին դիմադրում են խարսխային հենարանները, իսկ միջանկյալ հենարանները կարող են իրենց վրա ընդունել միայն ազդող բեռների խողովակաշարի առանցքին ուղղահայաց բաղադրիչները: Խողովակաշարերում առաջացող մեծ ջերմային լարումներից խուսափելու համար, խարսխային հենարանների միջև նրանց կտրում են և տեղադրում կոմպենսատորներ, որոնք հնարավորություն են տալիս խողովակին ազատ երկարելու և կարճանալու:

### 5.3.3 Դյուկեր 1

Դյուկեր 1-ը գտնվում է Զաջարան քաղաքից մոտ 8.0կմ դեպի արևելք: Դյուկերը կառուցված է Գեղի գետի կիրճում: Այն հատում է Գեղի գետը և Կապան-Գեղի ավտոճանապարհը: Գետի հատվածում կառուցված է մետաղական էստակադա (տես **Նկար 5.5**):

Մուտքի և ելքի գլխամասերի նիշերն են համապատասխանաբար 1438.0մ և 1422.0մ: Խողովակաշարի երկարությունը կազմում է 820.0մ: Խողովակները տեղադրված են գետնի մակերեսին բետոնյա խարսխային հենարանների վրա և ամրացված են հատուկ խարսխային հեղուսներով, միջանկյալ հենարանները նույնպես բետոնյա են:

**Նկ. 5.5. Դյուկեր 1**



*Դյուկերային անցումը*



*Գեղի գետ վրայի մետաղական էստակադա*


Նախագծվում է հակավթարային և սպասարկման ավազան համապատասխան ջրամեկուսիչ շերտով: Ավազանի պատվարը հողային տիպի է, կտրվածքը բերված է **Նկար 5.4**-ում: Ավազանի պատվարը նախագծված է СНиП 2.06.05-84\* «Плотины из грунтовых материалов» և ՀՀՇՆ 33-01-2014-ի նորմերին համապատասխան: Ջրամեկուսիչ շերտ է հանդիսացել տոփանված կավը 80սմ հաստությամբ, որը տոփանվում է 30, 25, 25 սմ հաստության շերտերով: Ջրամեկուսիչ շերտը ծածկվում է 15սմ հաստության ավազե շերտով: Հակավթարային և սպասարկման ավազանի պատվարը նախատեսվում է իրականացնել քարալիցքից, իսկ անցումային գոտիները՝ ավազից և խճավազից: Պատվարի առավելագույն բարձրությունը՝ 2.4մ է, վերևի շեյի թեքությունը՝ 1:1.8, իսկ ներքևի շեյի թեքությունը՝ 1:1.5: Պատվարի կատարի լայնությունը՝ 4.5մ է: Պատվարի կատարի ամբողջ երկարությամբ նախատեսված է մետաղական ցանկապատ և ցանցավոր դարպաս: Ավազանի ծավալը կազմում է 8500մ<sup>3</sup>, հատակագիծը պատկերված է **Հավելված 18**-ում:

Նոր նախագծով նախատեսվում է ավազանի դատարկումը կատարել գրեյդերի օգնությամբ: Դյուկերի Ø1020 × 10մմ և Ø720 × 10մմ խողովակաշարի ներքևի նիշում առկա դատարկման հանգույցում նախատեսված են երկու Ø530 × 8մմ խողովակաշարեր, յուրաքանչյուրի վրա տեղադրված է փական: Այն նախատեսված է խողովակաշարը դատարկելու համար: Փականը բացելով խողովակաշարում եղած խյուսը տեղափոխվում է դեպի ավազան: Դյուկերը դատարկելուց հետո անհրաժեշտ է խողովակաշարը լվանալ: Նախատեսվում է օգտագործել գոյություն ունեցող լվացման համակարգը: Մուտքի գլխամասի մոտ տեղադրված է 1000մ<sup>3</sup> տարողությամբ ջրի ռեզերվուար:

Խողովակաշարը վթարվելու դեպքում անմիջապես պետք է խյուսերի տեղափոխումը իրականացնել պահուստային Ø720 × 10մմ խողովակաշարերով: Վթարը վերականգնելուց հետո խյուսերի

տեղափոխումը իրականացնել  $\varnothing 1020 \times 10$  մ խողովակաշարով: Հակավթարային և սպասարկման ավազանին կից նախատեսվել է դրենաժային համակարգ, որը կբացառի գրունտային և մակերևութային ջրերի մուտքը դեպի ավազան (տիպային կտրվածքը բերված է **Նկար 5.6**-ում): Դրենաժի երկարությունը 271.79 մ է, թեքությունը՝  $i=0.011$ : Դրենաժի համար փորվող խրամուղին ունի սեղանաձև կտրվածք, հատակի 1.5 մ լայնություն, 1:0.5 շեղանկի թեքություն, 2.5 մ խորություն: Դրենաժում հավաքվող ջրերը թափվում են դեպի Գեղի գետ:

**Նկ. 5.6. Դրենաժային համակարգի տիպային կտրվածք**



Խյուսը ավազանում ջրազրկվում է և չորացած խյուսերը տեղափոխվում Արծվանիկի պոչամբար: Ջրազրկումը կատարվում է հետևյալ կերպ՝ ավազանում ջուրը լցվում է ջրընդունիչ հոր այնտեղից էլ դեպի նոր նախագծվող պոմպակայան: Պոմպակայանից ջուրը մղվում է դեպի մուտքի գլխամասի մոտ տեղադրված ռեզերվուար: Ջրընդունիչ հորը իրենից ներկայացնում է  $1020 \text{ մ} \times 8 \text{ մ}$  տրամագծի  $L=2.50 \text{ մ}$  երկարության պողպատե ծակոտած խողովակ,  $100 \text{ մ}$  տրամագծի 20 հատ անցքերով: Ջրընդունիչի հիմքը նախատեսվում է իրականացնել B15, F150, W4 մակնիշի հիդրոտեխնիկական բետոնից:

Վարընթաց տեղամասում գետի հատվածում նախատեսված է ե/բետոնե ընդունիչ հոր, որպեսզի վարընթաց տեղամասում վթարի դեպքում խյուսը  $\varnothing 1420 \times 16$  մ մետաղական խողովակով ուղղորդվի դեպի ավազան, իսկ վերընթաց տեղամասում առկա է ե/բետոնե վաք և ե/բետոնե հոր, որոնք խյուսը ուղղորդում են դեպի ավազան:

Գետի և ավտոճանապարհային հատվածներում նախատեսվում է խողովակաշարի երեսապատում: Դյուկերի խողովակաշարերի սպասարկման համար առկա են սպասարկման ավտոճանապարհներ: Խողովակաշարը սպասարկելու համար նախատեսվում են մետաղական աստիճաններ: Հիմնական գործող  $\varnothing 1020 \times 10$  մ խողովակաշարի տակ նախատեսվում է ե/բետոնյա կամ մետաղական վաք, որպեսզի խողովակաշարի վթարի դեպքում խյուսերը ուղղորդվեն դեպի ավազան:

Դյուկերի ամբողջ տարածքը հսկվում է անվտանգության աշխատակիցների կողմից: Տարածքում կան աշխատասենյակներ՝ անվտանգության և դյուկերի սպասարկման աշխատակիցների համար: Ավազանի ամբողջ պարագծով նախատեսվում է տեղադրել մետաղական ցանցով ցանկապատ, ինչը կբացառի կենդանիների մուտքը:



Հակավթարային ավազանից ( $V=8500\text{մ}^3$ ) պարզեցված ջրերը լցվում են ջրընդունիչ հոր, որտեղից էլ ջրերը  $\text{Ø}500\text{մմ}$  պողպատե էլեկտրատակցված խողովակներով ինքնահոս տրվում են  $27.0\text{մ}^3$  ծավալով ռեզերվուար: Ռեզերվուարից  $\text{ՅՈՒՅ 10-77-200}$  ( $Q=77\text{մ}^3/\text{ժամ}$ ,  $H=200\text{մ}$ ) սուզապոմպով պարզեցված ջրերը մղվում են դեպի մուտքի գլխամասերի մոտ տեղադրված գոյություն ունեցող ռեզերվուար: Պոմպակայանում տեղադրված են 2 սուզապոմպ՝ մեկը աշխատող, մյուսը՝ պահեստային: Պոմպակայանից ջուրը մղվում է ռեզերվուար  $\text{Ø}160\text{մմ}$  պլաստմասե խողովակներով ( $\text{ՍԻՃ SDR9 ՍՅ100(PN20) Ø160}$ ): Ուղեգծի երկարությունը  $560.0\text{մ}$  է:  $27.0\text{մ}^3$  ռեզերվուարից արտահեղման-տարաթողման ջրերը հեռացվում են  $\text{Ø}500\text{մմ}$  պողպատե էլեկտրատակցված խողովակներով ռեյիեֆի վրա: Ուղեգծի երկարությունը  $120.0\text{մ}$  է:  $1250.80$  հարթակից հավաքված ջրերը  $\text{Ø}100\text{մմ}$  պողպատե էլեկտրատակցված խողովակով միացվում են ռեզերվուարի արտահեղման-տարաթողման խողովակին:

Պոմպերի սնման և դեկավարման համար նախատեսվում են  $\text{ՅՄ-5111-4274}$  մակնիշի ուժային արկղեր: Նախատեսված է նաև արտաքին լուսավորություն, որի սնուցումը և դեկավարումը կատարվում է  $\text{ՅՕՄ-9802}$  մակնիշի արտաքին լուսավորության արկղի միջոցով:

### 5.3.4 Դյուկեր 2

Դյուկեր 2-ը գտնվում է Քաջարան քաղաքից մոտ  $12.0\text{կմ}$  դեպի արևելք: Դյուկերը կառուցված է Գիրաթաղ գետի կիրճում (տես **Նկար 5.7**): Այն հատում է Գիրաթաղ գետը և Կապան-Ներքին Գիրաթաղ ավտոճանապարհը: Գետի հատվածում կառուցված է մետաղական էստակաղա: Կառույցը գտնվում է երրորդ սեյսմիկ գոտում՝ համաձայն ՀՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարություն. Նախագծման նորմեր»-ի:

Մուտքի և ելքի գլխամասերի 13 նիշերն են համապատասխանաբար  $1384.0\text{մ}$  և  $1369.0\text{մ}$ : Խողովակաշարի երկարությունը կազմում է  $560.0\text{մ}$ : Խողովակները տեղադրված են մակերևույթին, բետոնյա խարսխային հենարանների վրա և ամրացված են հատուկ խարսխային հեղուսներով, միջանկյալ հենարանները նույնպես բետոնյա են:

Դյուկերի ներքևի նիշում՝  $1267.0\text{մ}$ , նախատեսվում է երկաթբետոնե սպասարկման ավազաններ №1 և №2 (տես **Հավելված 19**): Սպասարկման ավազանների մեջտեղում Գիրաթաղ գետը վերցված է երկաթբետոնյա վաքի մեջ, որը հնարավորություն ունի բաց թողնել  $100$  տարի ապահովվածության առավելագույն ելքերը: Սպասարկման ավազան №1-ի ծավալը կազմում է  $1050.0\text{մ}^3$ , իսկ №2-ի ծավալը՝  $950.0\text{մ}^3$ : Երկուսը միասին հնարավորություն ունեն կուտակելու  $2000.0\text{մ}^3$  խյուս: Սպասարկման ավազանները հաջորդաբար միացված են իրար երկաթբետոնե վաքով: Սպասարկման ավազանները լցվելու դեպքում №2 ավազանից  $\text{Ø}1420 \times 10\text{մմ}$  մետաղական խողովակով խյուսը տեղափոխվում է դեպի նախատեսվող հակավթարային և սպասարկման ավազան՝ համապատասխան ջրամեկուսիչ շերտերով: Ջրամեկուսիչ շերտեր են հանդիսանալու տոփանված կավը և  $\delta=1.5\text{մմ}$  հաստությամբ գեոմեմբրանը: Հակավթարային ավազանի ծավալը կազմում է  $3500\text{մ}^3$ , իսկ գլխավոր հատակագիծը պատկերված է **Հավելված 19**-ում:

Դյուկերի ներքևի նիշում գոյություն ունեցող պոմպակայանի միջոցով ջուրը մղվելու է դեպի մուտքի գլխամասի մոտ գոյություն ունեցող  $1000\text{մ}^3$  տարողությամբ ջրի ռեզերվուար: Այն օգտագործվելու է խողովակաշարի լվացման համար: Դյուկերի  $\text{Ø}1020 \times 10\text{մմ}$  խողովակաշարի ներքևի նիշում միացված է լինելու  $\text{Ø}530 \times 8\text{մմ}$  խողովակ, որի վրա տեղադրված է լինելու փական: Այն նախատեսված է խողովակաշարը դատարկելու համար: Դյուկերը դատարկելուց հետո

անհրաժեշտ է խողովակաշարը լվանալ: Նախատեսվում է օգտագործել գոյություն ունեցող լվացման համակարգը:

**Նկ. 5.7. Գյուկեր 2**



Ավազաների մաքրման համար նախատեսվում է տեղադրել երեք հատ խյուսամղիչ սուզապոմպեր ( $h=20.0\text{մ}$ ,  $Q=300.0\text{մ}^3/\text{ժ}$ ,  $N=37\text{կվտ}$ ): Խյուսամղիչ պոմպերը կուտակված պոչերը կմղեն նախատեսված հատուկ մեքենաների մեջ (**Նկար 5.8**): Պոչերը մեքենաներով կտեղափոխվեն դեպի թունել №5-ի մուտքամասի ընդունիչ հոր:

**Նկ. 5.8. Խյուսի տեղափոխման համար նախատեսված հատուկ մեքենա**



Սպասարկման և հակավթարային ավազանների ընդհանուր ծավալը կազմում է  $5500\text{մ}^3$ : Խողովակաշարը վթարվելու դեպքում անմիջապես պետք է խյուսերի տեղափոխումը իրականացնել պահուստային  $\text{Ø}720 \times 10\text{մ}$  խողովակաշարերով: Վթարը վերականգնելուց հետո խյուսերի տեղափոխումը կրկին իրականացնել  $\text{Ø}1020 \times 10\text{մ}$  խողովակաշարով:

Դյուկերի խողովակաշարերի սպասարկման համար առկա են սպասարկման ավտոնոմապարհներ: Խողովակաշարը սպասարկելու համար նախատեսվում է մետաղական և ե/բետոնյա աստիճաններ: Հիմնական գործող  $\text{Ø}1020 \times 10$ մ խողովակաշարի տակ նախատեսվում է ե/բետոնյա վաք, որպեսզի խողովակաշարի վթարի դեպքում խյուսերը ուղորդվեն դեպի ավազաններ և բացառվի շրջակա միջավայրի աղտոտումը: Նախատեսվում է, որ դյուկերի ամբողջ տարածքը հսկվելու է անվտանգության աշխատակիցների կողմից: Տարածքում կան աշխատասենյակներ՝ անվտանգության և դյուկերի սպասարկման աշխատակիցների համար:

Հակավթարային ավազանի ամբողջ պարագծով նախատեսվում է տեղադրել մետաղական ցանցով ցանկապատ, ինչը կբացառի կենդանիների մուտքը:

### 5.3.5 Դյուկեր 4

Դյուկեր 4-ը գտնվում է Քաջարան քաղաքից մոտ 32.0կմ դեպի արևելք: Դյուկերը կառուցված է Նորաշենիկ գետի կիրճում (տես **Նկար 5.9**): Այն հատում է Նորաշենիկ գետը և Կապան-Նորաշենիկ ավտոնոմապարհը: Գետի հատվածում կառուցված է մետաղական էստակադա:

Մուտքի և ելքի գլխամասերի նիշերն են համապատասխանաբար 1055.0մ և 998.0մ: Խողովակաշարի երկարությունը կազմում է 3420.0մ: Խողովակները տեղադրված են գետնի մակերեսին բետոնյա խարսխային հենարանների վրա և ամրացված են հատուկ խարսխային հեղուսներով, միջանկյալ հենարանները նույնպես բետոնյա են: Նախագծվում է հակավթարային և սպասարկման ավազան համապատասխան ջրամեկուսիչ շերտով: Ավազանի պատվարը հողային տիպի է կտրվածքը բերված է **Նկար 5.4**-ում: Ավազանի պատվարը նախագծված է ՇՈՒՍ 2.06.05-84\* «Плотины из грунтовых материалов» և ՀՀՇՆ 33-01-2014-ի նորմերին համապատասխան:

**Նկ. 5.9.** Դյուկեր 4



Ջրամեկուսիչ շերտ է հանդիսացել տոփանված կավը 80սմ հաստությամբ, որը տոփանվում է 30, 25, 25 սմ հաստության շերտերով: Ջրամեկուսիչ շերտը ծածկվում է 15սմ հաստության ավազե շերտով: Հակավթարային և սպասարկման ավազանի պատվարը նախատեսվում է իրականացնել քարալիցքից, իսկ անցումային գոտիները՝ ավազից և խճավազից: Պատվարի առավելագույն բարձրությունը՝ 4.0մ է, վերևի շեյի թեքությունը՝ 1:2.0 իսկ ներքևի շեյի թեքությունը՝ 1:1.5: Անցումային գոտիները իրենցից ներկայացնում են 20 և 30 սմ հաստության ավազե և խճավազե շերտեր, որոնք լծորդում են ջրամեկուսիչ շերտը պատվարի մարմնի հետ: Անցումային գոտիների հիմնական նպատակը ջրամեկուսիչ շերտի պաշտպանումն է ֆիլտրացիոն դեֆորմացիաներից և մեխանիկական ենթադրողումից: Պատվարի կատարի լայնությունը՝ 4.5մ է: Պատվարի կատարի ամբողջ երկարությամբ նախատեսված է մետաղական ցանկապատ: Գոյություն ունեցող ցանկապատը նախատեսվում է լծորդել պատվարի կատարի հետ: Լծորդման հատվածում նախատեսվում է տեղադրել ցանցավոր դարպաս: Հակավթարային և սպասարկման ավազանի ծավալը կազմում է 28480.0մ<sup>3</sup>, իսկ հատակագիծը բերված է **Հավելված 20**-ում:

Նոր նախագծով նախատեսվում է օգտագործել գոյություն ունեցող դատարկման համակարգը: Դյուկերի Ø1020 × 10մմ և Ø720 × 10մմ խողովակաշարի ներքևի նիշում միացված է Ø530 × 8մմ խողովակ, որի վրա տեղադրված է փական: Այն նախատեսված է խողովակաշարը դատարկելու համար: Փականը բացելով խողովակաշարում եղած խյուսը տեղափոխվում է դեպի ավազան: Դյուկերը դատարկելուց հետո անհրաժեշտ է խողովակաշարը լվանալ: Նախատեսվում է նաև օգտագործել գոյություն ունեցող լվացման համակարգը: Ելքի գլխամասի մոտ տեղադրված է 2000մ<sup>3</sup> տարողությամբ ջրի ռեզերվուար: Խողովակաշարը վթարվելու դեպքում անմիջապես պետք է խյուսերը տեղափոխումը իրականացնել պահուստային Ø720 × 10մմ խողովակաշարերով: Վթարը վերականգնելուց հետո խյուսերի տեղափոխումը իրականացնել Ø1020 × 10մմ խողովակաշարով:

Հակավթարային և սպասարկման ավազանին կից նախատեսվել է դրենաժային համակարգ, որը կբացառի գրունտային և մակերևութային ջրերի մուտքը դեպի ավազան: Դրենաժի երկարությունը 221.48մ է, թեքությունը՝ i=0.00768: Դրենաժի համար փորվող խրամուղին ունի սեղանաձև կտրվածք, հատակի 1.5մ լայնություն, 2:1 շեյերի թեքություն, 1.3մ խորություն: Դրենաժում հավաքվող ջրերը թափվում են դեպի Նորաշենիկ գետ: Դրենաժի տիպային կտրվածքը ներկայացված է **Նկար 5.6**-ում:

Խյուսը ավազանում ջրագրկվում է և տեղափոխվում Արծվանիկի պոչամբար: Ջրագրկումը կատարվում է հետևյալ կերպ՝ ավազանում պարզեցված ջրերը ջրընդունիչ հորի միջոցով ուղղորդվում են դեպի պոմպակայան: Պոմպակայանից ջուրը մղվում է դեպի ելքի գլխամասի մոտ տեղադրված ռեզերվուար: Ջրընդունիչ հորը իրենից ներկայացնում է 1020 × 8մմ տրամագծի 4.0մ երկարության պողպատե ծակոտած խողովակ, 200մմ տրամագծի 20 հատ անցքերով: Ջրընդունիչի հիմքը նախատեսվում է իրականացնել B15, F150, W4 մակնիշի հիդրոտեխնիկական բետոնից:

Երկաթբետոնե վաքերի քայքայված տեղամասերում նախատեսվում է իրականացնել հիմնանորոգման աշխատանքներ: Իրականացվում է ե/բ սալ ամրանային ցանցի տեղադրմամբ: Երկաթ-բետոնե վաքերի սպասարկումը իրականացնելու նպատակով նախատեսված են ե/բետոնե աստիճաններ, որոնց ամբողջ եզրագծով նախատեսված է մետաղական բազրիք: Ե/բ վաքերի աջակողմյա հատվածով նախատեսվում է իրականացնել ե/բ ընդունիչ հոր: Ընդունիչ հորի հատակագծային չափերն են 8.7մ × 4.4մ, բարձրությունը՝ 4.8մ: Ընդունիչ հորի ծածկը իրականացվում է մետաղական կոնստրուկցիաներից: Ընդունիչ հորի հատակը և պատերը նախատեսվում է իրականացնել B15, F150, W4 դասի միաձույլ հիդրոտեխնիկական բետոնից:

Գետի և ավտոճանապարհային հատվածներում նախատեսվում է խողովակաշարի երեսապատում:

Դյուկերի խողովակաշարերին սպասարկման համար առկա են սպասարկման ավտոճանապարհներ և երկաթ-բետոնե աստիճաններ: Դյուկերի ամբողջ տարածքը հսկվում է անվտանգության աշխատակիցների կողմից: Տարածքում կան աշխատասենյակներ անվտանգության և դյուկերի սպասարկման աշխատակիցների համար:

Հակավթարային ավազանի ամբողջ պարագծով նախատեսվում է տեղադրել մետաղական ցանցով ցանկապատ, ինչը կբացառի կենդանիների մուտքը:

Նախատեսվում է դյուկեր թիվ 4 հակավթարային և սպասարկման ավազանի արտաքին լուսավորությունը, որը իրականացվում է ДКУ01 տեսակի 22 հատ լուսատուներով: Մնուցումը և ղեկավարումը կատարվում է ՊՕՄ-9802 մակնիշի արտաքին լուսավորության արկղի միջոցով: Կարելային ցանցը կատարվում են ВБ6ШВ-0.66 մակնիշի կաբելով ցանկապատի վրայով:

**5.3.6 Թիվ 1, 2 և 4 դյուկերների շահագործման ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակների ռիսկերի կառավարումը**

Դյուկերները հանդիսանում են «Հարստացուցիչ ֆաբրիկա - Պոչատար - Արծվանիկ պոչամբար» համակարգի բաղկացուցիչ մասը, որոնց հետ կապված ռիսկերի կառավարումը իրականացվում է «ԶՊՄԿ» ՓԲԸ-ի պոչանքային տնտեսությունում Արտակարգ Պատահարների Կառավարման Պլանի (այսուհետ՝ ԱՊԿՊ) համաձայն: Մասնավորապես, ըստ ԱՊԿՊ-ի, Կոմբինատում ներդրված է հնարավոր պատահարներին արձագանքելու և գործողություններ ձեռնարկելու եռամակարդակ համակարգ, որի նկարագիրը բերված է ստորև **Աղյուսակ 5.2**-ում:

**Աղյուսակ 5.2. Պոչանքային տնտեսությունում արտակարգ պատահարների արձագանքման եռամակարդակ համակարգի նկարագիրը**

Մակարդակը	Նկարագիրը	Արձագանքելու կարգավիճակը
Դեղին/ազդանշանային համակարգ/	Պատահարների առաջացման ամենացածր մակարդակն է: Ենթադրում է համակարգի ընթացիկ սպասարկում Կոմբինատի ներքին ընթացակարգերի համաձայն: Արտաքին շահառուների տեղեկացում չի ենթադրում:	Վերլուծում (ղեկարգի կանխատեսում)
Սաթի գույն (վթարային) մակարդակ	Այս մակարդակը պայմանավորված է պոչանքային տնտեսության անվտանգությանը պոտենցյալ ու նշանակալի վտանգներ սպառնալու դեպքում և պահանջում է արտակարգ պատահարների ընթացակարգի գործարկում: Ներքին իրազեկումը պարտադիր է համապատասխան ռեսուրսներ մոբիլիզացնելու և վտանգին արագ արձագանքելու համար: Արտաքին իրազեկումը պարտադիր է մարդկանց տարհանման և «Պատահար» մակարդակին նախապատրաստվելու համար:	Պատրաստի վիճակ (ղեկարգը հայտնաբերվել է և կարող է հանգեցնել պատահարի)

Մակարդակը	Նկարագիրը	Արձագանքելու կարգավիճակը
Կարմիր (ձախողում/վթար)	Այս մակարդակը գործում է պոչանքային տնտեսությունում պատահարի/վթարի առաջացման և զարգացման դեպքում և պահանջում է արտակարգ պատահարների ընթացակարգի գործարկում: Արտաքին իրազեկումը պարտադիր է մարդկանց տարհանման և պատահարի վտանգների տեղայնացման, մեղմացման և վերացման համար:	Իրագործում (դեպքը վեր է ամվել վթարի)

Նույնականացված են պոչանքային տնտեսությունում (ներառյալ խողովակաշարի/պոչատարի և դյուկերների հետ) հնարավոր պատահարները և մշակված է դրանցից յուրաքանչյուրին արձագանքմանն ուղղված գործողությունների համալիր: Կոնկրետ խողովակաշարում և դյուկերներում տեղի ունեցած պատահարների կանխարգելման և մեղմացման համար Կոմբինատում մշակված և գործում ստորև բերված գործողությունների պլանը:

**Աղյուսակ 5.3. Խողովակաշարում/պոչատարում և դյուկերներում տեղի ունեցած պատահարների/վթարների կանխարգելման և մեղմացման գործողությունների պլանը**

Առաջարկվող մեղմացնող/կանխարգելիչ միջոցառումների առանձնահատկություններ	<p>Խողովակաշարի ստորին հատվածում և բաց վաքերի մոտակայքում փորել խրամուղի արտահոսքի ժամանակ դրանց առավել տարածումը կանխելու համար (որտեղ գործնականորեն հնարավոր է):</p> <p>Փականների կոտրվելու պարագայում՝ պոչատարի երկայնքով կանոնավոր ընդմիջումներով փակել փականները, շարժական դարպասները և աստիճանավոր վթարային ավազանը:</p> <p>Պաշտպանիչ պատնեշի կառուցման համար անհրաժեշտ ժայռաբեկորները, ավազը և գեոտեքստիլ նյութերը պետք է պահվեն պոչատարի/պոչատարի սպասարկման համակարգ/ամբողջ երկայնքով և պոչամբարային տնտեսության պահուստային տարածքում (տարածք՝ նախատեսված տվյալ տեղամասում վերոնշյալ նպատակով):</p> <p>Հակավթարային ավազաններ, որոնք կկանխեն արտահոսքի տարածումը:</p>
	<p>Պոչանք մատակարարող պոչատարի արտահոսքի զարգացմանը զուգահեռ տեղի է ունենում աղտոտում, որը կարելի է խոչընդոտել առանց Կոմբինատի աշխատանքը դադարեցնելու:</p>
Դեղին/ազդանշանային համակարգ/	<p>Ահագանգել պոչամբարային տնտեսության ղեկավարին ինչպես նաև արտադրական ղեկարտամենտի ղեկավարին՝ ներկայացնելով դեպքի մանրամասները (ներառյալ՝ արտահոսքի ուղղության և դեպքի վայր) և առաջարկել վերականգման ծրագիր:</p> <p>Կառուցել կամ ձևավորել պաշտպանական պատնեշ կամ փորել խրամուղի:</p> <p>Վերականգնել պոչամբարի սպասարկման համակարգը ինչպես առաջարկվում է համապատասխան որակավորում ունեցող ինժեների կողմից:</p> <p>Իրազեկել պոչամբարային տնտեսության ղեկավարին, արտադրական ղեկարտամենտի ղեկավարին, ինչպես նաև բնապահպանության բաժնի</p>

	<p>պետին համապատասխան որակավորում ունեցող ինժեների կողմից նախորդիվ իրականացված ստուգայցի արդյունքում ձևավորված վերականգման պլանի մասին և իրականացնել տվյալ պլանը:</p> <p>Առնվազն 3 ամիս ամենօրյա ստուգայցերի միջոցով դիտարկել և աստիճանաբար նվազեցնել, ըստ տեղանքի իրականացվող ստուգայցերի հաճախականությունը:</p>
<p>Սաթի գույն (վթարային) մակարդակ</p>	<p>Պոչամբարի սպասարկման համակարգի արտահոսքի զարգացումը հանգեցնում է պոչանքի կորստի/պոչամբարի սպասարկման համակարգից դուրս/ և պահանջում է Կոմբինատի աշխատանքի դադարեցում: Սա հանգեցնում է աղտոտվածության:</p>
<p>Սաթի գույն (վթարային) գործողություններ</p>	<p>Իրականացնել ծանուցման պլանը, տեղյակ պահել բոլոր աշխատակիցներին և աշխատանքային խմբերին իրավիճակի պահանջների համապատասխանությամբ:</p> <p>Վիզուալ ստուգել և բացահայտել արտահոսքի կամ միջադեպի գտնվելու վայրը և տեղյակ պահել համապատասխան որակավորում ունեցող ինժեներին:</p> <p>Պոչանքի հոսքը իրականացնել վթարային խողովակով, պոչանքի չվերահսկվող տարածումը կանխելու համար:</p> <p>Արտահոսքը մեկուսացնելու նպատակով, կառուցել կամ ձևավորել ժայռաբեկորներից պաշտպանական պատնեշ՝ արտահոսքը կանխելու կամ արտահոսքի ուղղությունը փոխելու համար:</p> <p>Վերականգնել պոչամբարի սպասարկման համակարգը, ինչպես առաջարկվում է համապատասխան որակավորում ունեցող ինժեների կողմից:</p> <p>Իրագեկել պոչամբարային տնտեսության ղեկավարին, արտադրական դեպարտամենտի ղեկավարին , ինչպես նաև բնապահպանության բաժնի պետին համապատասխան որակավորում ունեցող ինժեների կողմից նախորդիվ իրականացված ստուգայցի արդյունքում ձևավորված վերականգման պլանի մասին և իրականացնել տվյալ պլանը:</p> <p>Իրականացնել վիզուալ ստուգումներ միջադեպի տեղանքում և զեկուցել համապատասխան որակավորում ունեցող ինժեների: Դեպքի վայրում իրականացնել ամենօրյա գեոքիմիական մոնիթորինգ՝ առնվազն 1 շաբաթ, եթե ստուգման արդյունքները համընկնում են նախքան միջադեպը ունեցած արդյունքներին:</p> <p>Հակավթարային ավազանները մաքրել, պոչանքը տեղափոխել պոչամբար:</p>
<p>Կարմիր (ձախողում/վթար)</p>	<p>Պոչատար խողովակի բացվածք/ խոշոր անցք, որը կհանգեցնի շրջակա միջավայրի աղտոտմանը: Պոչանքը կարող է ներթափանցել տեղի ջրատար խողովակների, ինֆրաստրուկտուրայի մեջ, որը կարող է հանգեցնել մակերևութային ջրերի համակարգի գեոքիմիական բաղադրիչների փոփոխությանը:</p>
<p>Կարմիր (ձախողում/վթար) գործողություններ</p>	<p>Իրականացնել ծանուցման պլանը, տեղյակ պահել բոլոր աշխատակիցներին և աշխատանքային խմբերին իրավիճակի պահանջների վերաբերյալ:</p>

	<p>Դադարեցնել պոչատարի մատակարարումը պոչամբար և կանգնեցնել արտադրությունը:</p> <p>Վիզուալ ստուգել և բացահայտել արտահոսքի կամ միջադեպի գտնվելու վայրը և տեղյակ պահել համապատասխան որակավորում ունեցող մասնագետին:</p> <p>Պոչանքի հոսքը իրականացնել վթարային խողովակով, պոչանքի չվերահսկվող տարածումը կանխելու համար:</p> <p>Արտահոսքը մեկուսացնելու նպատակով, կառուցել կամ ձևավորել ժայռաբեկորներից պաշտպանական պատնեշ՝ արտահոսքը կանխելու կամ արտահոսքի ուղղությունը փոխելու համար:</p> <p>Վերականգնել պոչամբարի սպասարկման համակարգը, ինչպես առաջարկվում է համապատասխան որակավորում ունեցող մասնագետի կողմից:</p> <p>Իրագեկել պոչամբարային տնտեսության ղեկավարին, արտադրական ղեկարտամենտի ղեկավարին ,ինչպես նաև բնապահպանության բաժնի պետին համապատասխան որակավորում ունեցող մասնագետի կողմից կողմից նախորդիվ իրականացված ստուգայցի արդյունքում ձևավորված վերականգման պլանի մասին և իրականացնել տվյալ պլանը:</p> <p>Իրականացնել վիզուալ ստուգումներ միջադեպի տեղանքում և գեկուցել համապատասխան որակավորում ունեցող ինժեների: Դեպքի վայրում իրականացնել ամենօրյա գեոքիմիական մոնիթորինգ՝ առնվազն 1 շաբաթ, եթե ստուգման արդյունքները համընկնում են նախքան միջադեպը ունեցած արդյունքներին:</p> <p>Հակավթարային ավազանները մաքրել, պոչանքը տեղափոխել պոչամբար:</p>
--	---

Հարկ է նշել նաև, որ սույն ՇՄԱԳ հաշվետվության **Բաժին 5.3**-ում ներկայացված գործունեությանը՝ իր տեխնիկական լուծումներով, միտված է դյուկերների շահագործման ընթացքում անվտանգության ապահովմանը և հնարավոր արտակարգ իրավիճակների ռիսկերի կանխարգելմանն ու նվազեցմանը:

Դյուկերային անցումներում վթարների կանխարգելման նպատակով անընդհատ իրականացվում են ստուգումներ: Ստուգվում է Խողովակների մաշվածության աստիճանը՝ բարձր ճշտության սարքերով: Այն հատվածներում, որտեղ մաշվածության աստիճանը բարձր է, իրականացվում են վերականգնողական աշխատանքներ: Նշենք նաև, որ անվտանգության տեխնիկական կանոնների ապահովման նպատակով, Կոմբինատի աշխատանքի անվտանգության բաժնի կողմից մշտապես իրականացվում են ստուգայցեր և կազմվում է կատարողական՝ հայտնաբերված անհամապատասխանությունների շտկման նպատակով:



## 6. Այլընտրանքային տարբերակները, դրանց վերլուծությունը և ընտրված տարբերակի հիմնավորումը

Որպես նախատեսվող գործունեության երեք բաղադրիչների. 1) Դիզելային ավտոհավաքակայանի կառուցում և դիզելային ավտոպարկի կազմի նորացում, 2) Պայթուցիկ նյութերի նոր պահեստի տեղակայում և 3) Թիվ 1, 2 և 4 դյուկերների հակավթարային և սպասարկման ավազանների տեղակայում, այլընտրանքներ դիտարկվել են դրան գրոյական (ոչինչ չանել) տարբերակները, այսինքն՝

- 1) Շարունակվում է շահագործվել նախկին ավտոհավաքակայանը, որը գտնվում է Կոմբինատի տարածքում, իսկ առկա դիզելային ավտոպարկը (բեռնատարներ, հանքային տեխնիկա և այլն) չի թարմացվում,
- 2) Շարունակվում է շահագործվել Կոմբինատի տարածքում գտնվող պայթուցիկների պահեստը,
- 3) Կոմբինատի պոչատարի թիվ 1, 2 և 4 դյուկերները չեն համարվում ջրամուսիչ շերտով սպասարկման և հակավթարային ավազաններով:

Ստորև բերված **Աղյուսակ 6.1**-ում ներկայացված է նախատեսվող գործունեության բաղադրիչների այլընտրանքային տարբերակների դրական և բացասական կողմերի վերլուծությունը, ինչի հիման վրա կատարվել է ամենանպատակահարմար տարբերակի ընտրությունը:

**Աղյուսակ 6.1. Վերը նշված առաջին և երկրորդ բաղադրիչների այլընտրանքային տարբերակների դրական և բացասական կողմերի վերլուծությունը**

Գնահատման ենթակա ցուցանիշը	ԶՐՈՅԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿ	ԸՆՏՐՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿ
	Շարունակվում է շահագործվել Կոմբինատի տարածքում գտնվող ավտոհավաքակայանը և առկա դիզելային ավտոպարկը	Դիզելային ավտոհավաքակայանի կառուցում և դիզելային ավտոպարկի կազմի նորացում
	Շարունակվում է շահագործվել Կոմբինատի տարածքում գտնվող պայթուցիկների պահեստը	Պայթուցիկ նյութերի նոր պահեստի տեղակայում
Տեսողական ազդեցություն	Քանի որ գրոյական տարբերակի դեպքում նոր շինություններ և մասնաշենքեր չեն կառուցվելու, հետևաբար տեսողական ազդեցության որևէ ազդեցություն չի ակնկալվում: Մյուս կողմից, տեսողական ազդեցության տեսանկյունից հին բեռնատարների և այլ հանքային տեխնիկայի շահագործումը Քաջարան համայնքի բնակչության և Կոմբինատի աշխատողների համար աչքահանո չէ:	Ընտրված տարբերակը ենթադրում է Կոմբինատի բացահանքի տարածքում նոր դիզելային ավտոհավաքակայանի և պայթուցիկ նյութերի նոր պահեստի կառուցումը/տեղակայումը: Երկու կառույցներն էլ գտնվում են Քաջարան քաղաքից բավականին հեռավորության վրա և հազիվ թե տեսանելի լինեն այնտեղից: Բացի այդ, նշված կառույցների տեղակայումը թույլ կտա բարեկարգել բացահանքի մոտ 8.7 հա տարածք, ինչը դրական տեսողական ազդեցություն կունենա: Ավտոպարկի թարմացումը տեսողական առումով նույնպես դրական է:
Աշխատանքի պաշտպանություն և	Աշխատանքի անվտանգության տեսանկյունից գրոյական տարբերակը ոչ մի փոփոխություն չի ենթադրում,	Աշխատանքային նախագծերի համաձայն, նոր դիզելային ավտոհավաքակայանը հագեցած է լինելու ժամանակակից

Գնահատման ենթակա ցուցանիշը	ՉՐՈՅԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿ	ԸՆՏՐՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿ
	<p><b>Շարունակվում է շահագործվել Կոմբինատի տարածքում գտնվող ավտոհավաքակայանը և առկա դիզելային ավտոպարկը</b></p>	<p><b>Դիզելային ավտոհավաքակայանի կառուցում և դիզելային ավտոպարկի կազմի նորացում</b></p>
	<p><b>Շարունակվում է շահագործվել Կոմբինատի տարածքում գտնվող պայթուցիկների պահեստը</b></p>	<p><b>Պայթուցիկ նյութերի նոր պահեստի տեղակայում</b></p>
<p>արտակարգ իրավիճակներ</p>	<p>քանի որ Կոմբինատում գործող աշխատանքի պաշտպանության, տեխնիկական և հրդեհային անվտանգության գործելակերպերն ու անվտանգության համակարգերը մնում են անփոփոխ:</p>	<p>կաթայատնով (կաթայական տեղակայանքներով և այլն), ջեռուցման և ջրամատակարարման ցանցերով, մաքրման կայաններով, հակահրդեհային համակարգերով և այլն, ինչը դրական է ազդելու աշխատողների անվտանգության աստիճանի, ինչպես նաև տեխնաժին վթարների առաջացման հավանականության վրա: Բացի այդ, նոր դիզելային ավտոհավաքակայանը և պայթուցիկ նյութերի պահեստը գտնվում են Քաջարան քաղաքից բավականին մեծ հեռավորության վրա, հետևաբար, հնարավոր վթարների դեպքում բնակչության վրա ազդեցությունը կլինի նվազագույնը:</p>
<p>Շրջակա միջավայրի վրա ազդեցություն</p>	<p>Չրոյական տարբերակի դեպքում ազդեցությունը շրջակա միջավայրի վրա կմնա անփոփոխ: Կոմբինատում գործող ավտոհավաքակայանը և պայթուցիկների պահեստը, ինչպես նաև բեռնատարները և հանքային տեխնիկական աշխատելու են իրենց ներկայիս ռեժիմով և աղտոտման մակարդակով:</p>	<p>Շրջակա միջավայրի վրա ազդեցության առումով այս տարբերակը դրական է, քանի որ նոր ժամանակակից կաթայատների և կեղտաջրերի մաքրման կայանների կիրառումը թույլ են տալիս էականորեն նվազեցնել մթնոլորտային օդ արտանետումների և ջրային օբյեկտներ արտահոսքերի քանակները: Բացի այդ, գործող (հիմնականում EURO III ստանդարտի) դիզելային ավտոպարկի կազմի նորացումը նոր՝ EURO V և բարձր ստանդարտի բեռնատարներով և հանքային տեխնիկայով, կկրճատի դրանցում վառելիքի այրումից առաջացած արտանետումները:</p> <p>Նոր դիզելային ավտոպարկի և պայթուցիկ նյութերի պահեստի տեղակայումը թույլ կտա նաև բարեկարգել բացահանքի մոտ 8.7 հա տարածք, ինչը նույնպես դրական է:</p>
<p>Իրավական և հողօգտագործման պահանջներ</p>	<p>Իրավական և հողօգտագործման տեսանկյունից գրոյական տարբերակը ոչ մի ազդեցություն չի թողնում:</p>	<p>Նոր դիզելային ավտոհավաքակայանի և պայթուցիկ նյութերի պահեստի տեղակայումը նախատեսված է իրականացնել բացահանքի իրապարակում՝ կառուցապատման իրավունքով տրամադրված տարածքում:</p> <p>Նախատեսվող գործունեության ենթակա</p>

Գնահատման ենթակա ցուցանիշը	ԶՐՈՅԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿ	ԸՆՏՐՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿ
	<p>Շարունակվում է շահագործվել Կոմբինատի տարածքում գտնվող ավտոհավաքակայանը և առկա դիզելային ավտոպարկը</p>	<p>Դիզելային ավտոհավաքակայանի կառուցում և դիզելային ավտոպարկի կազմի նորացում</p>
	<p>Շարունակվում է շահագործվել Կոմբինատի տարածքում գտնվող պայթուցիկների պահեստը</p>	<p>Պայթուցիկ նյութերի նոր պահեստի տեղակայում</p>
		<p>բոլոր հողերի նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական է, իսկ գործառնական նշանակությունը՝ արդյունաբերական օբյեկտների և ընդերքօգտագործման: Իրավական առումով, իրականացվում են ՀՀ օրենսդրությամբ նման օբյեկտների նկատմամբ սահմանված բոլոր գործառնությունները, ներառյալ՝ սույն ՇՄԱԳ գործընթացը, իսկ հետագայում կատարվելու է նաև դրանց նախագծային փաստաթղթերի տեխնիկական անվտանգության փորձաքննություն: Ապագայում նշված օբյեկտները շահագործման են հանձնվելու համապատասխան ակտով: Ընդհանուր առմամբ, ընտրված տարբերակը նախատեսում է որոշակի ծավալով իրավական գործառնություն, սակայն դրանք հայտնի են և չեն հանգեցնի էական քարոշությունների:</p>
<p>Սոցիալական և սոցիալ-տնտեսական ազդեցություն</p>	<p>Սոցիալական տեսանկյունից գրոյական տարբերակը չեզոք է, այսինքն չի թողնում որևէ ազդեցություն հանրության և հարակից բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի վրա:</p>	<p>Ակնկալվում է, որ նոր դիզելային ավտոհավաքակայանի և պայթուցիկ նյութերի պահեստի կառուցումը/տեղակայումը, թե կառուցման և, թե շահագործման փուլերում կստեղծի նոր աշխատատեղեր, որոնց մի մասում կներգրավվեն Քաջարան քաղաքի և հարակից գյուղերի բնակիչները: Հետևաբար, նախատեսվող գործունեության իրագործումը դրական ազդեցություն կթողնի համայնքի սոցիալ-տնտեսական վիճակի վրա:</p>
<p>Տեխնիկա-տեխնոլոգիական նպատակահարմարություն</p>	<p>Տեխնիկատեխնոլոգիական տեսանկյունից այս տարբերակը չունի որևէ ազդեցություն:</p>	<p>Տեխնիկատեխնոլոգիական տեսանկյունից տվյալ տարբերակը նպատակահարմար է և իրագործելի: Թե նոր դիզելային ավտոհավաքակայանը, և թե պայթուցիկների նոր պահեստը գտնվելու են հանքի մոտ, ինչը հնարավորություն կտա կրճատել բեռնատարների և հանքային տեխնիկայի երթուղիների</p>

Գնահատման ենթակա ցուցանիշը	ԶՐՈՅԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿ	ԸՆՏՐՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿ
	Շարունակվում է շահագործվել Կոմբինատի տարածքում գտնվող ավտոհավաքակայանը և առկա դիզելային ավտոպարկը	Դիզելային ավտոհավաքակայանի կառուցում և դիզելային ավտոպարկի կազմի նորացում
	Շարունակվում է շահագործվել Կոմբինատի տարածքում գտնվող պայթուցիկների պահեստը	Պայթուցիկ նյութերի նոր պահեստի տեղակայում
		երկարությունը, իսկ արդյունքում նաև վազքը:
Ֆինանսական ծախսեր	Ֆինանսական առումով ամենամատչելի տարբերակն է: Չի պահանջում էական ֆինանսական ծախսումներ:	Նոր դիզելային ավտոհավաքակայանի և պայթուցիկ նյութերի պահեստի կառուցումը/տեղակայումը և հետագա շահագործումը, ինչպես նաև նոր բեռնատարների ու հանքային տեխնիկայի ձեռք բերումը կպահանջի մեծածավալ ֆինանսական ներդրումներ:

Ինչ վերաբերվում է թիվ 1, 2 և 4 դյուկերների հակավթարային և սպասարկման ավազանների տեղակայմանը, ապա այս բաղադրիչը ունի վառ արտահայտված բնապահպանական ուղղվածություն, այն է համալրելով դյուկերները հակավթարային և սպասարկման ավազաններով բացառել/նվազագույնի հասցնել շրջակա միջավայրի՝ հողի և ջրային ռեսուրսների հնարավոր աղտոտումը վթարների կամ տեխնիկական սպասարկումների ժամանակ: Առաջարկվող տարբերակը հանդիսանում է դյուկերների և նմանատիպ կառույցների հնարավոր վթարներին արձագանքելու լավագույն գործելակերպը և չնայած ծախսատարությանը, ձեռնարկվել է Կոմբինատի կողմից: Թիվ 1, 2 և 4 դյուկերների հակավթարային և սպասարկման ավազանների տեղակայման մեկ այլ այլընտրանք է հանդիսանում գրայական տարբերակը՝ ինչը խիստ անցանկալի է և չի դիտարկվում «Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի կողմից:

## 7. Շրջակա միջավայրի նկարագիրը


### 7.1 Տարածքի ֆիզիկաաշխարհագրական բնութագիրը

«ԶՊՄԿ» ՓԲԸ-ն բաց եղանակով շահագործում է Բաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրը: Գործող բացահանքը գտնվում է Բաջարան քաղաքից 1.7-2.7կմ հեռավորության վրա՝ Ողջի գետի աջակողմյան հատվածում: Հարստացուցիչ ֆաբրիկան գտնվում է Ողջի գետի ձախակողմյան հատվածում քաղաքի բնակելի հատվածից 300մ հեռավորության վրա: Գործող Արծվանիկ պոչամբարը գտնվում է Արծվանիկ գետի կիրճում հարստացուցիչ ֆաբրիկայից 34.5կմ հեռավորության վրա:

ԶՊՄԿ-ի Կապանի բազան գտնվում է Կապան քաղաքում, Գեղանուշի պոչամբար տանող ճանապարհի սկզբնամասում՝ Կոմբինատից 25.2կմ հեռավորության վրա: Կոմբինատի տարածքին համեմատաբար մոտիկ բնակավայրերն են՝ հյուսիսում՝ Գեղի, արևելքում՝ Լեռնաձոր և Անդոկավան գյուղերը և Կապան քաղաքը: Ուսումնասիրվող տարածքը և Սյունիքը ընդհանրապես ՀՀ-ի ամենալեռնային մարզը (**Նկար 7.1**):

Նրա ամենաբարձր (Կապուտջուղ՝ 3904մ) և ամենացածր (Մեղրու կիրճ՝ 375մ) կետերի բարձրությունների միջև եղած տարբերությունը (մոտ 3500մ) գերազանցում է ՀՀ բոլոր մյուս մարզերի նմանատիպ ցուցանիշները: Մարզի միջին բարձրությունը ծովի մակարդակից 2200մ է, իսկ առանձին լեռնագագաթները գերազանցում են 3000մ:

**Նկ. 7.1. Տարածաշրջանի ֆիզիկական քարտեզը**



**7.2 Ռելիեֆը և լանդշաֆտը**

Տարածաշրջանի մեծ մասը կազմում են ժայռերը, լեռնաշղթաները և անդնդախոր ձորերը: Արևմուտքում միջօրեականի ուղղությամբ Ամուլսարից մինչև Արաքսի անտեցեղենդային կիրճը ձգվում է Չանգեզուրի լեռնաշղթան: Լեռնաշղթան բաժանվում է հյուսիսային և հարավային մասերի: Հյուսիսային մասը ձգվում է Ամուլսարից Արամասար, ունի սինկլինալային կառուցվածք և համեմատաբար ցածր է (միջին բարձրությունը 2800մ է): Արևելյան լանջերը համեմատաբար փոքրաթեք են, մասնատված Որոտանի վտակներով (աստիճանաբար իջնում են Որոտանի հովիտ): Արևմտյան լանջերն ավելի գառիթափ են ու մասնատված Արաքսի վտակներով:

Տարածքի ռելիեֆը խիստ մասնատված է, նկատվում է տարածքի աստիճանական ցածրացում դեպի հարավ-արևելք և արևելք: Այդ ուղղությամբ էլ հոսում են մարզի գետերի զգալի մասը (Որոտան, Ողջի, Ծավ և այլն): Շրջանի ռելիեֆը կառուցվածքային էրոզիոն-տեղատարումային

տիպի է, V-աձև նեղ հովիտներով: Առաջացնող արտածին երևույթներից բնորոշ են ուժեղ ինտենսիվության սելավները<sup>3</sup>:

Հանքավայրի ծայրամասերը ներկայացված են տիպիկ բարձր լեռնային ռելիեֆով (բացարձակ նիշերը 1800-2500մ, իսկ հարաբերական բարձրությունների տարբերությունը 500-700մ է): Բարձրությունների անկումը բավական զգալի է և էապես վատթարացնում է վնասակար նյութերի ցրման պայմանները մթնոլորտում: Տեղանքի ռելիեֆի գործակիցը՝  $\eta=1.73$  է:


Հարստացուցիչ ֆաբրիկայի շրջանը լեռնագրական տեսանկյունից պատկանում է Պարսկական սարավանդին և գտնվում է Չանգեզուրի լեռնաշղթայի արևմտյան լանջի վրա, Ողջի գետի վերին հոսանքում: Գեոմորֆոլոգիական տեսակետից ֆաբրիկայի արտհրապարակն իրենից ներկայացնում է տիպիկ բարձր լեռնային գոտի խիստ կտրտված ռելիեֆով:

Բացհանքի և շրջապատող տարածաշրջանը ներկայացված են՝ լեռնային մարգագետնատափաստանային (2200-2600մ), բարձր լեռնային մերձալպյան (2400-2800մ) և բարձր լեռնային ալպյան (2800-3400մ) լանդշաֆտային գոտիներով (**Նկար 7.2**):

Նախատեսվող գործունեության տարածքին բնորոշ տիպային լանդշաֆտները պատկերված են ստորև **Նկար 7.3**-ում:

Փաբրիկայի մոտակայքում ռելիեֆը սաստիկ կտրտված է, լեռնաշղթաների լանջերը զառիթափ են և շատ տեղամասերում զրկված են հողաբուսական ծածկույթից:

**Նկ. 7.2. Տարածաշրջանի լանդշաֆտների քարտեզը**



<sup>3</sup>Հայաստանի ազգային ատլաս: Հատոր Ա: Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե, "Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն" ՊՈԱԿ, Երևան, 2007թ.

**Նկ. 7.3. ԶՊՄԿ-ի տարբեր տեղամասերը և շրջակա լանդշաֆտը**



### 7.3 Հողերի նկարագիրը

Անտառները նախկինում զբաղեցրել են մեծ տարածություններ, որտեղ ժամանակակից անտառային բուսականության հետ միասին եղել են նաև շատ մեզոֆիլ բույսեր: Մեծ տարածում են ունեցել հաճարենին և շագանակենին, որոնք այսօր անտառային լանդշաֆտում չեն հանդիպում: Շատ մեզոֆիլ անտառների փոխարեն այժմ տարածված են քսերոֆիլ նոսրանտառները և շիրյակային թփուտները: Խիստ մասնատված տեղանքներում հանդիպում են թխկու և բոխու անտառներ: Անտառային գոտում հիմնականում տարածված են անտառային դարչնագույն հողերը:

Նման անտառային զանգվածներ տարածված են նաև Մեղրի գետի աջակողմյան ավազանում: Այստեղ տիրապետում են 500-600մ խորությամբ երիտասարդ հովիտներ: Դրանց լանջերն ունեն 30-35° թեքություն և ծածկված են անտառներով, որոնք հովտալանջերը պաշտպանում են էրոզիոն գործընթացների ազդեցությունից: Հովիտների հատակը ծածկված է տարբեր մեծության պրոյուվիալ նստվածքներով, որոնք այստեղ են բերվել հեղեղների և գարնանային վարարումների ժամանակ:

Հովտային շրջաններում վրացական և արևելյան կաղնու անտառների տակ հիմնականում տարածված են լեռնաանտառային դարչնագույն հողերը (13.9% հումուսի պարունակությամբ): Դրանք զբաղեցնում են հյուսիսային, հյուսիս-արևմտյան և հյուսիս-արևելյան դիրքադրության ուղղորդ լանջերը և տարածվում մինչ 2400 մ բարձրություն: Անտառների տարածման ստորին սահմաններում գիհու անտառներից վեր սկսվում են վրացական կաղնու անտառները: Բնութագրվող գոտում անտառային բացատներն օգտագործվում են որպես վարելահողեր:

Լեռնային մարգագետնատափաստանային լանդշաֆտային գոտին տարածվում է 2200-2600մ բարձրությունների վրա: Այստեղ հիմնականում տարածված են թույլ կրագերծված և կրագերծված սևահողային ենթատիպերը, որոնք բնութագրվում են տարբեր աստիճանի հումուսայնությամբ: Հումուսի առավել բարձր տոկոսը արդյունք է փարթամ տափաստանացված մարգագետնային բուսականությամբ: Այստեղ մեծ տարածում ունեն ծոթորա-շուղախոտային, տափաստանացված մարգագետինները, որտեղ իշխում են շուղախոտը և վարսակը: Ավելի բարձրադիր տեղանքում հանդես է գալիս ուրցը, տարածված են նաև փետրախոտա-շուղախոտային և տարախոտային բուսականությունը:

Բնութագրվող տարածքը հիմնականում օգտագործվում է, որպես բնական խոտհարքեր և հացահատիկային կուլտուրաների մշակման համար: Բարձր լեռնային մերձալպյան և ալպյան

գոտին զբաղեցնում է ամենամեծ տարածությունը, ձգվելով բարձր լեռնաշղթաների 2200-3500մ բարձրությունների միջև:

**Տարածաշրջանում հողերի ընդհանուր բնութագիրը**

Ուսումնասիրվող հողատարածքները պատկանում են լեռնանտառային դարչնագույն հողերի տիպին: Չանգեզուրի լեռնաշղթայում այս հողատիպը տարածված է հիմնականում 500-1700մ ծ.մ. բարձրությունների վրա, իսկ հարավային դիրքադրության լանջերում դրանք հասնում են մինչև 2400մ բարձրության, այդ թվում Բաջարան քաղաքի շրջակա տարածքներում:

Տարածքում հողի աղտոտվածությունը որոշելու համար Կոմբինատի արտադրական օբյեկտների և նրանց սանիտարապաշտպանիչ գոտու տարածքներից կատարվել են նմուշառումներ`

- Ֆաբրիկայի շրջակա տարածքներ (նմուշներ № 01, 02, 03, 04, 05, 06),
- Բացահանքի շրջակա տարածքներ (նմուշներ № 13, 14, 15, 16, 17, 18),
- «Արծվանիկ» պոչամբարի շրջակա տարածքներ (նմուշներ № 10, 11, 12):

Հողանմուշների լաբորատոր փորձարկումների արդյունքների վերլուծության համաձայն ֆիզիկական կավ - ֆիզիկական ավազ լավագույն հարաբերությունը նկատվել է 04, 05, 06, 10, 11, 12, 15, 18 նմուշներում, իսկ համեմատաբար վատ հարաբերությունը` 01, 02, 03, 13, 17 նմուշներում: Առաջին շարքում ընդգրկված հողանմուշներն ըստ տեքստուրայի դասակարգման բնութագրվում են լավ, իսկ երկրորդ շարքում ընդգրկվածները` չափավոր վատ: Շատ քարքարոտություն նկատվել է 01, 02, 03, 13 նմուշներում: Գրեթե բոլոր հողանմուշներում նկատվել է բավարար զարգացած արմատային համակարգ և այն գնահատվել է միջինից լավ: Իսկ հողի կառուցվածքի առումով բարենպաստ հատկություններով օժտված են 10, 11, 12, 13, 14 և 18 հողանմուշները (պոչամբարների շրջակայք և բացահանքի սանիտարա-պաշտպանիչ գոտին): Ուսումնասիրված հողանմուշների pH-ը թույլ թթվայինից թույլ հիմնային է և տատանվում է 6.84-ից մինչև 7.78: Հումուսի պարունակությունը վերին A հորիզոնում տատանվում է 7.66-3.39%-ի սահմաններում:

Մոլիբդենի պարունակությունը ստուգիչ նմուշում, որը վերցված է ֆաբրիկայից 4կմ հեռավորության վրա, կազմել է 6.73մգ/կգ: Տարածքի հողերում մոլիբդենի բարձր պարունակությունները պայմանավորված են կենսաերկրաքիմիական պրովինցիային բնորոշ առանձնահատկությամբ: Համեմատ բարձր ֆոն գրանցվել է անմիջապես հանքի և ֆաբրիկայի հարակից տարածքներում: Ստուգիչ նմուշի հետ համեմատ մետաղների պարունակությունների զգալի տարբերություն նկատվել է պղնձի և բիսմութի համար, ինչը պայմանավորված է հանքանյութում վերջիններիս բարձր պարունակությամբ: Մետաղների պարունակության նկատելի փոփոխությունները հողանմուշներում ըստ ուսումնասիրվող տարածքների պատկերված է ստորև **Նկար 7.4**-ում:

**Նկ. 7.4. Մետաղների պարունակության նկատելի քանակական փոփոխությունները նմուշներում` ըստ տեղամասերի**

Բաղադրիչ	Ֆաբրիկայի արտերապարակ և հարակից տարածքներ						«Արծվանիկ» պոչամբարի շրջակայք			Բացահանքերի սանիտարա-պաշտպանիչ գոտի						Ստուգիչ
	01	02	03	04	05	06	10	11	12	13	14	15	16	17	18	
Co																
Ni																



Բաղադրիչ	Ֆաբրիկայի արտհրապարակ և հարակից տարածքներ						«Արծվանիկ» պոչամբարի շրջակայք			Բացահանքերի սանիտարա-պաշտպանիչ գոտի						Ստուգիչ
	01	02	03	04	05	06	10	11	12	13	14	15	16	17	18	
V				■	■								■	■		
Cu	■	■	■	■	■	■						■		■	■	■
Zn						■										
Cr							■	■					■			■
As					■		■									
Se				■												
Sr				■		■				■	■		■			
Mo			■	■	■	■										■
Ag	■	■			■	■										
Cd					■						■					■
Sn		■		■			■	■								■
Sb	■				■	■							■	■	■	■
Ba	■			■		■				■	■		■	■	■	
Pb	■										■					
Bi	■	■	■	■		■					■		■	■	■	

**Նկար 7.4**-ից երևում է, որ մոլիբդենով հիմնականում աղտոտված է հարստացուցիչ ֆաբրիկայի արտհրապարակը: Ֆաբրիկայի տարածքի հողերը աղտոտված են նաև պղնձով, բիսմութով և մասամբ այլ մետաղներով: Ընդհանուր առմամբ առավել աղտոտված են եղել հարստացուցիչ ֆաբրիկայի (նմուշներ 01, 04, 05, 06), բացահանքի (նմուշներ 14, 16, 17, 18) շրջակայքի հողանմուշները, իսկ ոչ աղտոտված՝ 12-ը («Արծվանիկ» պոչամբար):

Քաջարան քաղաքի ողջ տարածքում ինտենսիվ աղտոտվածություն գրանցված չէ; ծանր մետաղների բարձր պարունակություններով դաշտերը տեղայնացված են ֆաբրիկայի տարածքում, ինչպես նաև քաղաքի բնակելի տարածքից դուրս՝ դեպի արևմուտք ընկած տարածքներում: Քաջարանի հողատարածքների աղտոտման մակարդակը կարելի է դասել աղտոտման թույլ և մասամբ միջին մակարդակին:

Նախատեսվող գործունեության տարածքում և հանքաարդյունահանման տարածքում խախտված/վերականգնված և վերակառուցման աշխատանքների իրականացման արդյունքում խախտված և ռեկուլտիվացված հողերի մակերեսը 2019 թվականից մինչև 2021 թվականի հունիս ամիսը կազմում է 13.4 հա:

**7.4 Տեկտոնիկան, սեյսմիկությունը, սելավա- և սողանքաանվտանգությունը**


Տեկտոնիկ տեսակետից տարածքը գտնվում է Միսիսան-Չանգեզուր գեոանտիկլինալ գոտու հարավային մասում, որտեղ բացակայում է էֆուզիվ գոյացությունների ծածկույթը:

Տարածքը մտնում է Սյունիքի սեյսմոակտիվ գոտում, որի գեոդինամիկայի բնույթը և սեյսմիկան հիմնականում պայմանավորված են ակտիվ խզման խախտումներով: Այստեղ զարգացած են հյուսիս-արևմտյան և ենթամիջօրեականային խզվածքների խախտման համակարգը<sup>4,5</sup>:

Մակերևույթի վրա Սյունիքի գոտին ներկայացված է Խուլստուլի-Գիրաթաղի, Տաշտունի և Գեղիի երեք զուգահեռ խզվածքներով, որոնք վերահսկում են պղնձա-մոլիբդենային և բազմամետաղային հանքայնացումը:

Դիտարկվող տարածքում բացառիկ դեր է կատարում Տաշտունի II կարգի խզվածքը, որը անցնում է ենթամիջօրեականային ուղղությամբ (հյուսիս-արևելյան տարածում) ք.Ազարակ - գ.Լիչք – Տաշտունի լեռնանցք - ք.Քաջարան - Որոտանի լեռնանցք: Խզվածքը վարնետրային տիպի է, իջված 55-65° անկյան տակ հյուսիս-արևելյան և բարձրացված հարավ-արևմտյան թևով (տես **Նկար 7.5**):

**Նկ. 7.5. Տարածաշրջանի խզվածքների քարտեզը**



Քաջարան քաղաքի շրջանում խզվածքի գոտին կազմող ապարները խիստ տրորված են, ջարդոտված և ապաթերթաբարացված: Ավելի ցածր կարգի բազմաթիվ տարաբնույթ խզումներից կարելի է նշել Ողջիի խզվածքը, որը հատում է Քաջարան քաղաքի տեղադրման շրջանը ենթալայնական ուղղությամբ:

Համաձայն ՀՀ-ում գործող ՀՀՇՆ II-6.02-2006<sup>6</sup> շինարարական նորմերի, նախատեսվող գործունեության տարածքը պատկանում է III գոտուն, որի սեյսմակայունության քանակական գնահատականը բնութագրվում է սպասվող առավելագույն արագացմամբ  $A_{max}=0.4g$ , գրունտների շարժման արագությամբ  $V=32.0$ սմ/վրկ, MSK-64 սանդղակի բալերով՝ մինչև 9 և ավել:

Տարածաշրջանի սեյսմիկ, սելավա- և սողանքաանվտանգության նկարագիրը բերված է ստորև **Աղյուսակ 7.1**-ում:

**Աղյուսակ 7.1. Տարածաշրջանի սեյսմիկ, սելավա- և սողանքաանվտանգությունը**

<sup>4</sup>Геология Армянской ССР. Том VIII. Гидрогеология, Ереван: изд-во АН Арм.ССР, 1974, 392 стр.

<sup>5</sup>Акопян Е. Минералогия зоны окисления главнейших медно-молибденовых месторождений Армении, Ереван: изд-во АН Арм.ССР, 1960-252 стр.

<sup>6</sup>Նույնը

Գործոնը	Նկարագիրը
Մելավալտանգավորությունը	Կարգը՝ 1-ին կարգ Հանախականությունը՝ ուժեղ Մելավալտությունը՝ ուժեղ (15-35 մ <sup>3</sup> /կմ <sup>2</sup> ) Տիպը՝ ցեխաքարային
Մեյսմիկ շրջանացումը	Գտնվում է 9 բալանոց ուժգնության գոտում
Սողանքավտանգավորությունը	Բարձր վտանգավորության գոտի է: Առկա են խոշոր սողանքային տարածքներ՝ մի քանի ակտիվ օջախներով:

## 7.5 Երկրաբանական կառուցվածքը

Երկրաբանական տեսակետից տարածքը մտնում է Ալյա-Հիմալայան երիտասարդ ծալքավոր գոտու մեջ, որին բնորոշ են բարդ ու խայտաբղետ երկրաբանական և ջրաերկրաբանական պայմանները, լեռնակազմական ակտիվ գործընթացները և հրաբխային երևույթները:

Հարավային Սյունիքում գերակշռում են պալեոգոյի և պալեոգենի ներժայթուկ ապարները, միջին Սյունիքում՝ մեզոգոյի հրաբխածին-նստվածքային, պալեոգենի ներժայթուկ և հրաբխային ապարները, իսկ հյուսիսային Սյունիքում՝ նեոգենի լճային, պլիոցեն-չորրորդական հրաբխային ապարներ:

Տարածքի ամենահին գոյացությունները ներկայացված են մինչքեմբրիի և ստորին պալեոգոյի փոխակերպված ապարների ստվարաշերտով, որոնք ծածկված են վերին դևոնի հասակի շերտախմբով՝ ներկայացված խառնաքարերով, պորֆիրիտներով, քվարցիտներով, կրաքարերով և փայլարային թերթաքարերով: Ողջի գետի ձախափում (Փիրամզադագի լեռնաշղթայի ջրբաժան մասում) այդ նստվածքները ծածկված են ստորին էոցենի հրաբխային ապարներով, որոնք ներկայացված են մետամորֆիկ թերթաքարերով, պորֆիրիտներով՝ կրաքարերի, կավային թերթաքարերի և քվարցիտների շերտատուփերի առկայությամբ:

Չորրորդական ժամանակաշրջանը ներկայացված է դեյուվիալ և սառցադաշտային նստվածքներով: Ընդերքը կազմված է տարբեր տեսակի լավաներից, հիմնականում՝ բազալտներից: V-աձև հովիտների լանջերը ծածկված են դեյուվիով: Կան զգալի տեկտոնային խախտումներ: Գետերի ավազանները գրեթե ամբողջովին կազմված են ինտրուզիվ գոյացումներից՝ էոցեն-օլիգոցենի ժամանակաշրջանի գրանիտներ, գրանիտա-դիորիտներ, գրանիտա-սիենիտներ և մոնոցոնիտներ: Հովիտների լանջերում տարածված են ժամանակակից դեյուվիալ և այուվիալ թույլ զարգացած նստվածքներ:

Չգալի տարածում ունեն տարբեր ինտրուզիվ ապարները, որոնք տարբերվում են ըստ հասակի և տեղադրման ձևերի: Ամենախոշորը Մեղրու պլուտոնն է, որը Հայաստանի սահմաններում ձգվում է Ողջի գետից մինչև Արաքս գետը: Քաջարանի հանքավայրը գտնվում է Մեղրու պլուտոնի մոնոցոնիտների զանգվածի հյուսիսային կոնտակտի սահմաններում, Տաշտունի խզվածքի կախված կողմ: Արևմուտքում հանքավայրի սահմանները անցնում են Տաշտունի խզվածքի գոտիով, իսկ հյուսիսում՝ հպումային եղջերաքարերի գոտիով: Արևելքում հանքային դաշտի սահմանը որոշվում է հյուսիս-արևելյան տարածման հանքայնացված կառուցվածքների մարմամբ: Հանքային դաշտը կազմված է մոնոցոնիտային և պորֆիրաման գրանիտների ու գրանոդիորիտների ներժայթքումների, ինչպես նաև ստորին էոցենի հրաբխածին ապարներից: Երկու ինտրուզիվ զանգվածների միջև հպումը տեկտոնական է (Տաշտունի խզվածք): Ջրաերկրաբանական վիճակը տարածքում պայմանավորված է ռելիեֆի խիստ կտրատվածությամբ, լանջերի զառիթափությամբ, ինտրուզիվ ապարների գերակշիռ զարգացմամբ (ճեղքային տիպի ջրերի շրջապտույտով), ջրաբերուկների համեմատաբար աննշան հզորությամբ և բուսական խիտ ծածկույթի բացակայությամբ: Այս

գործոնները բերում են մակերևութային ջրահոսքի ավելացմանը և ստորերկրյա ջրերի սահմանափակված ձևավորմանը:

## 7.6 Հիդրոերկրաբանական պայմանները

Ինչպես նշվել է, շրջանի հիդրոերկրաբանական կառուցվածքը պայմանավորված է ռելիեֆի խիստ կտրտվածությամբ, լանջերի գառիթափությամբ, ինտրուզիվ ապարների գերակշիռ զարգացմամբ (ճեղքային տիպի ջրերի շրջապտույտով), ջրաբերուկների համեմատաբար աննշան հզորությամբ և բուսական խիտ ծածկույթի բացակայությամբ:

Մթնոլորտային տեղումները արագ հոսում են լանջերով, չհասցնելով ծծանցվել լեռնային ապարների մեջ: Դեռ ավելին, լեռնային զանգվածի ջրակլանման հատկությունները չափազանց փոքր են, իսկ խզվածքային խախտումները մեծամասամբ լցված են շփման կավերով, որոնք ավելի շատ ջրամերժ էկրաններ են, քան ջրաբերուկ գոտիներ: Քաջարանի հանքավայրի տարածքի սահմաններում ապարների ջրավորվածությունը հիդրոերկրաբանական ցանցի հենքից մինչև վերև աննշան է:

Մյուս կողմից, մթնոլորտային տեղումների մեծ քանակությունը և կլիմայի խոնավությունը նպաստում են ստորերկրյա ջրերի առաջացմանը՝ հիմնականում մթնոլորտային տեղումների անմիջական ներծծանցման շնորհիվ<sup>7</sup>:

Շրջանի արմատական ապարներում զարգացած են ճեղքա-գրունտային և ճեղքա-երակային ջրերը, վերնազետնաջրերը, գրունտա-ծակոտինային ջրերը ջրաբերուկային զոյացություններում և գրունտային ջրերի հորիզոնը գետերի հովիտների այլուվիալ նստվածքներում:

Հանքային դաշտում նկատված ստորերկրյա ջրերը, ըստ պարփակող ապարների լիթոլոգիական առանձնահատկությունների, շրջապտույտի բնույթի և մասամբ, քիմիական կազմի, բաժանվում են երկու հիմնական տիպերի.

### ***Ջրաբերուկային զոյացություններում մակերեսային շրջանառության ջրեր***

Այդ ստորերկրյա ջրերը իրենց հերթին ստորաբաժանվում են հետևյալ տեսակների՝

- Ջրեր դեյուվիալ նստվածքներում, բաշխվում են առանձին ուսպնյակների կամ հոսքերի տեսքով: Այդ ջրերի ելքերը մակերևութային ունեն խմբային դասավորություն, աղբյուրների դեբիտը աննշան է և ոչ հաստատուն: Ամենամեծ ջրավորվածությունը դիտվում է Ողջի գետի կիրճի ձախ լանջի վրա, որտեղ գերակշռում են ավազաքարերը և խիճ-խճավազային նստվածքները:
- Ջրեր այլուվիալ (ենթահունային) նստվածքներում, զարգացած են գետերի դարավանդներում, ողողահունային և առաջին վերողողահունային դարավանդներում: Գրունտային ջրերը գտնվում են 1.5-2.0 մ խորության վրա: Գրունտային ջրերի լճակի հիպոսմետրիկ տեղադրումը բավականին մոտ է ջրագծի նիշին:
- Ջրեր հին չորրոդական դարավանդային նստվածքներում (Ողջի գետի աջ ափ):

Հիդրոերկրաբանական և հետախուզական հորատանցքերը ցույց են տալիս, որ էյուվիալ-դեյուվիալ նստվածքների տարածման ամբողջ մակերեսում առկա են ջրատար հորիզոններ՝ 0.18-0.56 լ/վրկ ջրի տեսակարար ելքով: Ստորգետնյա ջրերի հայտնաբերման խորությունը 5-ից մինչև

<sup>7</sup>«ԶՊՄԿ» ՓԲԸ. Կոմբինատի ընդլայնում, հանքաքարի արդյունահանման արտադրողականությունը հասցնելով մինչև 12.5 մլն. տ/տարի, Բացահանքային տնտեսություն նախագիծը, Աշխատանքային նախագիծ, թիվ 46191, "Լեռնամետալուրգիայի ինստիտուտ" ՓԲԸ, Երևան, 2007թ.

8 մ է, երբեմն 10.6 մ: Քաջարանի հանքավայրի շրջանում Ողջի գետի հունի լայնությունը հասնում է 100 մ: Հունը լցված է գլաքար-խնաքարային նստվածքներով, որոնք ամբողջ հզորությամբ (մինչև 50 մ) ջրավորված են: Ջրի մի մասը ներծծվում է տակի արմատական ապարների մեջ, իսկ մյուս մասը դիտվում է որպես տակի գրունտային հոսքեր, 0.5-40 մ խորությամբ: Առավելագույն դեբիտը մինչև 28 մ խորանալիս՝ 5.6 լ/վրկ է (հորատանցք թիվ 62):

**Խորը շրջանառության ջրեր - ինտրուզիվ ապարներում ճեղքային ջրեր**

Հրաբխային ապարները, որոնց ծակոտկենությունը 1.5% է, գործնականորեն անջրանցիկ են: Ինտրուզիվ ապարների ջրակալումը սահմանափակված է ընդհանուր ճեղքավորվածությամբ: Ճեղքերը պայմանավորված են հողմնահարմամբ և տեկտոնական գործընթացներով: Մթնոլորտային տեղումները, կուտակվելով ճեղքերում, առաջացնում են ոչ մեծ անճնշում ջրային հոսքեր: Ճեղքային ջրերը զարգացած են շատ սահմանափակ: Հանքավայրի ճեղքային ջրերը չեզոք են կամ թույլ հիմնային (рН=7.0-7.8), այդ պատճառով առանձին մետաղների պարունակությունը նրանց մեջ աննշան է<sup>8</sup>:

Խորը շրջանառության ջրերի մեջ առանձնանում են հանքայնացված ածխաթթվային ջրերը, որոնք կապված են, գլխավորապես, Տաշտունի խզվածքի հետ<sup>9</sup>: Ջրերի դեբիտը մեծ չէ, 0.02-0.18/վրկ, ջերմաստիճանը՝ 4.5-12°C: Ըստ քիմիական կազմի այս ջրերը հիդրոկարբոնատ-սուլֆատ-մագնեզիում-կալցիումային են, մինչև 500 մգ/լ հանքայնացմամբ: Հանդիպում են նաև քաղցրահամ ջրերի աղբյուրներ, որոնց դեբիտը նույնպես մեծ չէ, 0.4-0.32/վրկ, ջերմաստիճանը՝ 5-7°C:

Հանքային են համարվում այն ջրերը, որոնց կազմը ձևավորում են բացահանքի աստիճանների վրա: Ոչ մեծ մակերևութային առվակները ձևավորվում են զանգվածի սահմաններում և ջրաքաշվում բացահանք: Բացահանքային ջրերը էապես կարբոնատային են, рН-ը միջինը 7.4 է, հանքայնացումը՝ 170-500մգ/լ: Հոսող գետնաջրերի և տեղատարափների առավելագույն հնարավոր հոսքը գործող բացահանք կազմում է 200մ<sup>3</sup>/ժ, իսկ միջինը՝ 120-160մ<sup>3</sup>/ժ:

Քաջարանի հանքավայրի բոլոր ստորգետնյա ջրերը, այդ թվում և հանքային ջրերը, իրենց քիմիական բաղադրությամբ վերաբերվում են հիդրոկարբոնատ-կալցիումային աննշան հանքայնացված ջրերին: Բաց լեռնային աշխատանքների ընթացքում ավելանում է ստորգետնյա ջրերի հանքայնացումը և համապատասխանաբար աճում է բոլոր հիմնական բաղադրիչների պարունակությունը:

Շրջանի հիդրոերկրաբանական առանձնահատկություններն են՝ խիտ հիդրոգրաֆիկ ցանցը, մակերևութային ջրերի մշտական բնույթը և դրանց մոտիկությունը ստորերկրյա ջրերին: Շրջանի մակերևութային, ստորգետնյա և հանքային ջրերն իրենց քիմիական կազմով նույնատիպ են, մոլիբդենի առկայությունը բնորոշ է բոլոր տիպի ջրերին, ընդ որում նկատվում է ուղղակի կախվածությունը ջրերում պարունակվող մոլիբդենի և սուլֆատների միջև:

<sup>8</sup>Карапетян А.И., Капляян П.М., Галстян А.Р. и др. Рудничные воды территории Армянской ССР, Сводный отчет по работам 1981-1984гг., Институт геологических наук АН Арм. ССР, Ереван, 1984г.

<sup>9</sup>«ՉՊՄԿ» ՓԲԸ. Կոմբինատի ընդլայնում, հանքաքարի արդյունահանման արտադրողականությունը հասցնելով մինչև 12.5 մլն. տ/տարի, Բացահանքային տնտեսություն նախագիծը, Աշխատանքային նախագիծ, թիվ 46191, "Լեռնամետալուրգիայի ինստիտուտ" ՓԲԸ, Երևան, 2007թ.

## 7.7 Մակերևութային ջրեր

Տարածաշրջանի հիմնական ջրային արտերիան Ողջի գետն է, իր մշտական և ժամանակավոր վտակներով: Ողջի գետը Արաքս գետի ձախափնյա վտակն է և համարվում է իր մեծությամբ Չանգեզուրի երկրորդ գետը, Որոտանից հետո: Ողջի գետը սկիզբ է առնում Կապուտջուղ հարավ-արևելյան լանջից 3650մ բարձրության վրա, Կապուտջուղ և Քաջարան գետերի միացումից և թափվում է Արաքս գետ ձախ ափից 350մ բարձրության վրա:

Ողջի գետի ավազանին բնորոշ է ապարների թույլ ջրանցիկություն, այդ իսկ պատճառով մթնոլորտային տեղումները բերում են մակերևութային հոսքի առաջացմանը, ինչի արդյունքում գետի ավազանը ունի զարգացած ջրագրական ցանց: Ողջին տիպիկ լեռնային գետ է, նեղ ոլորապտույտ հունով, հոսքի մեծ արագությամբ և բազմաթիվ մանր վտակներով, որոնք իրենցից ներկայացնում են լեռնային առվակներ: Իր ճանապարհին Ողջի գետն ընդունում է մի շարք վտակներ՝ Սակքար, Մյական, Բաղանաջուր, Դավազամի, Փխրուտ, Գեղի, Գիրաթաղ, Վաչագան, Արծվանիկ, Նորաշենիկ և այլն: Ողջի գետի խոշոր վտակներն են Գեղին և Նորաշենիկը, մյուս վտակները փոքր են՝ աննշան հոսքերով:

Ողջի գետ են թափվում նաև ժամանակավոր ջրահոսք ունեցող զգալի քանակի վտակներ, որոնք պարբերաբար բերում են իրենց հետ սելավային բնույթի ջրաքարային հոսքեր: Գետի սնուցումը խառն է, տեղի է ունենում մթնոլորտային տեղումների, հալվող և գրունտային ջրերի հաշվին, սակայն գերակշռում է հալոցքային սնուցումը (60-70%):

Բացահանքի տարածքով հոսում է Սակքար գետը իր Մյական վտակով: Սակքարը Ողջի գետի աջակողմյան վտակն է, որը թափվում է Ողջի գետ՝ Քաջարան քաղաքում: Այն սկիզբ է առնում Չանգեզուրի լեռնաշղթայի հարավ-արևելյան լանջերից, մոտ 3200-3300մ բարձրությունից: Մինչև Քաջարան քաղաքը ձախ կողմից նրան է միանում Մյական վտակը, որն իր ամբողջ երկարությամբ անցնում է խորը ձորի միջով:

### Սակքար գետի հիդրոլոգիական բնութագիրը

Սակքար գետ Հայաստանի դրոմետի կողմից Սակքար գետի վրա հիդրոլոգիական դիտարկումներ չեն իրականացվել: Այդ իսկ պատճառով **Աղյուսակներ 7.2-7.5**-ում ներկայացվող հիդրոգրաֆիական և հիդրոլոգիական տվյալները ստացվել են հաշվարկային եղանակով: Հաշվարկային գետահատվածը վերցված է Մյական վտակի միախառնումից հետո:

#### Աղյուսակ 7.2. Սակքար գետի հիդրոգրաֆիական և հիդրոլոգիական բնութագիրը

Գետ	Երկարությունը, կմ	Ջրի ավազանի մակերեսը, մ <sup>2</sup>	Հոսքի մոդուլը, լ/վ-կմ <sup>2</sup>	Հոսքի շերտը, մմ
Սակքար (Մյականի միախառնումից հետո)	9.34	25.1	23.9	754

#### Աղյուսակ 7.3. Սակքար գետի հիդրոգրաֆիական հաշվարկային բնութագրիչները

Գետ	Հունի միջին լայնությունը, մ	Հունի միջին խորությունը, մ	Միջին արագությունը, մ/րկ	Տարեկան միջին ջերմաստիճանը, °C
Սակքար (Մյականի միախառնումից հետո)	3.5	0.27	0.62	6.3

#### Աղյուսակ 7.4. Սակքար գետի հաշվարկային հիդրոլոգիական բնութագրիչները

Գետ-Դիտակետ	Տարեկան բազամյա միջին ելքը, մ <sup>3</sup> /վրկ	Հոսքի ծավալը, մլն.մ <sup>3</sup>	Առավելագույն ելքը, մ <sup>3</sup> /վրկ	Բացարձակ նվազագույն ելքը, մ <sup>3</sup> /վրկ	Ամսական նվազ. ելքը 95% ապահով. դեպքում, մ <sup>3</sup> /վրկ
Սակքար (Մյականի միախառնումից հետո)	0.59	18.8	4.81	0.15	0.12

**Աղյուսակ 7.5. Սակքար գետի ամսական միջին հաշվարկային ելքերը, մ<sup>3</sup>/վրկ**

Տարեկան բազամյա միջին ելքը, մ <sup>3</sup> /վրկ	Միջին ելքերն ըստ ամիսների, մ <sup>3</sup> /վրկ											
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
0.59	0.16	0.17	0.74	1.25	1.56	1.73	0.52	0.18	0.18	0.19	0.21	0.19

**Ողջի գետ՝ իր Նորաշենիկ և Արծվանիկ ձախակողմյան վտակներով**

Ողջի գետի ընդհանուր երկարությունը կազմում է 86.0 կմ, ջրհավաք ավազանի մակերեսը՝ 1032կմ<sup>2</sup> է: ՀՀ տարածքում գետի երկարությունը 56.0կմ է, ջրհավաք ավազանի մակերեսը՝ 643կմ<sup>2</sup>, ջրհավաքի միջին բարձրությունը 2380մ: Գետի միջին ջրանկումը 0.058 է, հոսքի գործակիցը՝ 0.61:

Համաձայն երկարամյա դիտարկումների, Ողջի գետի միջին հոսքը Կապան դիտակայանի մոտ կազմում է 9.59մ<sup>3</sup>/վրկ: Ջրի առավելագույն ծախսը դիտվում է մայիս-հունիս ամիսներին, իսկ նվազագույնը՝ հունվարին: Ջրի միջին ամսական նվազագույն ծախսը 95.0% ապահովվածության տարվա համար կազմում է Կապան քաղաքի մոտ 2.37մ<sup>3</sup>/վրկ, Քաջարան քաղաքի մոտ՝ 0.734մ<sup>3</sup>/վրկ: Հոսքի միջին արագությունը 0.65-0.7մ/վրկ:

Ողջի գետի ավազանը սելավավտանգ է: Սելավային տարափային վարարումները դիտվում են 5-10 տարի մեկ, իսկ աղետային վարարումները՝ 20-50 տարին մեկ անգամ:

ԶՊՄԿ-ի գործող պոչամբարը տեղադրված է Ողջի գետի ձախափնյա Արծվանիկ վտակի կիրճում, ինչի համար գետի հունը փոփոխված է: Պոչամբարի ազդեցության բացառման նպատակով գետի հոսքը ուղղվում է Ողջի գետ ջրհեռացման ջրանքի միջոցով: Արծվանիկ գետի երկարությունը 17կմ է, ջրհավաք մակերեսը 48կմ<sup>2</sup>, միջին անկումը՝ 50‰: Գետի սնուցումը խառն է՝ հալոցքաանձրևային, գրունտային: Առավելագույն գետավարարումը՝ մայիս ամսին: Աշնանային տեղատարափները հաճախակի ստեղծում են կարճատև վարարումների գագաթներ: Սառցային ռեժիմը ձմռանը արտահայտնված է թույլ:

Պոչամբարի պարզվածքը ներկայումս թափվում է Նորաշենիկ գետ, որը միախառնվում է Ողջի գետի ջրերի հետ Կապան քաղաքի մոտ: Նորաշենիկ գետի երկարությունը 26.8կմ է, ջրհավաք ավազանի մակերեսը՝ 96.0կմ<sup>2</sup>, ջրհավաքի միջին բարձրությունը՝ 1650մ, գետի միջին թեքությունը՝ 90‰:

Ողջի գետի հետազոտվող գետահատվածքում հիդրոլոգիական մոնիտորինգը իրականացվում է 1930-ական թվականներից: Տարբեր ժամանակներում Ողջի և Նորաշենիկ գետերի վրա իրականացվել են հիդրոլոգիական դիտարկումներ արդյունքները բերված են **Աղյուսակներ 7.6-7.7-ում**:

**Աղյուսակ 7.6. Միջին բազամյա ջրի ծախսի ներտարեկան բաշխումը, մ<sup>3</sup>/վրկ**

№	Գետ-դիտակետ	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	Միջին տարեկան
---	-------------	---	----	-----	----	---	----	-----	------	----	---	----	-----	---------------

1	գ.Ողջի-ք.Կապան	1.95	2.86	5.12	12.0	28.89	31.55	21.89	10.79	5.93	7.23	5.36	3.34	11.4
2	գ.Նորաշենիկ-գ.Նորաշենիկ	0.34	0.41	1.07	2.73	2.58	1.63	0.79	0.43	0.60	0.64	0.55	0.38	1.03

**Աղյուսակ 7.7. Ողջի գետի և Նորաշենիկ վտակի ջրերի միջին բազմամյա տարիների տարեկան ծախսի հիմնական բնութագրերը**

№	Գետ-դիտակետ	Գետի հոսք					
		Ջրի միջին տարեկան ծախսը, մ <sup>3</sup> /վրկ	Գետի հոսքի մոդուլը, լ/վրկ.կմ <sup>2</sup>	Գետի հոսքի գործակիցը	Սեզոնային բաշխումը, %		
					III-VI	VII-XI	XI-II
1	գ.Ողջի-ք.Կապան	11.4	18.0	0.55	62	31	7
2	գ.Նորաշենիկ-գ.Նորաշենիկ	1.03	10.5	0.52	66	25	9

## 7.8 Կլիմա

Տարածաշրջանի կլիման խոնավ է: Չմեռը ցուրտ է՝ թեթև քամիներով և օպտիմալ խոնավությամբ, հաստատուն ձյան ծածկույթով, տևում է բավականին երկար՝ 4-5 ամիս, սկսվում է նոյեմբերի կեսերից և շարունակվում մինչև ապրիլի կեսերը: Գարնանային ցրտահարություններ նկատվում են նաև մայիս ամսին: Աշնանային առաջին ցրտահարությունները նկատվում են հոկտեմբերի առաջին կեսին: Ամառը բավական տաք է, մեղմ, համեմատաբար խոնավ: Տարեկան ամենացածր տասնօրյակային ջերմաստիճանը լինում է դեկտեմբերին, հունվարին և փետրվարին՝ 0-5°C: Այդ ընթացքում օդի հարաբերական խոնավությունը կազմում է 50-70%, իսկ քամու միջին արագությունը՝ 1-3մ/վրկ: Տարեկան ամենաբարձր տասնօրյակային ջերմաստիճանը լինում է հուլիսին և օգոստոսին՝ 19-21°C, իսկ հարաբերական խոնավությունը՝ 45-60%: Բարենպաստ օրերին քամու միջին արագությունը կազմում է 2.5-3մ/վրկ: Արեգակնային ճառագայթման հաշվեկշիռը տարեկան կազմում է 45-60կկալ/սմ<sup>2</sup>, իսկ արևափայլի միջին ամսական տևողությունն ըստ բացարձակ բարձրության հուլիս ամսին կազմում է 320 ժամ:

### 7.8.1 Ջերմաստիճանը

Օդի ջերմաստիճանային ռեժիմի բնութագրերը բերված են ստորև **Աղյուսակներ 7.8-7.11**-ում:

**Աղյուսակ 7.8. Օդի միջին ամսական և տարեկան ջերմաստիճանները**

Կայաններ	Բարձրություն, մ	Միջին ամսական ջերմաստիճանը												Տարեկան
		I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
Քաջարան	1980	-2.3	-2.5	0.6	6.9	9.9	13.7	16.7	15.9	13.2	7.6	3.7	-0.3	<b>6.9</b>
Գեղի	1558	-1.2	-0.2	1.7	7.4	12.4	15.3	18.0	18.5	14.8	9.9	5.1	-0.2	<b>8.5</b>

**Աղյուսակ 7.9. Օդի բացարձակ ջերմաստիճանները**

Կայաններ	Բարձրություն, մ	Բացարձակ նվազագույն ջերմաստիճանը	Բացարձակ առավելագույն ջերմաստիճանը
Քաջարան	1980	-19	+33
Գեղի	1558	-29	+34



**Աղյուսակ 7.10. Օդի միջին նվազագույն ջերմաստիճանները**

Կայան	Բարձրություն, մ	Միջին նվազագույն ջերմաստիճանը ըստ ամիսների												Տարեկան
		I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
Քաջարան	1980	-5.7	-6.0	-2.6	3.3	6.3	9.8	12.8	12.1	9.4	4.1	0.4	-3.8	<b>3.3</b>

**Աղյուսակ 7.11. Օդի միջին առավելագույն ջերմաստիճանները**

Կայան	Բարձրություն, մ	Միջին առավելագույն ջերմաստիճանը ըստ ամիսների												Տարեկան
		I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
Քաջարան	1980	2.7	2.6	5.7	12.8	15.2	19.1	21.9	21.1	19.0	12.9	8.7	4.6	<b>12.2</b>

**7.8.2 Օդի խոնավությունը**

Քաջարանի տարածաշրջանում օդի հարաբերական խոնավության տվյալները ըստ ամիսների և տարեկան միջինը բերված են ստորև **Աղյուսակ 7.12**-ում:

**Աղյուսակ 7.12. Օդի հարաբերական խոնավությունը (Քաջարան)**

Կայան	Բարձրություն, մ	Միջին առավելագույն ջերմաստիճանը ըստ ամիսների												Միջին տարեկան
		I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
Քաջարան	1980	60	66	69	65	74	73	69	68	71	72	66	68	<b>68</b>

**7.8.3 Մթնոլորտային տեղումները**

Տեղումների քանակը և դրանց տեսակների հարաբերությունը կախված է տեղանքի բարձրության նիշերից: Տեղումների բաշխման քանակական և որակական բնութագրերը բերված են **Աղյուսակներ 7.13-7.16**-ում:

**Աղյուսակ 7.13. Տեղումների միջին ամսական և տարեկան քանակը**

Կայաններ	Բարձրություն, մ	Տեղումների միջին ամսական քանակը												Տարեկան
		I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
Քաջարան	1980	47	54	88	104	96	66	27	20	31	61	57	54	<b>705</b>
Գեղի	1558	27	38	56	74	96	57	25	22	28	48	38	26	<b>535</b>

**Աղյուսակ 7.14. Տեղումների օրական առավելագույն քանակը**

Կայաններ	Բարձրություն, մ	Օրական առավելագույն քանակը ըստ ամիսների												Տարեկան
		I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
Քաջարան	1980	30	32	43	66	65	45	37	66	36	36	52	33	<b>66</b>
Գեղի	1558	21	29	37	44	65	43	31	73	27	28	35	27	<b>73</b>

**Աղյուսակ 7.15. Տարբեր մեծության տեղումներով օրերի թիվը տարվա ընթացքում**

Կայաններ	Բարձրություն, մ	Տեղումների մեծությունը, մմ				
		≥1	≥5	≥10	≥20	≥30
Քաջարան	1980	97	45	19	7	1

**Աղյուսակ 7.16. Պինդ (պ), հեղուկ (հ) և խառը (խ) տեղումների բաշխվածությունը՝ տեղանքի բարձրությունից կախված**

Գոտիներ	Ամիս						
	X	XI	XII	I	II	III	IV
1500-2000 մ ծ.մ.	հխխ	հխպ	պ	պ	պ	պպխ	խխհ
2000-2500 մ ծ.մ.	խխպ	խխպ	պ	պ	պ	պ	պխխ
2500-3000 մ ծ.մ.	խպպ	խպպ	պ	պ	պ	պ	պպխ

**7.8.4 Ջյան ծածկույթը**

Լեռնային գոտում 1500-ից մինչև 2000մ ձնածածկույթը առաջանում է նոյեմբերին և վերանում է մարտի վերջից մինչև ապրիլի կեսերը: Ձնածածկույթի գոյության տևողությունը այդ գոտում հասնում է 100 օրի (104 օր - Քաջարան): Կայուն ձնածածկույթ դիտվում է ձմեռների 80%-ի դեպքում դեկտեմբերի կեսերից մինչև մարտի վերջը: Ջյան ծածկույթի տասնօրյակային առավելագույն բարձրության միջին խտությունը 1500 - 2000մ բարձրության շրջանների համար կազմում է 170 - 180կգ/մ<sup>3</sup>:

Ավելի բարձր լեռնային շրջանում ձնածածկույթը դիտվում է մինչև կես տարի՝ մինչև մայիսի առաջին օրերը, իսկ կայունը՝ 4-5 ամիս: Ձնածածկույթի առավելագույն բարձրությունը նախալեռներում լինում է մինչև 50սմ, իսկ բարձր լեռնային գոտում կարող է հասնել 1մ և ավելի (2200 - 2700մ բարձրությունների վրա): Տարածաշրջանի ձնածածկույթի առավելագույն տասնօրյակային բարձրությունները և ձնածածկույթի բնութագրիչների միջին արժեքները բերված են ստորև **Աղյուսակներ 7.17-7.18-ում**:

**Աղյուսակ 7.17. Ձնածածկույթի առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ**

Կայաններ	Միջին	Առավելագույն	Հնարավոր է 20 տարին մեկ անգամ
Քաջարան	38	91	90
Գեղի	-	50	-

**Աղյուսակ 7.18. Ձնածածկույթի բնութագրիչների միջին արժեքները**

Կայան	Ջյան ծածկույթով օրերի քանակը	Ձնածածկույթի առաջացման ժամկետները	Կայուն ձնածածկույթ		Ձնածածկույթի վերացման ժամկետները	Առանց կայուն ձնածածկույթի կրկնելիությունը, %
			առաջացման ժամկետները	քայքայման ժամկետները		
Քաջարան	104	9 XI	21 XII	18 III	24 IV	30

**7.8.5 Անբարենպաստ եղանակային պայմանները**

Տարվա ցուրտ ժամանակ անբարենպաստ եղանակային պայմաններն են՝ ձնատեղումները և ձնահողմը, որոնք բարձրադիր վայրերում առաջացնում են բարձր ձյան ծածկույթ՝ նպաստելով ձնահյուսի առաջացմանը: 2000 - 2700մ բարձրությունների վրա այս տիպի երևույթներ դիտվում են դեկտեմբեր-մարտ ամիսներին բավականին հաճախ: Ամեն տարի դիտվում է ուժեղ ձնաբուք, երբ մեկ օրվա ընթացքում տեղի են ունենում ավելի քան 20մմ տեղումներ, ձյան ծածկույթի բարձրությունը օրվա ընթացքում կարող է հասնել 40սմ-ի: Ջյան ծածկույթի միջին խտությունը

առավելագույն տասնօրյակային բարձրության դեպքում ծովի մակարդակից 1500 - 2000մ շրջանների համար կազմում է 170 - 180կգ/մ<sup>3</sup>, իսկ 2000 - 2500մ-ի դեպքում՝ 240 - 250կգ/մ<sup>3</sup>:

Մեկ սեզոնի ընթացքում ձնահողմերի թիվը կազմում է 7-15: Ամենից հաճախ ձնաքամու երևույթներ դիտվում են հունվարին և փետրվարին, սակայն մարտին ևս նրանց հաճախականությունը կարող է լինել զգալի:

Տարվա ցուրտ ժամանակահատվածը բնութագրվում է նաև հաճախակի դիտվող մառախուղներով: Նրանց քանակը ըստ բարձրության որպես կանոն աճում է, սակայն այստեղ կարևոր դեր է խաղում նաև լեռան տեղադրության գործոնը խոնավություն բերող հոսանքների նկատմամբ: Մառախուղները հաճախ են դիտվում լեռների արևելյան լանջերին (40 - 90 օր), ավելի հաճախակի գիշերները:

Տարածաշրջանը գտնվում է սառցապատման գոտում, սառցակեղևի հաստությունը 10 տարին մեկ Քաջարան քաղաքի շրջանում հասնում է 12.5-17.4մմ:

Տարվա տաք ժամանակահատվածում անբարենպաստ եղանակային պայմաններին են վերաբերվում առատ տեղումները: Ապրիլից մինչև հոկտեմբեր թափվում են 300 - 500մմ տեղումներ: Առավելագույն քանակը դիտվում է ապրիլ-մայիս ամիսներին, տեղումներով օրերի թիվը այդ ժամանակահատվածում կազմում է 20-30, իսկ տեղումները կրում են տեղատարափային բնույթ, դրանց ինտենսիվությունը կարող է հասնել 1.5-2.7մմ/րոպե: Մառախուղները տարվա տաք ժամանակահատվածին բնորոշ չեն:


### 7.8.6 Քամիները

2011 թ.-ին իրականացված ուսումնասիրությունների տվյալների համաձայն՝ տարածաշրջանում քամու միջին արագության ամենամեծ արժեքը գրանցված է հունվար ամսին հյուսիս-արևմտյան ուղղությամբ և կազմում է 3.6մ/վ: Տարածաշրջանում տարվա տարբեր ժամանակաշրջաններում քամու միջին ամսական արագության ամենամեծ արժեքը գրանցվել է ապրիլ և հուլիս ամիսներին և կազմում է 1.3մ/վ, իսկ միջին տարեկան արագությունը հավասար է 1.2մ/վ: Ուժեղ քամիներով օրերի քանակը ( $\geq 15$  մ/վ) 11-ն է:


Տարածաշրջանում քամու միջին արագությունների բաշխվածությունը տարվա տարբեր ժամանակաշրջաններում բերված են **Նկար 7.6**-ում:

Քամու ուղղությունների կրկնելիության պատկերները բերված են **Նկար 7.7**-ում: Ինչպես երևում է **Նկար 7.7**-ից տարածքում գերակշռում են հարավ-արևելյան ուղղությամբ քամիները: Ամենամեծ կրկնելիությունը դիտվում է հուլիս ամսին հարավ-արևելյան ուղղությամբ և կազմում է 56%:

**Նկ. 7.6.** Քամու միջին արագությունների բաշխվածությունը



**Նկ. 7.7.** Քամու ուղղությունների կրկնելիությունը



### 7.9 Մթնոլորտային օդի աղտոտվածությունը

«ԶՊՄԿ» ՓԲԸ-ի արտադրական գործունեության՝ մթնոլորտային օդի որակի վրա ազդեցությունը գնահատելու նպատակով, Կոմբինատի բնապահպանական բաժնի կողմից պարբերաբար իրականացվում են փոշու, ազոտի օքսիդների (NO, NO<sub>2</sub>), ածխածնի օքսիդների (CO, CO<sub>2</sub>), ծծմբային անհիդրիդի (SO<sub>2</sub>) և օզոնի փաստացի խտությունների/կոնցենտրացիաների գործիքային չափումներ և մշտադիտարկում՝ հետևյալ կետերում՝

- ԶՊՄԿ վարչական շենքին կից հրապարակ,
- Բացահանք 1,
- Բացահանք 2 (մետաղի թափոնների պահեստի մոտ),
- Քաջարան քաղաք, №1 Մանկության մոլորակ մանկապարտեզի տարածք,
- Ազդեցության գոտուց դուրս:

Չափումները կատարվել են 2020 թ.-ի հունվար-հուլիս ամիսներին պասիվ նմուշարկման և նմուշի լաբորատոր հետազոտության եղանակով, իսկ օգոստոս-դեկտեմբեր ամիսներին՝ RUBIX WT1 ավտոմատ չափման սարքով՝ ամենօրյա կտրվածքով: Գործիքային չափումների արդյունքում վնասակար նյութերի արտանետումների տարեկան միջինացված կոնցենտրացիաները 2020 թվականի համար, ինչպես դրանց համեմատումը ՀՀ կառավարության "Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների - ՍԹ-Կ) նորմատիվները հաստատելու մասին" թիվ 160-Ն որոշմամբ սահմանված ՍԹ-Կ-երի հետ բերված է **Աղյուսակ 7.19**-ում:

**Աղյուսակ 7.19. Մշտադիտարկման վայրերում մթնոլորտային օդն աղտոտող վնասակար նյութերի արտանետումների միջինացված տարեկան արժեքները 2020 թվականի համար և ՍԹ-Կ-երը**

Մշտադիտարկման վայրը	Արտանետվող վնասակար նյութը	Տարեկան միջինացված արժեքը, մգ/մ <sup>3</sup>	ՍԹ-Կ, մգ/մ <sup>3</sup>	
			առավելագույն միանվագ	միջին օրական
ԶՊՄԿ վարչական շենքին կից հրապարակ	Ընդհանուր փոշի	0.013	0.5	0.15
	NO <sub>2</sub>	0.0215	0.2	0.04
	SO <sub>2</sub>	0.0384	0.5	0.05
	CO	0.0255	5	3
	NO	0.005	0.4	0.06
	O <sub>3</sub>	0.02694	0.16	0.03
	CO <sub>2</sub>	738.2425		
Բացահանք 1	Ընդհանուր փոշի	0.0180	0.5	0.15
	NO <sub>2</sub>	0.0009	0.2	0.04
	SO <sub>2</sub>	0.0187	0.5	0.05
	CO	0.0115	5	3
	NO	0.0025	0.4	0.06
	O <sub>3</sub>	0.03745	0.16	0.03
	CO <sub>2</sub>	721.9617		
Բացահանք 2 (մետաղի)	NO <sub>2</sub>	0.0085	0.2	0.04
	SO <sub>2</sub>	0.0045	0.5	0.05

Մշտադիտարկման վայրը	Արտանետվող վնասակար նյութը	Տարեկան միջինացված արժեքը, մգ/մ <sup>3</sup>	ՍԹ-Կ, մգ/մ <sup>3</sup>	
			առավելագույն միանվագ	միջին օրական
Թափոնների պահեստի մոտ)	CO	0.0093	5	3
	NO	0.0037	0.4	0.06
	O <sub>3</sub>	0.036	0.16	0.03
	CO <sub>2</sub>	699.4831		
Քաջարան քաղաք №1 Մանկության մոլորակ մանկապարտեզի տարածք	NO <sub>2</sub>	0.0193	0.2	0.04
	SO <sub>2</sub>	0.0347	0.5	0.05
	CO	0.0880	5	3
	NO	0.0060	0.4	0.06
	O <sub>3</sub>	0.0238	0.16	0.03
	CO <sub>2</sub>	689.5451		
Ազդեցության գոտուց դուրս	NO <sub>2</sub>	0.0037	0.2	0.04
	SO <sub>2</sub>	0.0028	0.5	0.05
	CO	0.0113	5	3
	NO	0.0026	0.4	0.06
	O <sub>3</sub>	0.0327	0.16	0.03
	CO <sub>2</sub>	712.6774		


Վերլուծելով **Աղյուսակ 7.19**-ում բերված տվյալները կարելի է եզրակացնել, որ մշտադիտարկման վայրերում մթնոլորտային օդի որակը բնութագրող աղտոտիչների փաստացի կոնցենտրացիաները չեն գերազանցում բնակավայրերի համար սահմանված առավելագույն և միջին օրական ՍԹ-Կ-երը: Բացառություն են հանդիսանում Բացահանք 1 և Բացահանք 1, ինչպես նաև ազդեցության գոտուց դուրս վայրերում օգոնի փաստացի կոնցենտրացիաները, որոնք չնչին գերազանցում են միջին օրական ՍԹ-Կ-երը՝ համապատասխանաբար 0.0074, 0.0061 և 0.0027 մգ/մ<sup>3</sup> մեծություններով:

### 7.10 Տարածաշրջանի հատուկ պահպանվող տարածքները

Հանքասարի պղնձամոլիբդենային կոմբինատի տարածքից դեպի արևմուտք 5 կմ հեռավորության վրա գտնվում է "Չանգեզուր" պետական արգելավայրը, հարավ-արևելյան մասում՝ 18 կմ հեռավորության վրա՝ "Արևիկ" ազգային պարկը, իսկ դեպի արևելք 22 կմ հեռավորության վրա "Խուստուփ" պետական արգելավայրը:

Ստորև **Նկար 7.8**-ում ներկայացված է տարածաշրջանին մոտ գտնվող հատուկ պահպանվող տարածքները:

**Նկ. 7.8.** Հանքասարի պղնձամոլիբդենային կոմբինատի տարածաշրջանին մոտ գտնվող հատուկ պահպանվող տարածքները



«Արևիկ» աղգային պարկը ստեղծվել է ՀՀ կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 15-ի №1209-Ն որոշմամբ և զբաղեցնում է 33939.19հա տարածք: Ազգային պարկի տարածքում ներկայացված են լանդշաֆտային գոտիների գրեթե ողջ համակարգը՝ սկսած ցածր և միջին լեռնային կիսաանապատներից մինչև բարձր լեռնային տափաստաններն ու Մեղրի գետի վերին հոսանքների մերձալպյան տիպի լանդշաֆտը: Հատուկ ուշադրության առարկա են վայրի բնության հազվագյուտ և ոչնչացող տեսակները: 60 տարիների ընթացքում առաջին անգամ Հայաստանում՝ «Արևիկ» աղգային պարկի տարածքում, հայտնաբերվել է զոլավոր բորենի, որը գրանցված է Հայաստանի Կարմիր Գրքում:

«Խուստուփ» պետական արգելավայրը ստեղծվել է ՀՀ կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 19-ի №1465-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի՝ պետական սեփականություն հանդիսացող 6946.74հա հողերի վրա և ընդգրկում է Մեղրու լեռնաշղթայի հարավ-արևմտյան ճյուղավորության Խուստուփ լեռնազանգվածի բարձր լեռնային հատվածը:

«Չանգեզուր» պետական արգելավայրը ստեղծվել է 15.10.2009 թ.-ին (ՀՀ կառավարության №1187-Ն որոշում) և զբաղեցնում է 25711.5959հա տարածք: Արգելավայրի նպատակն է ապահովել Սյունիքի մարզի Բարգուշատի լեռնաշղթայի հարավային և Չանգեզուրի լեռնաշղթայի արևելյան լանջերի մերձալպյան մարգագետնային և մարգագետնատափաստանային բնական էկոհամակարգերի լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, բնության եզակի հուշարձանների, բնական պաշարների բնականոն զարգացումը, պահպանությունը, պաշտպանությունը, վերականգնումը, վերարտադրությունը, ինչպես նաև բնական և ռեկրեացիոն ռեսուրսների կայուն օգտագործումը: Այն զբաղեցնում է Չանգեզուրի լեռնաշղթայի Ողջի և Գեղի գետավազաններն ու Բարգուշատի լեռնաշղթայի հարավային լանջերը և սահմանակցում է Քաջարան քաղաքի լեռնագործական շրջանին և Մեղրու լեռնաշղթային՝ արևելքում ու Ադրբեջանի Նախիջևանի Հանրապետության "Օրդուբադ" ազգային պարկին՝ հարավ-արևմուտքում:

**7.11 Պատմամշակութային հուշարձանները**

ՀՀ Սյունիքի մարզում պատմամշակութային հուշարձանները սահմանված են ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» թիվ 2322-Ն որոշմամբ: Մասնավորապես, նախատեսվող գործունեության տարածաշրջանում առկա պատմության և մշակութային օբյեկտները՝ իրենց կոորդինատներով և նշանակության կարգավիճակով, ամփոփված են **Աղյուսակ 7.19**-ում:

**Աղյուսակ 7.19. Նախատեսվող գործունեության տարածաշրջանի պատմամշակութային հուշարձանները, դրանց գտնվելու վայրը և նշանակությունը**

№	Հուշարձանի անվանումը և հասցեն	Կառուցման տարեթիվը	Նշանակությունը	Կոորդինատները	Տեղադիրքը / Հեռավորությունը
1	Սբ. Հակոբ եկեղեցի, Քաջարան գյուղի մեջ	17-րդ դար	Հ	N 390 9.39', E 460 7.6698', 1886մ	Բացահանքից 0.5կմ
2	Գերեզմանոց, Քաջարան գյուղի մեջ	17-20 դդ.	Հ	N 390 9.601', E 460 7.7228', 1962մ	Բացահանքից 0.7կմ
3	Վերին Հանդ թաղամասի գերեզմանոց, Քաջարան քաղաք	Միջնադար	Հ	N 390 9.096', E 460 10.9505', 1653մ	Լցակայանից 1.2կմ
4	Վերին Հանդ թաղամասի Սբ. Աստվածածին եկեղեցի, Քաջարան քաղաք	1912թ.	Հ	N 390 9.1166', E 460 10.8151', 1696մ	Լցակայանից 1.1կմ
5	Գյուղատեղի Աչաղու, Կապան քաղաք	10-18 դդ.	Հ	N 390 13.909', E 460 18.4815', 1250մ	Բացահանքից 13.5կմ
6	Գյուղատեղի Աչաղու գերեզմանոց, Կապան քաղաք	17-18 դդ.	Հ	N 390 13.9636', E 460 18.4991', 1285մ	Բացահանքից 13.5կմ
7	Գյուղատեղի Աչաղու մատուռ, Կապան քաղաք	17-18 դդ.	Հ	N 390 13.9275', E 460 18.4656', 1253մ	Բացահանքից 13.5կմ
8	Բաղաբերդ, Կապան քաղաք	4-5 դդ.	Հ	N 390 12.8833', E 460 16.65', 1270մ	Ֆաբրիկայից 13կմ
9	Գյուղատեղի Շղարշիկ, Կապան քաղաք	15-16 դդ.	Հ	N 390 13.6853', E 460 19.9543', 1020մ	Բացահանքից 18կմ
10	Գյուղատեղի Շղարշիկի գերեզմանոց, Կապան քաղաք	15-16 դդ.	Հ	N 390 13.6853', E 460 19.9543', 1020մ	Բացահանքից 18կմ
11	Գյուղատեղի Իսնկանց, Կապան քաղաք	10-17 դդ.	Հ	N 390 13.6853', E 460 210073', 1199մ	Բացահանքից 21կմ

Ինչպես երևում է **Աղյուսակ 7.19**-ից, նախատեսվող գործունեության տարածքում և ազդեցության գոտում չկան պատմամշակութային հուշարձաններ:



## 7.12 Կենդանական և բուսական աշխարհը

«Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն նախաձեռնել է իր գործունեության ազդեցության տարածաշրջանում հետազոտության իրականացում, որի նպատակն է՝ ուսումնասիրել էկոհամակարգերի և էկոհամակարգերում կենսաբազմազանության վրա ազդեցությունը, ստեղծել բազմակողմանի ներկայացված տվյալների բազա, որը թույլ կտա գնահատել տարածքի բույսերի և կենդանիների կարգավիճակը և ներկայացնել առաջարկություններ նրանց հետագա պահպանության համար, համեմատել գոյություն ունեցող տվյալների բազայի հետ, գնահատել տեղի ունեցած փոփոխությունները և հնարավորության դեպքում նշել դրանց պատճառները: Անթրոպոգեն ազդեցությունը գնահատելու համար օգտագործվել են արդյունաբերական և էկոլոգիապես մաքուր տարածքների օդի, հողի, ջրի և տարբեր պոպուլյացիաներից վերցված նմուշները:

Հետազոտական աշխատանքներն իրականացվել են «Բիոգեոտեխ» ՍՊԸ-ի կողմից 2015թ.-ի նոյեմբերից մինչև 2016թ.-ի դեկտեմբերը, իսկ ստացված արդյունքները պարբերաբար թարմացվում են նոր ուսումնասիրությունների հիման վրա: Հետազոտությունները իրականացվում են «ԶՊՄԿ» ՓԲԸ-ի բացահանքի, դատարկ ապարների լցակայանների, հարստացուցիչ ֆաբրիկայի և նրա օժանդակ ստորաբաժանումների, այդ թվում նաև Արծվանիկի պոչամբարի և կոնսերվացված 3 պոչամբարների տարածքներում: Ուսումնասիրությունը ընդգրկել են նաև Ողջի գետի վերին և միջին հոսանքներն իր բոլոր վտակներով:

Կենսաբազմազանության գույքագրման և մոնիթորինգի համար իրականացվել են գիտահետազոտական արշավներ դեպի հետազոտվող տարածք: Դաշտային աշխատանքների ժամանակ հետազոտվել են բույսերի և կենդանիների տարածվածությունը, ինչպես նաև հավաքվել են նյութեր հետագա վերլուծությունների համար: Տվյալների հավաքն իր մեջ ներառել է բնակատեղի բնութագրերը, տեսակների պոպուլյացիաների քանակական հաշվարկը, GPS տվյալների գրանցումը, կենդանիների և բույսերի տեսակների լուսանկարումը:

Կատարվել են նաև կենդանի օրգանիզմների տարբեր խմբերի տեսակային կազմի գույքագրում և այն համեմատվել նույն տարածքում կատարված նախորդ ուսումնասիրությունների և ՀՀ Կարմիր գիրքի հետ:

Բույսերը ուսումնասիրվել են դասական մանրամասն երթուղայնացման եւ կիսաստացիոնար մեթոդներով: Երթուղային ուսումնասիրությունների ընթացքում կազմվել են երթուղու ընթացքում հայտնաբերված բույսերի մանրամասն ցուցակները, հավաքվել են հերբարիումային նյութ լաբորատոր աշխատանքների համար: Երթուղու ընթացքում կազմվել են նաև բուսականության ընդհանուր նկարագրությունը (տարբեր էկոհամակարգերի առկայությունը, գերիշխող տեսակները, բուսականության ընդհանուր վիճակը):

Աշխատանքային խումբը հետազոտական ժամանակահատվածում, կենդանիների տարբեր խմբերի ուսումնասիրության նպատակով գիտական արշավներ է կազմակերպել հետազոտվող տարածքում, կատարել է դաշտային դիտարկումներ և հետազոտվող նյութի հավաք, դաշտային պայմաններում հանդիպող կենդանիների տեսակային կազմը պարզելու և հավաքած որոշ կենդանիներ լաբորատոր պայմաններում ուսումնասիրելու համար:

Երթուղային հաշվարկների ժամանակ գրանցվել են կենդանիների անմիջական հանդիպումները, դրանց հետքերի (հողի, ավազի կամ ձյան վրա, սննդառության հետ կապված), թաքստոցների, բների, և կենսագործունեության արգասիքների առկայությունը: Երկկենցաղների և թռչունների հաշվարկն իրականացվել է նաև ըստ նրանց արձակած ձայների: Մանր կաթնասունների

տեսակային և քանակական կազմն ուսումնասիրվել է կենդանատրս թակարդների և ծուղակների օգնությամբ:

«ԶՊՄԿ» ՓԲԸ-ի և նրա հարակից տարածքների կանաքագնազանության ուսումնասիրության ամփոփագիրը բերված սույն Հաշվետվության **Հավելված 24**-ում:

### 7.13 Քաջարան խոշորացված համայնքի սոցիալ-տնտեսական պատկերը

#### 7.13.1 Ընդհանուր տվյալներ

Քաջարան խոշորացված համայնքը կազմավորվել է 2017թ.-ին Քաջարան քաղաքային և Քաջարանց, Լեռնաձոր, Գեղի, Նոր Աստղաբերդ գյուղական համայնքների միավորմամբ: Համայնքի կենտրոնը Քաջարան քաղաքն է: Համայնքը ընդգրկում է 21 բնակավայր. Քաջարան քաղաքային բնակավայրը և Քաջարանից, Լեռնաձոր, Փուխրուտ, Կաթնառատ, Չագիկավան, Բարիկավան, Անդոկավան, Հովշուտ, Գեղավանք, Գեղի, Գետիշեն, Նոր Աստղաբերդ, Ոչեթի, Աջաբաջ, Կարդ, Ներքին Գիրաթաղ, Վերին Գիրաթաղ, Քարուտ, Կիցք գյուղական բնակավայրերը:

Համայնքը վարչականորեն գտնվում է ՀՀ Սյունիքի մարզի հարավ-արևմտյան մասում: Կենտրոնի հեռավորությունը մարզկենտրոն Կապանից 25կմ է, մայրաքաղաք Երևանից՝ 330կմ, Իրանի Իսլամական Հանրապետության սահմանից՝ 50կմ: Համայնքը սահմանակից է Կապան, Միսիան, Տաթև, Մեղրի համայնքներին: Պետական սահմանով սահմանակից է նաև Ադրբեջանին (Նախիջևանի ինքնավար Հանրապետությանը):

Աշխարհագրորեն համայնքը գտնվում է ՀՀ հարավ-արևմուտքում, Չանգեզուրի լեռնաշղթայի արևելյան ճյուղավորումների, Բարգուշատի լեռնաշղթայի հարավային և Մեղրու լեռնաշղթայի հյուսիսային լեռնաբազուկների վրա: Տարածքն ընդգրկում է Ողջի գետի վերին ավազանը և Գեղի գետի ավազանն ամբողջությամբ:

Համայնքի կենտրոն Քաջարան քաղաքը կառուցված է Ողջի գետի երկու բարձրադիր ափերին, բավականին նեղ աստիճանաձև սարավանդի վրա: Քաղաքի կարգավիճակ է ստացել 1958թ.-ի օգոստոսի 21-ին: Գլխավոր հատակագիծը մշակվել է 1965թ.-ին:

#### 7.13.2 Բնակչությունը

2017թ.-ի նոյեմբերի 1-ի դրությամբ համայնքի մշտական բնակչությունը կազմել է 8145 մարդ: 8 բնակավայր չունի մշտական բնակչություն (**Աղյուսակ 7.20**):

**Աղյուսակ 7.20. Քաջարան խոշորացված համայնքի բնակչությունը**

№	Բնակավայրը	Բնակչությունը
1	Քաջարան	6978
2	Լեռնաձոր	345
3	Փուխրուտ	15
4	Կաթնառատ	14
5	Բարիկավան	217
6	Անոկավան	93
7	Չագիկավան	56
8	Գեղի	118
9	Գեղավանք	3

10	Նոր Աստղաբերդ	32
11	Աջաբաջ	10
12	Գետիշեն	48
13	Գ. Քաջարանց	216
<b>Ընդամենը</b>		<b>8145</b>

### 7.13.3 Ժողովրդագրությունը

Քաջարանի աշխատանքային ռեսուրսները կազմում են բնակչության 57%-ը: Աշխատանք չունեցողները կազմում են աշխատանքային ռեսուրսների 28%-ը: Գործազուրկների գերակշռող մասը կանայք են, կանանց աշխատատեղերի սակավության հետ: Աշխատողների մեծ մասը զբաղված են արդյունաբերությունում:

**Աղյուսակ 7.21. Քաջարան խոշորացված համայնքի բնակչությունը**

№	Ցուցանիշների անվանումը	Չափման միավորը	Քանակը
1	Աշխատանքային ռեսուրսներ	մարդ	4630
	զբաղվածներ	մարդ	3320
	գործազուրկներ	մարդ	1310
2	Կենսաթոշակառուներ, ներառյալ՝ հաշմանդամները)	մարդ	1589
3	Հաշմանդամներ	մարդ	399
	մինչև 18 տարեկան	մարդ	21
	18-ից 63 տարեկան	մարդ	378
4	Նպաստառու, այդ թվում	ընտանիք	58
	Սոցիալական նպաստ	մարդ	40
	Ընտանեկան նպաստ	մարդ	18

Բնակչության թիվը 2001թ.-ի մարդահամարից հետո նվազել է մոտ 15%-ով և նվազման միտումը շարունակում է: Բնակչության բնական աճը ցածր է:

### 7.13.4 Տնտեսությունը

Համայնքի տնտեսության առաջատար ճյուղը արդյունաբերությունն է, մասնավորապես հանքա-արդյունահանումը: Գյուղատնտեսությունը, հատկապես՝ հողագործությունը, առավելապես մենատնտեսային է: Առկա են անասնապահական երկու ֆերմերային տնտեսություններ: Մյուս համեմատաբար զարգացած ճյուղը էլեկտրաէներգետիկան է, հատկապես՝ հիդրոէներգետիկան:

Համայնքի գյուղատնտեսության պատկերը հետևյալն է՝

Անասնազրկաբանակ՝ 3127 գլուխ, այդ թվում՝

- Կով - 266 գլուխ,
- Խոզ - 58 գլուխ,
- Ոչխար - 2772 գլուխ,
- Ձի - 31 գլուխ:

Մեղվաբնտանիք՝ 1693:

Ցանվում է 122 հա կարտոֆիլ, 25 հա բանջարեղեն: Այգիներ՝ 60 հա:

**7.13.5 Կրթությունը և մշակույթը**

Համայնքում գործող երեք նախադպրոցական հաստատություններից մեկն է համայնքային: Մյուս երկուսը «ԶՊՄԿ» ՓԲԸ ենթակայության են: Համայնքային ենթակայության է նաև արվեստի դպրոցը: Արհեստագործական ուսումնարանն ու մանկապատանեկան մարզադպրոցը հանրապետական ենթակայության են:

Համայնքում գործում են նաև յոթ հանրակրթական դպրոցներ, որոնցից 5-ը միջնակարգ, 2-ը՝ հիմնական:

Համայնքի 4 բնակավայրերում գործում են հանրային գրադարաններ: Քաջարան քաղաքում առկա մշակույթի պալատը «ԶՊՄԿ» ՓԲԸ ենթակայության տակ է:

**7.13.6 Առևտուր և կենցաղային սպասարկում**

Համայնքում գործում են երեք բանկերի մասնաճյուղեր՝ Արդշինբանկի, Հայրիզնեսբանկի, Ամերիաբանկի, մեկ վարկային և երեք ապահովագրական ընկերությունների:

**7.13.7 Տրանսպորտ և կապ**

Կապի ծառայություններ մատուցող կազմակերպություններից Քաջարանում գործում են Վիվասելի, Յուքոմի, Ռոստելեկոմի, Բիլայնի, Հայփոստի մասնաճյուղերը, տեղական կաբելային հեռուստատեսություն: Երկու գրանցված տաքսի ծառայության կազմակերպություններ:

**7.13.8 Հյուրանոցներ և հանրային սնունդ**

Համայնքում առկա հյուրանոցներից մեկը պատկանում է «ԶՊՄԿ» ՓԲԸ-ին և սպասարկում է հիմնականում Կոմբինատի կարիքները: Հանրային սննդի օբյեկտներից հինգը ռեստորաններ են, մյուսները՝ արագ սննդի կետեր:

**7.13.9 Ջրամատակարարում, կոմունալ և այլ ծառայություններ**

Քաջարան քաղաքի և Լեռնաձոր գյուղի խմելու ջրի մատակարարման, կոյուղու ծառայությունները իրականացնում է "Քաջարանի համայնքի կոմունալ տնտեսություն" ՓԲԸ-ն: Ջրամատակարարման և կոյուղու համակարգերը համայնքային սեփականություն են: Գազի բաշխման ներհամայնքային ցանցը և ս համայնքային սեփականություն է, որը տրված է Գազպրոմ-Արմենիա կազմակերպությանը անհատույց շահագործման: Աղբահանությունը պայմանագրային հիմունքներով իրականացնում է «Քաջարանի կոմունալ տնտեսություն» ԲԲԸ-ն:

**7.13.10 Պետական և համայնքային ծառայություն**

Պետական և համայնքային ծառայությունները և դրանցում ներգրավված աշխատողների թվաքանակը ամփոփված է **Աղյուսակ 7.22**-ում:

**Աղյուսակ 7.22. Պետական և համայնքային ծառայությունները և աշխատողների թվաքանակը**

Կազմակերպություններ	Աշխատողների թիվը
Տեղական ինքնակառավարման մարմիններ	50 (42)
Համատիրություն	11 (11)

ՔԿԱԳ	1
Ոստիկանություն	11
Անձնագրային բաժին	2 (2)
Հայհիդրոմետ ծառայության Քաջարանի օդերևութաբանական կայան	5 (4)
ԱԻՆ ՓԾ Քաջարանի ՀՓՁ	23 (6)
Հատուկ լեռնափրկարարական ծառայություն ՓԲԸ	15 (8)
Քաջարանի սեյսմիկ կայան	11 (10)

## 8. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը

### 8.1 Նպատակը

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գործընթացի նպատակն է նույնականացնել բնապահպանական և սոցիալական (դրական և բացասական) ազդեցությունները/գործոնները և ազդվող միջավայրերը (ֆիզիկական, կենսաբանական, սոցիալական), ինչպես նաև հատկորոշել նախատեսվող գործունեության իրագործման այն փուլերը, գործընթացները, դրանցում օգտագործվող սարքավորանքը, որոնք շրջակա միջավայրի վրա կթողնեն առավել նշանակալի ազդեցություն:

### 8.2 Ընդհանուր դրույթներ

«ՉՊՄԿ» ՓԲԸ բացահանքի տարածքում նախատեսվող գործունեության ստորև թվարկված բաղադրիչների.

- 1) Դիզեյնային ավտոհավաքակայանի կառուցումը, դիզեյնային ավտոպարկի կազմի նորացումը,
- 2) Պայթուցիկ նյութերի նոր պահեստի տեղակայումը,
- 3) Թիվ 1, 2 և 4 դյուկերների հակավթարային և սպասարկման ավագանների տեղակայումը,

շրջակա միջավայրի վրա կանխատեսվող ազդեցությունը ենթակա է վերլուծման և գնահատման դրանց բոլոր կենսափուլերի համար, իսկ ազդեցության ենթարկվող շրջակա և սոցիալական հիմնական միջավայրերն են՝

- Մթնոլորտային օդը,
- Ջրային ռեսուրսները,
- Հողային ռեսուրսները,
- Կենդանական և բուսական աշխարհը,
- Երկրաբանական կառուցվածքը և կայունությունը ,
- Աշխատանքային միջավայրը,
- Լանդշաֆտը և տեսողական պատկերը:

Նախատեսվող գործունեության բաղադրիչների շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և դրանց հետևանքները բացահայտելու, վերլուծելու, գնահատելու և մեղմացնելու նպատակով, պետք է նույնականացվեն բոլոր տեխնիկական լուծումները, գործողությունները/

գործընթացները, սարքավորումները, օգտագործվող նյութերն ու ռեսուրսները, որոնցից յուրաքանչյուրն առանձին կամ որաշակի գուգակցմամբ կարող են առաջացնել օդային և ջրային ավազաններ վնասակար նյութերի արտանետումներ և արտահոսքեր, վտանգավոր թափոններ, ազդել տարածաշրջանի կենսաբազմազանության, հանրային առողջության և աշխատողների անվտանգության, սոցիալական ենթակառուցվածքների, ինչպես նաև այլ միջավայրերի վրա:

### 8.3 Կիրառվող մեթոդակարգը

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը կատարվում է հետևյալ մեթոդակարգով և հաջորդականությամբ՝

1. Նույնականացվում են նախատեսվող գործունեության իրագործման կենսափուլերը (կառուցում, շահագործում),
2. Վերլուծվում են տեխնիկական լուծումները և գործընթացները,
3. Վերլուծվում են յուրաքանչյուր կենսափուլում իրականացվող աշխատանքները/միջոցառումները, ներառյալ.
  - Օգտագործվող սարքավորումները և տեխնիկան,
  - Կիրառվող նյութերը և բնառեսուրսները, դրանց ծավալները,
  - Տևողությունը/ժամանակացույցը,
  - Առաջացող թափոնների, արտանետումների ու արտահոսքերի վտանգավոր հատկությունները, իսկ հնարավորության դեպքում նաև մոտավոր քանակները:
4. Որոշվում են նախատեսվող գործունեության ուղղակի և անուղղակի ազդեցության գոտիները,
5. Նույնականացվում են այն միջավայրերը, որոնք կարող են ազդվել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում, մասնավորապես՝
  - ֆիզիկական միջավայրի տարրերը (կլիմա, օդային ավազան, ջրային և հողային ռեսուրսներ, երկրաբանական և հիդրոերկրաբանական կառուցվածք, տեսողական պատկեր, լանդշաֆտ և այլն),
  - կենսաբանական միջավայրը (կենդանական և բուսական աշխարհ, վտանգված տեսակներ, բնության հատուկ պահպանվող տարածքներ և այլն),
  - սոցիալական միջավայրը (սոցիալ-տնտեսական իրավիճակ, զբաղվածություն, բնակչություն, ազդակիր համայնքներ և ենթակառուցվածքներ, համայնքի և աշխատողների անվտանգություն, խոցելի խմբեր, պատմամշակութային ժառանգություն և այլն):
6. Գնահատվում են հատկորոշված ազդեցությունները վերը թվարկված միջավայրերի վրա, դրանց նշանակելիությունը և կանխատեսվող ազդեցության աստիճանը:
7. Առաջարկվում են միջոցառումներ, ուղղված շրջակա միջավայրի վրա կանխատեսված ազդեցությունների կանխարգելմանը, նվազեցմանը կամ մեղմացմանը:

### 8.4 Ելակետային տվյալները

Նախատեսվող գործունեության բոլոր 3 բաղադրիչների վերաբերյալ ելակետային տվյալները վերցվել են դրանց աշխատանքային նախագծերից և ներկայացված են ստորև **քաժիններ 8.4.1**-ում, **8.4.2**-ում և **8.4.3**-ում (կառուցման փուլի համար) և **քաժին 8.4.4**-ում (շահագործման փուլի համար):

Նախատեսվող գործունեության բոլոր 3 բաղադրիչներն իրագործվում են հետևյալ աշխատանքային ռեժիմով՝

- Հերթափոխերի թիվը՝ 1, տևողությունը՝ 8 ժամ/օր,
- Աշխատանքային օրերի թվաքանակը՝ 250 օր/տարի:

Ծինարարական աշխատանքների իրականացման նպատակով դիզելային ավտոհավաքակայանի և նոր պայթուցիկների պահեստի միջնամասում նախատեսվում է ժամանակավորապես մոնտաժել շինարարական ճամբար, որը հագեցած կլինի հետևյալ կառույցներով՝

№	Կառույցի նշանակությունը	Տեսակը
1	Աշխղեկի գրասենյակ	Կոնտեյներային
2	Հանդերձարան և հանգստի սենյակ	Կոնտեյներային
3	Ցնցուղարան	Կոնտեյներային
4	Մեկ տեղանոց զուգարան	Կոնտեյներային
5	Վագոն-ճաշարան	Կոնտեյներային
6	Գործիքների պահեստ	Կոնտեյներային

Ցնցուղարանները և զուգարանը միացված են լինելու սեպտիկ հորին, որում կուտակվելու են կոմունալ կենցաղային կեղտաջրերը: Ծինարարական աշխատանքների ավարտին շինարարական ճամբարը ապամոնտաժվելու է, իսկ սեպտիկ հորը դատարկվելու է համապատասխան կոմունալ ծառայության կողմից:

### **Կառուցման փուլ**

#### **8.4.1 "Դիզելային ավտոհավաքակայանի կառուցում, դիզելային ավտոպարկի կազմի նորացում" բաղադրիչի վերաբերյալ ելակետային տվյալները**

Նոր դիզելային ավտոհավաքակայանի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը իրականացվում է կառուցման և շահագործման կենսափուլերի համար: Կառուցման փուլում հիմնական կատարվելու են՝

- Հողային աշխատանքներ,
- Բետոնային աշխատանքներ,
- Մոնտաժման աշխատանքներ,
- Տարածքի բարեկարգման աշխատանքներ:

Աշխատանքները նախատեսվում է իրականացնել մեկ հերթափոխով (8 ժամ) մասնագիտացված բրիգադներով: Աշխատուժի անհրաժեշտ քանակը շինարարության համար որոշվում է համապատասխան աշխատանքների ծավալներով և շինարարության տևողությամբ: Աշխատանքային նախագծի համաձայն, ավտոհավաքակայանի կառուցման աշխատանքներին ներգրավվելու են 138 աշխատողներ, այդ թվում՝

- Բանվորներ՝ 115 աշխատող,
- Ինժեներատեխնիկական անձնակազմ՝ 15 աշխատող,
- Ծառայողական կազմ՝ 5 աշխատող,
- Սպասարկող և պահակային կազմ՝ 3 աշխատող:

Իրականացվող աշխատանքների բնույթից և ծավալից կախված աշխատողների թվաքանակն ըստ ամիսների փոփոխական է: Աշխատուժի միջինացված ամսական թվաքանակը կազմելու է 73 աշխատող:

Կառուցման փուլի տևողությունը մոտ 4 տարի է: Բացվածքը ներկայացված է **Հավելված 27**-ում:

Դիզեյային ավտոհավաքակայանի կառուցման ընթացքում օգտագործվող հիմնական սարքավորումները և տեխնիկան ներկայացված են ստորև`

- Էքսկավատոր, շերեփի տարողությունը 0.5մ<sup>3</sup>,
- Բուլդոզեր, հզորությունը 96կՎտ,
- Ավտոինքնաթափեր, բեռնունակությունը 10տ և 20տ,
- Ֆերմատար,
- Ավտոամբարձիչներ, բեռնամբարձությունը 16տ և 25տ,
- Բեռնիչ ճակատային, բեռնամբարձությունը 3տ,
- Բետոնախառնիչ:

**Հողային և այլ փոշեզոյացնող աշխատանքներ, տարածքի բարեկարգման աշխատանքներ**

Տարածքը մաքրվում է բուլդոզերով տեղափոխելով 1կմ հեռավորության վրա: Հանույթի տեղափոխումը կատարվում է ինքնաթափերով: Խրամուղիները, փոսերը և փոսորակները մշակվում են էքսկավատորով և ձեռքով: Հետլիցքը իրականացվում է բուլդոզերով և ձեռքով: Հողային աշխատանքների ընդհանուր տևողությունը մոտ 300 օր է, սակայն, առանձին սարքավորումների և շին.տեխնիկայի շահագործման տևողությունը և միջին օրական բեռնվածքը տարբեր է: Հողային աշխատանքների ընթացքում կիրառվող սարքավորումների և շին.տեխնիկայի տեսակները, քանակները և բեռնվածքը բերված է **Աղյուսակ 8.1**-ում:

**Աղյուսակ 8.1. Կիրառվող սարքավորումների և շին.տեխնիկայի տեսակները, քանակները և բեռնվածքը**

№	Սարքավորումը/տեխնիկան	Տեսակը/մակնիշը	Միջին բեռնվածքը, ժամ/օր	Տևողությունը, օր	Ընդհանուր բեռնվածքը, ժամ
1	Բուլդոզեր, հզորությունը 96կՎտ	170M	5	200	1000
2	Էքսկավատոր, շերեփի տարողությունը 0.5մ <sup>3</sup>	ՅՕ-4224	5	250	1250
3	Ավտոինքնաթափ, բեռնունակությունը 10տ	ԿամԱ3-5511	6	190	1140
4	Ավտոինքնաթափ, բեռնունակությունը 20տ	ԿամԱ3-6520	6	170	1020

Հողային և այլ փոշեզոյացնող աշխատանքների ծավալները, ներառյալ. 3-րդ և 4-րդ կարգի հողերի մշակումը խրամուղում, ցեմենտա-ավազային, խճային, կոպճային, ֆիլտրացիոն շերտերի իրականացումը, քանդած բնահողի հետլիցքը, հաշվարկված են **Հավելված 28**-ում: Քաջարան քաղաքից մինչև շին.հրապարակ մեկ երթուղու երկարությունը 5 կմ է:

**Բետոնային աշխատանքներ**

Կառույցների հիմքերը և կրող կոնստրուկցիաները հիմնականում պատրաստվում են երկաթբետոնից: Բետոնը բերվում է բետոնախառնիչով և մատուցվում է բետոնապոմպով, լցվում է 20-



30սմ հաստության շերտերով և խտացվում է թրթռիչով: Պատերը կառուցվում են պեմզաբլոկերից և սենդվիչներից: Տանիքը նախատեսվում է սենդվիչներից և փայտից լանջավոր:

Օգտագործվող սարքավորումները և տեխնիկան՝ բետոնախառնիչներ, ավտոինքնաթափեր, ավտոամբարձիչներ, ֆերմատար (ֆերմաների տեղափոխման համար), ճակատային բեռնիչ:

Ընդհանուր առմամբ, բետոնային, ներառյալ պատերի շարման և տանիքների կառուցման, աշխատանքների ընդհանուր տևողությունը ըստ նախնական հաշվարկների կկազմի 350 օր: Բետոնային աշխատանքների ընթացքում կիրառվող սարքավորումների և շին.տեխնիկայի տեսակները, քանակները և բեռնվածքը բերված է **Աղյուսակ 8.2**-ում:

**Աղյուսակ 8.2. Կիրառվող սարքավորումների և շին.տեխնիկայի տեսակները, քանակները և բեռնվածքը**

№	Սարքավորումը/տեխնիկան	Տեսակը/մակնիշը	Միջին բեռնվածքը, ժամ/օր	Տևողությունը, օր	Ընդհանուր բեռնվածքը, ժամ
1	Բետոնախառնիչներ (2 հատ)*	Լ-570A	5×2	180	1800
2	Ավտոինքնաթափ, բեռնունակությունը 10տ	ԿաՄԱ3-5511	6	330	1980
3	Ավտոինքնաթափ, բեռնունակությունը 20տ	ԿաՄԱ3-6520	6	310	1860
4	Փերմատար	-	5.5	40	220
5	Ավտոամբարձիչ, բեռնամբարձությունը 16տ	ԿՑ-2571	5	180	900
6	Ավտոամբարձիչ, բեռնամբարձությունը 25տ	ԿՑ-2577	4.5	160	720

\*բետոնի խառնուրդը պատրաստվելու է Քաջարան քաղաքի բետոնահանգույցում և բետոնախառնիչով մատակարարվելու է դեպի շին.հրապարակ

Բետոնային աշխատանքների ընթացքում շին.հրապարակ բերվող B7.5, B10, B12.5, B15, B20, B25 և B30 մակնիշի բետոնային խառնուրդների, մետաղական կոնստրուկցիաների, տանիքի, պատշարման, դռների, և պատուհանների և այլ նյութերի ծավալները հաշվարկված են **Հավելված 28**-ում: Քաջարան քաղաքից մինչև շին.հրապարակ մեկ երթուղու երկարությունը 5 կմ է:

**Մոնտաժման աշխատանքներ**

Մոնտաժման աշխատանքների ժամանակ արգելվում է օտար անձանց մուտքը այդ տարածք: Հիմնականում աշխատանքները իրականացվում են մեխանիզացված, իսկ այն տեղերում, որտեղ անհնար է տեխնիկայի աշխատանքը՝ ձեռքով: Հիմնական կոնստրուկցիաները, խողովակները, մալուխները և այլ հանգույցներ տեղափոխվում են Քաջարան քաղաքից դեպի շինհրապարակ ավտոինքնաթափերով: Մոնտաժման աշխատանքների ժամանակ կիրառվում են նաև ավտոամբարձիչներ:

Ընդհանուր առմամբ, մոնտաժման, ներառյալ էլեկտրա-, ջերմա-, ջրամատակարարման, հրդեհաշիջման, օդափոխման, հողանցման, արտաքին լուսավորության անցկացման, շինությունների ներքին հարդարման և այլ աշխատանքների ընդհանուր տևողությունը ըստ նախնական հաշվարկների կկազմի մոտ 400 օր: Մոնտաժման աշխատանքների ընթացքում կիրառվող սարքավորումների և շին.տեխնիկայի տեսակները, քանակները և բեռնվածքը բերված է **Աղյուսակ 8.3**-ում:

**Աղյուսակ 8.3. Կիրառվող սարքավորումների և շին.տեխնիկայի տեսակները, քանակները և բեռնվածքը**

№	Սարքավորումը/տեխնիկան	Տեսակը/մակնիշը	Միջին բեռնվածքը, ժամ/օր	Տևողությունը, օր	Ընդհանուր բեռնվածքը, ժամ
1	Ավտոինքնաթափ, բեռնունակությունը 10տ	КамАЗ-5511	6	350	2100
2	Ավտոինքնաթափ, բեռնունակությունը 20տ	КамАЗ-6520	6	250	1500
3	Ավտոամբարձիչ, բեռնամբարձությունը 16տ	КС-2571	5	120	600
4	Ավտոամբարձիչ, բեռնամբարձությունը 25տ	КС-2577	4.5	100	450

Մոնտաժման աշխատանքների ընթացքում շին.հրապարակ բերվող տարաբնույթ նյութերի, հանգույցների և կոնստրուկցիաների ծավալները հաշվարկված են **Հավելված 28**-ում: Քաջարան քաղաքից մինչև շին.հրապարակ մեկ երթուղու երկարությունը 5 կմ է:

Ավտոպարկում սպասարկվող հանքային տեխնիկայի թիվը 85 է (տես **Բաժին 5.1.1**-ը):

#### 8.4.2 "Պայթուցիկ նյութերի նոր պահեստի տեղակայում" բաղադրիչի վերաբերյալ ելակետային տվյալները

Պայթուցիկ նյութերի նոր պահեստի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը իրականացվում է կառուցման և շահագործման կենսափուլերի համար: Կառուցման փուլում հիմնականում կատարվելու են՝

- Հողային աշխատանքներ,
- Բետոնային աշխատանքներ,
- Մոնտաժման աշխատանքներ,
- Տարածքի բարեկարգման աշխատանքներ:

Աշխատանքները նախատեսվում է իրականացնել մեկ հերթափոխով (8 ժամ) մասնագիտացված բրիգադներով: Աշխատուժի անհրաժեշտ քանակը շինարարության համար որոշվում է համապատասխան աշխատանքների ծավալներով և շինարարության տևողությամբ: Աշխատանքային նախագծի համաձայն, պայթուցիկ նյութերի նոր պահեստի կառուցման աշխատանքներին ներգրավվելու են 125 աշխատողներ, այդ թվում՝

- Բանվորներ՝ 105 աշխատող,
- Ինժեներատեխնիկական անձնակազմ՝ 13 աշխատող,
- Ծառայողական կազմ՝ 4 աշխատող,
- Սպասարկող և պահակային կազմ՝ 3 աշխատող:

Իրականացվող աշխատանքների բնույթից և ծավալից կախված աշխատողների թվաքանակն ըստ ամիսների փոփոխական է: Աշխատուժի միջինացված ամսական թվաքանակը կազմելու է 68 աշխատող:

Կառուցման փուլի տևողությունը մոտ 3.5 տարի է: Բացվածքը ներկայացված է **Հավելված 27**-ում:

Դիզելային ավտոկայանի կառուցման ընթացքում օգտագործվող հիմնական սարքավորումները և տեխնիկական ներկայացված են ստորև՝

- Էքսկավատոր, շերտի տարողությունը 0.5մ<sup>3</sup>,

- Բուլդոզեր, հզորությունը 96կՎտ,
- Ավտոինքնաթափեր, բեռնունակությունը 10տ և 20տ,
- Ավտոինքնաթափ կողային, բեռնունակությունը 14տ,
- Ֆերմատար,
- Ավտոամբարձիչներ, բեռնամբարձությունը 6տ, 16տ և 25տ,
- Բեռնիչ ճակատային, բեռնամբարձությունը 3տ,
- Բետոնախառնիչ:

**Հողային և այլ փոշեգոյացնող աշխատանքներ, տարածքի բարեկարգման աշխատանքներ**

Տարածքը մաքրվում է բուլդոզերով տեղափոխելով 3կմ հեռավորության վրա: Հանույթի բեռնումը իրականացվելու է էքսկավատորներով, իսկ տեղափոխումը ինքնաթափերով: Խրամուղիները, փոսերը և փոսորակները մշակվում են էքսկավատորով և ձեռքով: Հետլիցքը իրականացվելու է բուլդոզերով, էքսկավատորով և ձեռքով: Հողային աշխատանքների ընդհանուր տևողությունը՝ մոտ 265 օր, սակայն, առանձին սարքավորումների և շին.տեխնիկայի շահագործման տևողությունը և միջին օրական բեռնվածքը տարբեր է: Հողային աշխատանքների ընթացքում կիրառվող սարքավորումների և շին.տեխնիկայի տեսակները, քանակները և բեռնվածքը բերված է **Աղյուսակ 8.4**-ում:

**Աղյուսակ 8.4. Կիրառվող սարքավորումների և շին.տեխնիկայի տեսակները, քանակները և բեռնվածքը**

№	Սարքավորումը/տեխնիկան	Տեսակը/մակնիշը	Միջին բեռնվածքը, ժամ/օր	Տևողությունը, օր	Ընդհանուր բեռնվածքը, ժամ
1	Բուլդոզեր, հզորությունը 96կՎտ	170M	5	120	550
2	Էքսկավատոր, շերտի տարողությունը 0.5մ <sup>3</sup>	ՅՕ-4224	5	170	800
3	Ավտոինքնաթափ, բեռնունակությունը 10տ	ԿամԱ3-5511	6	200	1080
4	Ավտոինքնաթափ, բեռնունակությունը 20տ	ԿամԱ3-6520	6	180	900

Հողային և այլ փոշեգոյացնող աշխատանքների ծավալները, ներառյալ. 3-րդ և 4-րդ կարգի հողերի մշակումը խրամուղում, ցեմենտա-ավազային, խճային, կոպճային, ֆիլտրացիոն շերտերի իրականացումը, քանդած բնահողի հետլիցքը, հաշվարկված են **Հավելված 28**-ում: Քաջարան քաղաքից մինչև շին.հրապարակ մեկ երթուղու երկարությունը 5.5 կմ է:

**Բետոնային աշխատանքներ**

Կառույցների հիմքերը և կրող կոնստրուկցիաները հիմնականում պատրաստվում են երկաթբետոնից: Բետոնը բերվելու է բետոնախառնիչով և մատուցվելու է բետոնապոմպով, լցվելու է 20-30սմ հաստության շերտերով և խտացվելու է թրթռիչով: Բետոնային աշխատանքները իրականացվելու են B7.5, B10, B12.5, B15, B20, B22.5 և B25 մակնիշի բետոններից:

Օգտագործվելու են բետոնախառնիչներ, ավտոինքնաթափեր, ավտոամբարձիչներ, ֆերմատար (ֆերմաների տեղափոխման համար), ճակատային բեռնիչ:

Ընդհանուր առմամբ, բետոնային, ներառյալ պատերի շարման և տանիքների կառուցման, աշխատանքների ընդհանուր տևողությունը ըստ նախնական հաշվարկների կկազմի 300 օր: Բետոնային

աշխատանքների ընթացքում կիրառվող սարքավորումների և շին.տեխնիկայի տեսակները, քանակները և բեռնվածքը բերված է **Աղյուսակ 8.5**-ում:

**Աղյուսակ 8.5. Կիրառվող սարքավորումների և շին.տեխնիկայի տեսակները, քանակները և բեռնվածքը**

№	Սարքավորումը/տեխնիկան	Տեսակը/մակնիշը	Միջին բեռնվածքը, ժամ/օր	Տևողությունը, օր	Ընդհանուր բեռնվածքը, ժամ
1	Բետոնախառնիչներ (2 հատ)*	Լ-570A	5×2	100	1000
2	Ավտոինքնաթափ, բեռնունակությունը 10տ	ԿամԱ3-5511	6	160	960
3	Ավտոինքնաթափ, բեռնունակությունը 20տ	ԿամԱ3-6520	6	130	780
4	Փերմատար	-	5.5	20	110
5	Ավտոամբարձիչ, բեռնամբարձությունը 16տ	ԿԿ-2571	5	160	800
6	Ավտոամբարձիչ, բեռնամբարձությունը 25տ	ԿԿ-2577	4.5	130	585

\*բետոնի խառնուրդը պատրաստվելու է Քաջարան քաղաքի բետոնահանգույցում և բետոնախառնիչով մատակարարվելու է դեպի շին.հրապարակ

Բետոնային աշխատանքների ընթացքում շին.հրապարակ բերվող B7.5, B10, B12.5, B15, B20, B22.5 և B25 մակնիշի բետոնային խառնուրդների, մետաղական կոնստրուկցիաների, տանիքի, պատշարման, դռների, և պատուհանների և այլ նյութերի ծավալները հաշվարկված են **Հավելված 28**-ում: Քաջարան քաղաքից մինչև շին.հրապարակ մեկ երթուղու երկարությունը 5.5 կմ է:

**Մոնտաժման աշխատանքներ**

Հիմնականում աշխատանքները իրականացվում են մեխանիզացված, իսկ այն տեղերում, որտեղ անհնար է տեխնիկայի աշխատանքը՝ ձեռքով: Հիմնական կոնստրուկցիաները, խողովակները, մալուխները և այլ հանգույցներ տեղափոխվում են Քաջարան քաղաքից դեպի շինհրապարակ ավտոինքնաթափերով: Մոնտաժման աշխատանքների ժամանակ կիրառվում են նաև ավտոամբարձիչներ:

Ընդհանուր առմամբ, մոնտաժման, ներառյալ էլեկտրա-, ջերմա-, ջրամատակարարման, հրդեհաշիջման, օդափոխման, հողանցման, արտաքին լուսավորության անցկացման, շինությունների ներքին հարդարման և այլ աշխատանքների ընդհանուր տևողությունը ըստ նախնական հաշվարկների կկազմի մոտ 330 օր: Մոնտաժման աշխատանքների ընթացքում կիրառվող սարքավորումների և շին.տեխնիկայի տեսակները, քանակները և բեռնվածքը բերված է **Աղյուսակ 8.6**-ում:

**Աղյուսակ 8.6. Կիրառվող սարքավորումների և շին.տեխնիկայի տեսակները, քանակները և բեռնվածքը**

№	Սարքավորումը/տեխնիկան	Տեսակը/մակնիշը	Միջին բեռնվածքը, ժամ/օր	Տևողությունը, օր	Ընդհանուր բեռնվածքը, ժամ
1	Ավտոինքնաթափ, բեռնունակությունը 10տ	ԿամԱ3-5511	6	180	1080
2	Ավտոինքնաթափ, բեռնունակությունը 20տ	ԿամԱ3-6520	6	150	900

№	Սարքավորումը/տեխնիկան	Տեսակը/մակնիշը	Միջին բեռնվածքը, ժամ/օր	Տևողությունը, օր	Ընդհանուր բեռնվածքը, ժամ
3	Ավտոամբարձիչ, բեռնամբարձությունը 16տ	KC-2571	5	80	400
4	Ավտոամբարձիչ, բեռնամբարձությունը 25տ	KC-2577	4.5	50	225

Մոնտաժման աշխատանքների ընթացքում շին.հրապարակ բերվող տարաբնույթ նյութերի, հանգույցների և կոնստրուկցիաների ծավալները հաշվարկված են **Հավելված 28**-ում: Քաջարան քաղաքից մինչև շին.հրապարակ մեկ երթուղու երկարությունը 5.5 կմ է:

#### 8.4.3 "Թիվ 1, 2 և 4 դյուկերների հակավթարային և սպասարկման ավազանների տեղակայում" բաղադրիչի վերաբերյալ ելակետային տվյալները

Թիվ 1, 2 և 4 դյուկերների հակավթարային և սպասարկման ավազանների տեղակայման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը իրականացվում է կառուցման և շահագործման կենսափուլերի համար: Կառուցման փուլում հիմնականում կատարվելու են՝

- Հողային աշխատանքներ,
- Բետոնային և մոնտաժման աշխատանքներ (հակավթարային և սպասարկման ավազաներ, ջրընդունիչ հոր և հարթակ, երկաթբետոնյա վաքեր, դրենաժային համակարգ):

Դյուկերների հակավթարային և սպասարկման ավազանները նախատեսվում է կառուցել մեկ հերթափոխով (8 ժամ) մասնագիտացված բրիգադներով: Աշխատանքներին ներգրավվելու են մոտ 56 աշխատողներ, այդ թվում՝

- Բանվորներ՝ 45 աշխատող,
- Ինժեներատեխնիկական անձնակազմ՝ 6 աշխատող,
- Ծառայողական կազմ՝ 2 աշխատող,
- Սպասարկող և պահակային կազմ՝ 3 աշխատող:

Կառուցման փուլի տևողությունը մոտ 2 տարի է, ընդ որում դյուկեր 1-ի ավազանների տեղակայումը կպահանջի 10 ամիս, դյուկեր 2-ինը՝ 6 ամիս, դյուկեր 4-ինը՝ 8 ամիս: Ավազանների տեղակայման աշխատանքները իրականացվելու են հաջորդաբար: Բացվածքը ներկայացված է **Հավելված 27**-ում:

Դյուկերների ավազանների կառուցման ընթացքում օգտագործվող հիմնական սարքավորումները և տեխնիկան ներկայացված են ստորև՝

- Էքսկավատոր, շերտի տարողությունը 0.65մ<sup>3</sup>,
- Բուլդոզեր, հզորությունը 96կՎտ,
- Ավտոինքնաթափեր, բեռնունակությունը 20տ,
- Ավտոամբարձիչ, բեռնամբարձությունը 16տ,
- Բետոնախառնիչ:

#### Հողային և այլ փոշեզոյացնող աշխատանքներ

Բոլոր 3 դյուկերների ավազանների տեղակայումը իրականացվում է հաջորդաբար: Ավազանների կառուցման համար գրունտը մշակվում է էքսկավատորով, ապա տեղափոխվում ավտոինքնաթափով դեպի թափոնավայր 1 կմ հեռավորության վրա: Հողային աշխատանքների ընդհանուր

տևողությունը մոտ 360 օր է (դյուկեր 1՝ 150 օր, դյուկեր 2՝ 90 օր և դյուկեր 4՝ 120 օր), սակայն առանձին սարքավորումների և շին.տեխնիկայի շահագործման տևողությունը և միջին օրական բեռնվածքը տարբեր է: Հողային աշխատանքների ընթացքում կիրառվող սարքավորումների և շին.տեխնիկայի տեսակները, քանակները և բեռնվածքը բերված են **Աղյուսակ 8.7**-ում:

**Աղյուսակ 8.7. Կիրառվող սարքավորումների և շին.տեխնիկայի տեսակները, քանակները և բեռնվածքը**

№	Սարքավորումը/տեխնիկան	Տեսակը/ մակնիշը	Միջին բեռնվածքը, ժամ/օր	Տևողու- թյունը, օր	Ընդհանուր բեռնվածքը, ժամ
<b>Թիվ 1 դյուկերի հակավթարային և սպասարկման ավազանների հողային աշխատանքներ</b>					
1	Բուլդոզեր, հզորությունը 96կՎտ	170M	5	60	300
2	Էքսկավատոր, շերտի տարողությունը 0.65մ <sup>3</sup>	ՅՕ-4224	6.5	120	780
3	Ավտոինքնաթափ, բեռնունակությունը 10տ	KamA3-5511	7	150	1050
<b>Թիվ 2 դյուկերի հակավթարային և սպասարկման ավազանների հողային աշխատանքներ</b>					
1	Բուլդոզեր, հզորությունը 96կՎտ	170M	5	50	250
2	Էքսկավատոր, շերտի տարողությունը 0.65մ <sup>3</sup>	ՅՕ-4224	6.5	70	455
3	Ավտոինքնաթափ, բեռնունակությունը 10տ	KamA3-5511	7	90	630
<b>Թիվ 4 դյուկերի հակավթարային և սպասարկման ավազանների հողային աշխատանքներ</b>					
1	Բուլդոզեր, հզորությունը 96կՎտ	170M	5	75	375
2	Էքսկավատոր, շերտի տարողությունը 0.65մ <sup>3</sup>	ՅՕ-4224	6.5	100	650
3	Ավտոինքնաթափ, բեռնունակությունը 10տ	KamA3-5511	7	120	840

Հողային և այլ փոշեգոյացնող աշխատանքների ծավալները հաշվարկված են **Հավելված 28**-ում: Քաջարան քաղաքից մինչև ավազանների տեղակայման շին.հրապարակներ հեռավորությունը կազմում է՝

- Մինչև դյուկեր թիվ 1՝ 8 կմ,
- Մինչև դյուկեր թիվ 2՝ 12 կմ,
- Մինչև դյուկեր թիվ 4՝ 32 կմ (հեռավորությունը Կապան քաղաքից՝ 8 կմ):

**Բետոնային աշխատանքներ**

Ջրընդունիչ հորերի և հարթակների, սպասարկման ավազանների, հիմքերի, հենարանների, դատարկման հանգույցների և այլ կառույցների կառուցման համար օգտագործվելու են տարբեր մակնիշների բետոնե խառնուրդներ, մետաղական ամրաններ, խողովակներ և այլ կոնստրուկցիաներ: Բետոնը բերվելու է բետոնախառնիչով և մատուցվում է բետոնապոմպով, ընդ որում, դյուկեր 1-ի և դյուկեր 2-ի ավազանների կառուցման համար բետոնը բերվելու է Քաջարան քաղաքից, իսկ դյուկեր 4-ի համար՝ Կապան քաղաքից:

Կիրառվող սարքավորումներն են՝ բետոնախառնիչները, ավտոինքնաթափերը և ավտոամբարձիչը:

Բետոնային աշխատանքների ընթացքում կիրառվող սարքավորումների և շին.տեխնիկայի տեսակները, քանակները և բեռնվածքը բերված է **Աղյուսակ 8.8**-ում:

**Աղյուսակ 8.8. Կիրառվող սարքավորումների և շին.տեխնիկայի տեսակները, քանակները և բեռնվածքը**

№	Սարքավորումը/տեխնիկան	Տեսակը/մակնիշը	Միջին բեռնվածքը, ժամ/օր	Տևողությունը, օր	Ընդհանուր բեռնվածքը, ժամ
<b>Թիվ 1 դյուկերի հակավթարային և սպասարկման ավազանների հողային աշխատանքներ</b>					
1	Բետոնախառնիչներ (2 հատ)*	Լ-570A	5×2	60	600
2	Ավտոինքնաթափեր (3 հատ), բեռնունակությունը 20տ	ԿամԱ3-6520	6×3	25	450
5	Ավտոամբարձիչ, բեռնամբարձությունը 16տ	ԿԿ-2571	5	24	120
<b>Թիվ 2 դյուկերի հակավթարային և սպասարկման ավազանների հողային աշխատանքներ</b>					
1	Բետոնախառնիչներ (2 հատ)*	Լ-570A	5×2	80	800
2	Ավտոինքնաթափեր (2 հատ), բեռնունակությունը 20տ	ԿամԱ3-6520	6×2	20	240
5	Ավտոամբարձիչ, բեռնամբարձությունը 16տ	ԿԿ-2571	5	20	100
<b>Թիվ 4 դյուկերի հակավթարային և սպասարկման ավազանների հողային աշխատանքներ</b>					
1	Բետոնախառնիչներ (2 հատ)*	Լ-570A	5×2	70	700
2	Ավտոինքնաթափեր (2 հատ), բեռնունակությունը 20տ	ԿամԱ3-6520	6×2	22	264
5	Ավտոամբարձիչ, բեռնամբարձությունը 16տ	ԿԿ-2571	5	22	110

\*բետոնի խառնուրդը պատրաստվելու է Քաջարան քաղաքի բետոնահանգույցում և բետոնախառնիչով մատակարարվելու է դեպի շին.հրապարակ

Բետոնային և մոնտաժման աշխատանքների ընթացքում օգտագործվող նյութերի ծավալները հաշվարկված են **Հավելված 28**-ում:

**Ճահագործման փուլ**

**8.4.4 Ճահագործման փուլի հիմնական արտանետումների հաշվարկման համար ելակետային տվյալները**

Ճահագործման փուլում նախատեսվող գործունեության հիմնական արտանետումներն են՝

- Նոր դիզելային ավտոհավաքակայանի կաթսայատնից՝ NOx, CO, փոշի,
- Նոր դիզելային ավտոհավաքակայանի կաթսայատանը կից հեղուկ վառելիքի ստորգետնյա ռեզերվուարների տեղամասից՝ յուղի գոլորշիներ,
- Տրանսպորտային միջոցների և հանքային տեխնիկայի շահագործումից փոշու (ԿՄ2.5<sup>10</sup>) և գազային արտանետումներ:

**Կաթսայատան աշխատանքային ռեժիմը**

Նոր դիզելային ավտոհավաքակայանի ջերմության ծախսն է՝

- Ջեռուցման և օդափոխության համար  $Q_{\text{Ջեռ.}} = 6355$  կՎտ,
- Տաք ջրամատակարարման համար  $Q_{\text{Տ.ջ.}} = 325$  կՎտ:

<sup>10</sup>Տրանսպորտային միջոցներից ԿՄ10-ի արտանետումները չնչին են և անտեսվում են հաշվարկներում

Կաթսայատանը տեղադրվելու են հեղուկ վառելիքով՝ բանեցված յուղերով աշխատող երկու «CRONE» CLW 170 տեսակի եվրոպական արտադրության ջրատաքացուցիչ կաթսաներ՝ յուրաքանչյուրը 6000կՎտ ջերմաարտադրողականությամբ: Կաթսաներից մեկը հիմնական է, մյուսը՝ պահուստային:

Կաթսայատան աշխատանքային ռեժիմը հետևյալն է՝

- 1) Ջեռուցման ժամանակաշրջանի տևողությունն ընդունվել է 201 օր ըստ [11] շինարարական նորմերի (*քանի որ Քաջարանի համար ջեռուցման ժամանակաշրջան սահմանված չէ, վերցվել են Քաջարանին մոտ բարձրություն ունեցող բնակավայրի՝ Ջաջուռի տվյալները*),
- 2) Ջեռուցման ժամանակաշրջանում կաթսայատունը աշխատելու է դրվածքային հզորությամբ աշխատանքային ժամերին (12 ժամ) և դրվածքային հզորության 1/2-ով ոչ աշխատանքային ժամերին (12 ժամ): Դրվածքային հզորությամբ աշխատելու դեպքում կաթսայատան հեղուկ վառելիքի ծախսը կկազմի մոտ 0.5տ/ժամ, իսկ ոչ աշխատանքային ժամերին՝ 0.25տ/ժամ:
- 3) Տարվա տաք ժամանակաշրջանում կաթսայատունը աշխատելու է միայն տաք ջրամատակարարման նպատակով, իսկ հեղուկ վառելիքի ծախսը կկազմի 0.025 տ/ժամ:

#### **Հեղուկ վառելիքի ստորգետնյա ռեզերվուարների տեղամասը**

Տեղամասը իրենից ներկայացնելու է հոր, որտեղ տեղադրվելու են հեղուկ վառելիքի պահման երկու 50տ տարողությամբ և օգտագործված յուղի պահեստավորման համար մեկ 25տ տարողությամբ ստորգետնյա մետաղական ռեզերվուարներ:

### **8.5 Մթնոլորտային արտանետումների հաշվարկման մեթոդաբանությունը**

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում մթնոլորտի հիմնական աղտոտիչներն են.

- Շինարարական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների շահագործման ընթացքում առաջացող գազանման արտանետումները (վառելիքի այրման արդյունքում),
- Հողային/փորման աշխատանքների և գրունտի տեղափոխման ընթացքում, ինչպես նաև շահագործվող տեխնիկայի շարժից առաջացող փոշին:
- Շինարարական տեխնիկան և տրանսպորտային միջոցները, որոնք պլանավորվում է օգտագործել գործունեության իրականացման ժամանակ, հանդիսանում են չկազմակերպված արտանետումների հիմնական աղբյուրները:

#### **8.5.1 Փոշու արտանետումների հաշվարկի մեթոդակարգը**

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում հողային աշխատանքներից և գրունտի տեղափոխման օպերացիաներից փոշու արտանետումները որոշվում են ըստ [12] մեթոդակարգի՝ հետևյալ բանաձևով.

$$Q_{\Phi} = K_1 \cdot K_2 \cdot K_3 \cdot K_4 \cdot K_5 \cdot K_7 \cdot K_8 \cdot B \cdot G_{\text{m}} \quad (1)$$

<sup>11</sup> ՀՀԾՆ IV-12.02.01-04 «Ջեռուցում, օդափոխում և օդի լավորակում» շինարարական նորմերը հաստատելու մասին ՀՀ քաղաքաշինության նախարարի №83-Ն հրաման առ 04.08.2004թ.

<sup>12</sup> Методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов. ЗАО "НИПИОТСТРОМ", Новороссийск 2000г.



Որտեղ՝

$Q_{\Phi}$  - արտանետվող անօրգանական փոշու քանակությունն է փուլի/միջոցառման ժամանակահատվածի կտրվածքով, տ,

$K_1$  - փոշու ֆրակցիայի բաժնեմասն է,

$K_2$  - 0÷50 մկմ չափերով մասնիկների բաժնեմասն է տարածվող փոշու աերոզոլում,

$K_3$  - տեղանքի օդերևութաբանական պայմանները հաշվի առնող գործակիցն է,

$K_4$  - տեղանքի պայմանները հաշվի առնող գործակիցն է,

$K_5$  - նյութի խոնավությունը հաշվի առնող գործակիցն է,

$K_7$  - նյութի խոշորությունը հաշվի առնող գործակիցն է,

$K_8$  - տարբեր նյութերի համար ճշգրտող գործակիցն է կախված գրեյֆերի տեսակից, փոխաբեռնման այլ սարքավորանքի օգտագործման դեպքում  $K_8 = 1$ ,

$B$  - նյութի բեռնաթափման բարձրությունը հաշվի առնող գործակիցն է,

$G_{տ}$  - վերամշակվող նյութերի քանակությունն է կառուցման ժամանակահատվածի կտրվածքով, տոննա:

### 8.5.2 Տրանսպորտային միջոցների և տեխնիկայի վառելիքի ծախսի որոշման մեթոդակարգը

Նախատեսվող գործունեության ընթացքում կիրառվող տրանսպորտային միջոցների և շինարարական տեխնիկայի գազանման արտանետումների հաշվարկման համար անհրաժեշտ է որոշել դրանց վառելիքի ծախսը, ինչը հաշվարկվում է ըստ [13] և [14] ընթացակարգերի՝ հետևյալ բանաձևով.

$$M_H = (0,01 \cdot H_{SC} \cdot S + H_T \cdot T) \cdot (1 + 0,01 \cdot D), \text{ Լ կամ} \quad (2)$$

$$M_H = (0,01 \cdot H_{SC} \cdot S + H_T \cdot T) \cdot (1 + 0,01 \cdot D) \cdot 0,86, \text{ կգ} \quad (3)$$

Որտեղ՝

$M_H$  - վառելիքի ծախսն է, Լ կամ կգ,

$H_{SC}$  - վազքի վառելիքի ծախսի նորման է, Լ/100 կմ,

$S$  - տրանսպորտային միջոցի ընդհանուր վազքն է նախատեսվող գործունեության կամ միջոցառման ընթացքում, կմ,

$T$  - տրանսպորտային միջոցով կամ շինարարական տեխնիկայով իրականացվող տեխնոլոգիական օպերացիայի կամ միջոցառման վրա ծախսվող աշխատաժամանակն է, ժամ,

$H_T$  - տրանսպորտային միջոցի կամ տեխնիկայի կողմից իրականացվող տեխնոլոգիական օպերացիայի կամ միջոցառման (օրինակ, ավտոկռունկով բեռի բարձրացում, էքսկավատորով փորում և այլն) վրա վառելիքի ծախսի նորման է, Լ/ժամ,

$D$  - նորմայի գումարային հարաբերական ավելացումն է՝ %-ով (կիրառվում է տարվա ցուրտ ժամանակաշրջանում, ինչպես նաև լեռնային տեղանքում աշխատելիս):

<sup>13</sup>Нормы расхода топлив и смазочных материалов на автомобильном транспорте, Москва 2018

<sup>14</sup>Нормы расхода жидкого топлива для машин, эксплуатирующихся в предприятиях уборки городских территорий, санитарной очистки и ремонтно-строительном производстве, Москва 1999.

**8.5.3 Տրանսպորտային միջոցների և շինարարական տեխնիկայի գազանման արտանետումների հաշվարկի մեթոդակարգը**

Տրանսպորտային միջոցները և շինարարական տեխնիկան աշխատում են դիզելային վառելիքով, որի այրումից արտանետումները հաշվարկվում են ՀՀ Բնապահպանության նախարարության կողմից մշակված Ավտոտրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակների որոշման մեթոդական հրահանգի<sup>15</sup> հիման վրա: Վառելիքի այրումից արտանետվող վնասակար նյութերն են՝ NOx, CxHy, CO, N2O, ՑՕՄ, ՊՄ, SO2 և CO2:

Ցուրաքանչյուր վնասակար նյութի (բացառությամբ SO2-ի) արտանետումը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$Q_g = \frac{N \cdot k_1 \cdot k_2 \cdot M_H}{10^6}, \text{ տ} \tag{4}$$

Որտեղ՝

Q<sub>g</sub> - շահագործվող տրանսպորտային միջոցի կամ շինարարական տեխնիկայի գազանման արտանետումներում վնասակար նյութերի (բացառությամբ SO2-ի) քանակությունն է տեխնոլոգիական օպերացիայի/միջոցառման ժամանակահատվածի կտրվածքով,

N - ըստ նշված մեթոդակարգի ծանր ավտոտրանսպորտի և շին. տեխնիկայի տեսակարար արտանետման մեծությունն է, որը տարբեր վնասակար նյութերի համար բերված է **Աղյուսակ 8.9**-ում:

**Աղյուսակ 8.9. Տեսակարար արտանետումներ (գ/կգ վառելիք)**

Վառելիքի տեսակը	Նյութի անվանումը						
	CO	C <sub>x</sub> H <sub>y</sub>	NO <sub>x</sub>	ՊՄ	N <sub>2</sub> O	ՑՕՄ	CO <sub>2</sub>
Դիզելային վառելիք	36.4	0.243	42.3	4.3	0.122	8.16	3138

k1-ը և k2-ը վնասակար նյութերի արտանետումների ճշգրտման գործակիցներն են կախված տրանսպորտային պարկի միջին տարիքից և տեխնիկական վիճակից: Դրանց արժեքները բերված են **Աղյուսակ 8.10**-ում:

**Աղյուսակ 8.10. Վնասակար նյութերի արտանետումների ճշգրտման գործակիցները**

Ավտոմեքենայի կատեգորիան	Վնասակար նյութը	Ազդեցության գործակիցը	
		միջոցի միջին տարիքի (k1)	տեխնիկական վիճակի (k2)
Մեծ բեռնունակության ավտոտրանսպորտ և շին. տեխնիկա	CO	1.33	1.8
	C <sub>x</sub> H <sub>y</sub>	1.2	2.0
	NO <sub>x</sub>	1.0	1.0
	ՊՄ	1.0	1.0
	N <sub>2</sub> O	1.0	1.0
	ՑՕՄ	1.0	1.0
	CO <sub>2</sub>	1.0	1.0

Ածխածնի օքսիդի (CO), ածխաջրածինների (C<sub>x</sub>H<sub>y</sub>) և ազոտի օքսիդների (NO<sub>x</sub>) գործակիցները վերցված են Ավտոմոբիլային տրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի հաշվարկման մեթոդական ցուցումներից (Մոսկվա, Հիդրոմետհրատ - 1983), իսկ ածխածնի

<sup>15</sup>Մեթոդիկայում ընդունված է տրանսպորտային միջոցների դասակարգումը "Core Inventory of Emissions in Europe" (այսուհետ՝ CORINAIR)՝ "Եվրոպայում մթնոլորտային արտանետումների բազային գույքագրում" մեթոդոլոգիային համապատասխան

երկօքսիդի (CO<sub>2</sub>) և ազոտի ենթօքսիդի (N<sub>2</sub>O) գործակիցները ընդունվել են 1, քանի որ դրանց համար գործակիցներ սահմանված չեն:

Ծծմբային անհիդրիդի (SO<sub>2</sub>) արտանետումները հաշվարկվում են ելնելով այն մոտեցումից, որ վառելիքում պարունակվող ամբողջ ծծումբը լիովին վերածվում է SO<sub>2</sub>-ի: Այդ դեպքում կիրառվում է EMEP/EEA մթնոլորտային արտանետումների գույքագրման ուղեցույցի<sup>16</sup> SO<sub>2</sub>-ի հաշվարկման հետևյալ բանաձևը.

$$ESO_2 = 2 \cdot \sum k_S \cdot M_H, \text{ կգ} \quad (5)$$

Որտեղ՝

k<sub>S</sub> - վառելիքում ծծմբի պարունակություն, կգ/կգ, հավասար 0.002,

M<sub>H</sub> - վառելիքի ծախս, կգ:

#### 8.5.4 Դիզելային ավտոհավաքակայանի կաթսայատնից մթնոլորտային արտանետումների հաշվարկի մեթոդակարգը

Դիզելային ավտոհավաքակայանի կաթսայատնից մթնոլորտային արտանետումները հաշվարկվում են EMEP/EEA մթնոլորտային արտանետումների գույքագրման ուղեցույցով **Բաժին 8.4.4**-ում նկարագրված կաթսաների տեսակների համար առաջարկվող հետևյալ բանաձևով՝

$$E_{\text{գ.ա.}} = \frac{AR_{\text{գ.տ.}} \times EF_{\text{գ.}}}{10^6}, \text{ տ/տարի} \quad (6)$$

Որտեղ՝

№	Նախատեսվող գործունեության բաղադրիչը	Խճ.	
		ընդհանուր, մ <sup>3</sup>	մ <sup>3</sup> /օր
1	Դիզելային ավտոհավաքակայան	900	3.0
2	Պայթուցիկ նյութերի պահեստ	795	3.0

№	Նախատեսվող գործունեության բաղադրիչը	H <sub>Ը</sub> .	
		ընդհանուր, մ <sup>3</sup>	մ <sup>3</sup> /օր
3	Դյուկեր 1	270	0.045
4	Դյուկեր 2	162	0.027
5	Դյուկեր 4	216	0.036
<b>Ընդամենը</b>		<b>2343</b>	<b>-</b>

Ջրցանման համար օգտագործվելու է տեխնիկական ջուր, որը մատակարարվելու է ՉՊՄԿ-ից հատուկ ջրցանման մեքենայով:

### 8.10.2 Աշխատողների կոմունալ-տնտեսական ջրապահանջի հաշվարկը

Կապալառու կազմակերպության աշխատողների կոմունալ-տնտեսական ջրապահանջի հաշվարկման արդյունքները ամփոփված են **Աղյուսակ 8.24**-ում:

#### Աղյուսակ 8.24. Աշխատողների կոմունալ-տնտեսական ջրապահանջի հաշվարկման արդյունքները

№	Բաղադրիչը	ԻՏԱ, ծառայողների և պահակների միջին թվաքանակը	Բանվորների միջին թվաքանակը	W <sub>u.s.</sub>	
				ընդհանուր, մ <sup>3</sup>	մ <sup>3</sup> /օր
1	Դիզելային ավտոհավաքակայան	14	59	1699	1.699
2	Պայթուցիկ նյութերի պահեստ	12	56	1393	1.592
3	Դյուկերեր	11	45	650.5	1.301
<b>Ընդամենը</b>				<b>3742.5</b>	<b>4.592</b>

### 8.10.3 Կառուցման փուլի ընդհանուր ջրապահանջը

Կառուցման փուլում բոլոր երեք բաղադրիչները ընդհանուր ջրապահանջը հաշվարկվում է  $M = W_{u.s.} + H_{Ը}$  բանաձևով և ամփոփված է **Աղյուսակ 8.25**-ում:

#### Աղյուսակ 8.25. Կառուցման փուլի ընդհանուր ջրապահանջը

№	Բաղադրիչը	W <sub>u.s.</sub> , մ <sup>3</sup>	H <sub>Ը</sub> , մ <sup>3</sup>	M, մ <sup>3</sup>
1	Դիզելային ավտոհավաքակայան	1699	900	2599
2	Պայթուցիկ նյութերի պահեստ	1393	795	2188
3	Դյուկերեր	650.5	648	1298.5
<b>Ընդամենը</b>				<b>6085.5</b>

### 8.10.4 Կառուցման փուլի կեղտաջրերի հաշվարկը

Շինարարական հարթակների ջրցանը դասվում է անվերադարձ ջրօգտագործման շարքին:

Կեղտաջրեր առաջանում են միայն շինարարական ճամբարում խմելու և կոմունալ տնտեսական ջրօգտագործման արդյունքում: Կորուստը կազմում է 1.5%, իսկ առաջացող տնտեսակենցաղային կեղտաջրերի հաշվարկը ամփոփված է **Աղյուսակ 8.26**:

**Աղյուսակ 8.26. Կառուցման փուլում առաջացող տնտեսակենցաղային կեղտաջրերը**

№	Բաղադրիչը	W <sub>գ.Տ.</sub> , մ <sup>3</sup>	Կորուստ, %	Կեղտաջրերի քանակը, մ <sup>3</sup>
1	Դիզելային ավտոհավաքակայան	1699	15	1673.5
2	Պայթուցիկ նյութերի պահեստ	1393	15	1372.1
3	Դյուկերեր	650.5	15	640.7
<b>Ընդամենը</b>				<b>3686.3</b>

**8.11 Շահագործման փուլում ջրօգտագործումը և ջրահեռացումը**

Դիզելային ավտոհավաքակայանի ջրապահանջը, ներառյալ տրանսպորտային միջոցների լվացման համար պահանջվող ջրի ծախսը հաշվարկվել է աշխատանքային նախագծում՝ ՄՆԻՊ 2.04.02-84-ի<sup>19</sup> համաձայն և կազմում է 28մ<sup>3</sup>/օր կամ 10220 մ<sup>3</sup>/տարի: Պայթուցիկների պահեստի վարչակենցաղային մասնաշենքում ջրի պահանջարկը կկազմի 8մ<sup>3</sup>/օր կամ 2920 մ<sup>3</sup>/տարի:

Դիզելային ավտոհավաքակայանի ջրի գումարային հաշվարկային ելքը, ներառյալ արտադրական և վարչական շենքերը, կազմում է 15.0մ<sup>3</sup>: Նախագծով նախատեսվում է տեղադրել Q=15.0մ<sup>3</sup>/օր արտադրողականությամբ կենցաղային կեղտաջրի մաքրման ТОПА3-100 կոմպակտ կայան, որտեղ կատարվելու է եռաստիճան մաքրում (**Հավելված 1, կառույց 10**): Լրիվ կենսաբանական մաքրումից հետո մաքրված ջրերը հեռացվելու են դեպի գետ կամ օգտագործվելու են ոռոգման նպատակով:

Նոր պայթուցիկների պահեստի համար նախագծով նախատեսվում է Q=7.0մ<sup>3</sup>/օր արտադրողականությամբ կենցաղային կեղտաջրի մաքրման կոմպակտ կայան՝ ТОПА3-40 տիպի, որտեղ կատարվելու է եռաստիճան մաքրում և լրիվ կենսաբանական մաքրումից հետո մաքրված ջրերը հավաքվելու և օգտագործվելու են կամ ոռոգման կամ այլ նպատակներով: ТОПА3 տեսակի կայաններից առաջ նախատեսվում է իրականացնել ճաղավանդակի հորեր՝ առավել խոշոր մասնիկների բռնման համար: Մաքրված կեղտաջրերի բնութագրեր են՝ ԹԿՊ<sub>20</sub> 10-20մգ/լ սահմաններում, ԹԶՊ 70-100մգ/լ սահմաններում, N և NH<sub>4</sub><sup>+</sup> իոնների պարունակությունը 15-20մգ/լ:

Մեքենաների լվացման կայանում կիրառվելու է ջրի շրջապտույտ համակարգ: Լվացման կեղտաջրերը հեռացվելու են դեպի YKO-5 մակնիշի մաքրման կայանի մոտ գտնվող 13մ<sup>3</sup> ծավալով մերձափոս, որտեղից խորքային պոմպով մղվելու են մաքրման կառույցներ (**Հավելված 1, կառույց 8**): Մաքրված ջուրը ինքնահոս հետ է վերադառնալու դեպի կարչերների սարք: Մաքրումից հետո շրջապտույտի մեջ գտնվող ջրերում նավթամթերքների պարունակությունը կլինի 0.5մգ/լ, իսկ կախված մասնիկների քանակը՝ 20մգ/լ:

Մասնաշենքերի տանիքներից, տարածքի ցածրադիր մասերում և ճանապարհներին տեղադրված անձրևընդունիչ հորերից, ինչպես նաև հատակների լվացումից առաջացած մակերևութային յուղերով և բեռնիցով աղտոտված ջրերը հեռացվելու են անձրևատար կոյուղու ներտարածքային ցանցով դեպի տարածքի ցածրադիր մասում նախատեսված մաքրման կառույցներ (**Հավելված 1, կառույց 11**): Համակարգը ընդգրկվելու է անձրևընդունիչներ, ներտարածքային ցանցը՝ իր դիտահորերով և GSOL - 10/50 ու 1 հաստ՝ GSOL - 5/20 տիպի հեղեղային կոյուղու մաքրման կոմպակտ կայաններ, որոնց աշխատանքային սկզբունքը հետևյալն է՝ ջուրը բաշխիչ հորից մուտք է գործելու

<sup>19</sup>ՄՆԻՊ 2.04.02-84 "Ջրամատակարարում: Արտաքին ցանցեր և կառույցներ"

կայանի պարզարան հանդիսացող բաժանմունք, որտեղ տեղի է ունենում ծանր մասնիկների նստեցում, այնուհետև ջուրն ուղղորդվելու է դեպի կլանիչ գոտի, որտեղ կատարվում է վերջնական մաքրումը: Մաքրման կայանը նավթամթերքի պարունակությունը հեռացվող ջրերում հասցնում է մինչև 0.5 մգ/լ խտության:

## 8.12 Ազդեցությունը ջրային ռեսուրսների վրա

### 8.12.1 Կառուցման փուլ

Նախատեսվող գործունեության բաղադրիչների թե կառուցման, և թե շահագործման փուլերում հիմնական ազդեցությունները ջրային ռեսուրսների վրա արտահայտվելու են ջրօգտագործման և կեղտաջրերով ջրային ռեսուրսների աղտոտման տեսքով:

Ինչպես նշված է սույն ՇՄԱԳ հաշվետվության **Բաժին 8.10**-ում, բոլոր 3 բաղադրիչների կառուցման ընթացքում կպահանջվի 6085.5 մ<sup>3</sup> ջուր, որից 2343 մ<sup>3</sup> տեխնիկական, իսկ 3742.5 մ<sup>3</sup> խմելու տնտեսական որակի: Թե տեխնիկական և թե խմելու տնտեսական որակի ջուրը մատակարարվելու է շին. հրապարակներ և շինարարական ճամբար ՉՊՄԿ-ից: Հաշվի առնելով Կոմբինատի ջրօգտագործման և ջրահեռացման հաստատված նորմաները, կառուցման փուլում օգտագործվող ջրի 6085.5 մ<sup>3</sup> ծավալը էական ազդեցություն չի թողնի ջրային ռեսուրսների և առհասարակ ջրասպառման վրա:

Համաձայն կատարված հաշվարկների (տես **Աղյուսակ 8.26**-ը), կառուցման փուլում կառաջանան 3686.3 մ<sup>3</sup> ծավալով կեղտաջրեր: Շինարարական ճամբարում առաջացող տնտեսակենցաղային կեղտաջրերը կուտակվելու են սեպտիկ հորում և ըստ անհրաժեշտության հեռացվելու են համայնքային կոմունալ ծառայության կողմից: Առաջացող կեղտաջրերից ջրային ռեսուրսների վրա ազդեցություն չի կանխատեսվում:

### 8.12.2 Շահագործման փուլ

Շահագործման փուլում, դիզելային ավտոհավաքակայանի և նոր պայթուցիկների պահեստի տնտեսակենցաղային կեղտաջրերը ենթարկվելու են մաքրման ТОПА3 տեսակի կոմպակտ մաքրման կայաններում, որոնք ապահովում են Թ-ԿՊ<sub>20</sub> 10-20մգ/լ սահմաններում, Թ-ԲՊ 70-100մգ/լ սահմաններում, N և NH<sub>4</sub><sup>+</sup> իոնների պարունակությունը 15-20մգ/լ: Մաքրված կեղտաջրերը նախատեսվում է օգտագործել հիմնականում տարածքի ոռոգման կամ գրունտային ճանապարհների ջրցանման նպատակով: Կեղտաջրերի ամալելագույն քանակը կկազմի՝

- Դիզելային ավտոհավաքակայանի համար՝ 15.0 մ<sup>3</sup>/օր,
- Նոր պայթուցիկների պահեստի համար՝ 7.0 մ<sup>3</sup>/օր:

Մեքենաների լվացման կայանում կիրառվելու է ջրի շրջապտույտ համակարգ: Մաքրումից հետո շրջապտույտի մեջ գտնվող ջրերում նավթամթերքների պարունակությունը կլինի 0.5մգ/լ, իսկ կախված մասնիկների քանակը՝ 20մգ/լ:

Մասնաշենքերի տանիքներից, տարածքի ցածրադիր մասերում և ճանապարհներին տեղադրված անձրևընդունիչ հորերից, ինչպես նաև հատակների լվացումից առաջացած մակերևութային յուղերով և բենզինով աղտոտված ջրերը մաքրվում են GSOL - 10/50 ու 1 հատ՝ GSOL - 5/20 տիպի հեղեղային կոյուղու մաքրման կոմպակտ կայաններով, որոնք ապահովում են հեռացվող ջրերում

մինչև 0.5 մգ/լ խտությամբ նավթամթերք: Այս ջրերը հիմնականում օգտագործվելու են տարածքի ոռոգման կամ ճանապարհների ջրցանման համար:

Հաշվի առնելով, որ դիզելային ավտոհավաքակայանի և պայթուցիկների պահեստի տարածքների կեղտաջրերը ենթարկվելու են մաքրման, կարելի է փաստել, որ դրանց ազդեցությունը ջրային ռեսուրսների աղտոտման տեսանկյունից գրեթե բացառվում է:

Թիվ 1, 2 և 4 դյուկերների հակավթարային և սպասարկման ավազանների տեղակայումը միտված է դյուկերներում հնարավոր վթարների դեպքում պոչանքների վթարային արտահոսքերի կուտակմանը և արդյունքում շրջակա միջավայրի, մասնավորապես հողային և ջրային ռեսուրսների աղտոտման նվազեցմանը/բացառմանը: Այս բաղադրիչը դիտարկվում է որպես բնապահպանական միջոցառում և հետևաբար դրա ազդեցությունը շրջակա միջավայրի վրա դրական է:

### 8.13 Թափոնների առաջացումը և կառավարումը

#### 8.13.1 Կառուցման փուլ

Նախատեսվող գործունեության բոլոր 3 բաղադրիչների իրագործման ժամանակ առաջացող արտադրության և սպառման թափոնները և դրանց կանխատեսվող քանակները բերված են **Աղյուսակ 8.27**-ում՝

**Աղյուսակ 8.27. Նախատեսվող գործունեության կառուցման փուլի կանխատեսվող թափոնները, դրանց ծածկագրերը և քանակները**

№	Թափոնի անվանումը ըստ Դասակարգչի <sup>20</sup>	Ծածկագիրը	Վտանգավորության դասը	Քանակը, տ
1	Կարծրացած տարասեռ պլաստմասսաների խառնուրդների թափոններ	57109900 01 00 4	IV	2.7
2	Օգտագործման համար ոչ պիտանի չաղտոտված պղնձե հաղորդալար	35310305 01 01 3	III	0.9
3	Յուղոտված լաթեր	58200600 01 01 4	IV	0.015
4	Չտեսակավորված սև մետաղներ պարունակող թափոններ (այդ թվում՝ թուջի և/կամ պողպատի փոշի)	35131100 01 00 4	IV	21.2
5	Եռակցման խարամ	31404800 01 99 4	IV	0.08
6	Շենքերի քանդումից առաջացած շինարարական աղբ	91200601 01 00 4	IV	91.0
7	Օգտագործման համար ոչ պիտանի չաղտոտված ալյումինե հաղորդալար	35310105 01 99 5	V	1.1
8	Մաքուր բնական փայտանյութից փայտե թափոններ	17112000 01 00 5	V	18.0
9	Չաղտոտված սովարաթղթե այլ թափոններ	18719902 01 00 5	V	5.0

<sup>20</sup>Համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 26.10.2006 թ.-ի "ՀՀ տարածքում գոյացող արտադրության և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին" թիվ 342-Ն հրամանի

№	Թափոնի անվանումը ըստ Դասակարգչի <sup>20</sup>	Ծածկագիրը	Վտանգավորության դասը	Քանակը, տ
10	Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերը)	91200400 01 00 4	IV	70.0

Ակնկալվում է, որ բանեցված տարատեսակ յուղերի թափոններ չեն առաջանա, քանի որ շինարարության ընթացքում օգտագործվող տրանսպորտային միջոցների և շին. տեխնիկայի տեխնիկական սպասարկումը պետք է իրականացվի կապալառու կազմակերպության կողմից մասնագիտացված սպասարկման կենտրոններում: Նույնը վերաբերվում է նաև բանեցված կապարե կուտակիչներին և անվադողերին:

Նախատեսվող գործունեության բոլոր 3 քաղաղրիչների շին. հրապարակներում կազմակերպվելու են թափոնների առանձնացված պահման/կուտակման հարթակներ, որոնցում`

- Սև և գունավոր մետաղների ջարդոնները պահվելու են առանձին կույտերով՝ ծածկված անջրթափանց թաղանթով և պարբերաբար, ապրանքային քանակներ հավաքվելու դեպքում, իրացվելու են մասնագիտացված ընկերություններին,
- Շին. աղբը հավաքվելու է առանձին տեղամասում և պարբերաբար համայնքային աղբահանող ծառայության կողմից հեռացվելու ու տեղադրվելու են քաղաքային աղբավայրում,
- Շինարարական ճամբարում տեղադրվելու են կենցաղային թափոնների մետաղական տարրոլություններ, որոնցում կուտակված աղբը պարբերաբար հեռացվելու է քաղաքային աղբավայր՝ համայնքային աղբահանող ծառայության կողմից,
- Եռակցման խարամը և յուղոտված լաթերը հավաքվելու են մետաղական տարրոլությունների մեջ և պարբերաբար 1/10 հարաբերությամբ խառնվելու են կենցաղային աղբի հետ:

Նախատեսվող գործունեության իրագործման ժամանակ առաջանում է հողային հանույթ/գրունտ՝ 119447.5 տ քանակությամբ, այդ թվում`

- 1) Դիզելային ավտոհավաքակայանի կառուցման ընթացքում՝ 7537.0 տ,
- 2) Նոր պայթուցիկների պահեստի կառուցման ընթացքում՝ 14657.3 տ,
- 3) Թիվ 1, 2 և 4 դյուկերների սպասարկման և վթարային ավազանների տեղակայման ընթացքում`
  - Թիվ 1 դյուկեր՝ 43700.9 տ,
  - Թիվ 2 դյուկեր՝ 22682.3 տ,
  - Թիվ 4 դյուկեր՝ 30870.0 տ:

Դիզելային ավտոհավաքակայանի և նոր պայթուցիկների պահեստի կառուցման գործընթացում առաջացող հողային հանույթ/գրունտը տեղադրվելու է ՉՊՄԿ-ի լցակույտարաններում, առանձնացված հարթակում և օգտագործվելու է հետագայում ռեկուլտիվացման աշխատանքների ժամանակ: Թիվ 1, 2 և 4 դյուկերների սպասարկման և վթարային ավազանների տեղակայման ընթացքում առաջացող 51309 տ հողային հանույթը՝ հակավթարային ավազանների չոր պոչերն են և տեղափոխվելու են Արծվանիկի պոչամբար: Հողային հանույթի 4308,3 տ ծավալը օգտագործվելու է դյուկերների մոտեցման և սպասարկման ճանապարհների բարեկարգման համար: Գրունտի մնացած զանգվածը օտգագործվելու է որպես հետադարձ լիցք, այդ թվում՝ 28275 տ թիվ 4 դյուկերի հակավթարային ավազանի պատվարի համար:



Ընդհանուր առմամբ, նախատեսվող գործունեության կառուցման փուլում թափոնների ազդեցությունը շրջակա միջավայրի վրա կառավարելի է, իսկ ազդեցությունը նվազագույն, պայմանով, որ պլանավորված մեղմացնող միջոցառումները (տես **Գլուխ 11**-ը) պատշաճ կերպով իրականացվելու են կապալառու կազմակերպության կողմից:

**8.13.2 Շահագործման փուլ**

Գիզելային ավտոհավաքակայանի և նոր պայթուցիկների պահեստի շահագործման փուլում առաջացող արտադրության և սպառման թափոնների ցանկը բերված է **Աղյուսակ 8.28**-ում:

**Աղյուսակ 8.28. Գիզելային ավտոհավաքակայանի և նոր պայթուցիկների պահեստի շահագործման փուլում առաջացող արտադրության և սպառման թափոնները**

№	Թափոնի անվանումը ըստ Դասակարգչի <sup>21</sup>	Ծածկագիրը	Վտանգավորության դասը
1	Բանեցված կապարե կուտակիչներ և խոտան	92110100 13 01 2	II
2	Բանեցված շարժիչների յուղերի թափոններ	54100201 02 03 3	III
3	Բանեցված դիզելային յուղեր	54100203 02 03 3	III
4	Բանեցված արդյունաբերական յուղեր	54100205 02 03 3	III
5	Բանեցված կոմպրեսորային յուղեր	54100211 02 03 3	III
6	Չտեսակավորված պղնձի ջարդոն	35310301 01 01 3	III
7	Նավթամթերքներով, քիմիական նյութերով, կենսանյութերով աղտոտված բնահողեր, որոնք ենթակա են հավաքման, վերամշակման և հեռացման/	31402411 04 03 3	III
8	Յուղերով աղտոտված ավազ /յուղի պարունակությունը - 15%-ից պակաս/	31402303 01 03 4	IV
9	Բանեցված օդաննչիչ խցիկներ	57500201 13 00 4	IV
10	Բանեցված օդաննչիչ դողեր	57500200 13 00 4	IV
11	Չտեսակավորված սև մետաղներ պարունակող թափոններ (այդ թվում թուջի և/կամ պողպատի փոշի)	35131100 01 00 4	IV
12	Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ/բացառությամբ խոշոր եզրաչափերի	91200400 01 00 4	IV
13	Յուղոտված լաթեր	58200600 01 01 4	IV
14	Մաքուր բնական փայտանյութից փայտե թափոններ	17112000 01 00 5	V
15	Իրենց սպառողական հատկությունները կորցրած չաղտոտված ռետինե իրեր	57500101 13 00 5	V
16	Օգտագործման համար ոչ պիտանի չաղտոտված այլումինե հաղորդալար	35310105 01 99 5	V

<sup>21</sup>Համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 26.10.2006 թ.-ի "ՀՀ տարածքում գոյացող արտադրության և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին" թիվ 342-Ն հրամանի

Քանի որ դիզելային ավտոհավաքակայանի և նոր պայթուցիկների պահեստի շահագործման ժամանակ թափոնագոյացնող գործընթացները նոր չեն ՉՊՄԿ-ի համար (նախատեսվող գործունեության նպատակն է փոխարինել Կոմբինատի տարածքում գործող ավտոգարաժի և պայթուցիկների պահեստը նոր, ավելի արդիական կառույցներով), ապա ակնհայտ է, որ **Աղյուսակ 8.28**-ում թվարկված թափոնները և դրանց քանակները արդեն իսկ ընդգրկված են ՉՊՄԿ-ի թափոնների գոյացման նորմատիվների և դրանց տեղադրման սահմանաքանակների նախագծում: Հետևաբար, նախատեսվող գործունեության շահագործման փուլում նշված թափոնների քանակների ավելացում չի ակնկալվում և լրացուցիչ ազդեցություն չըջակա միջավայրի վրա չի կանխատեսվում:

Բացառություն է կազմում միայն դիզելային հավաքակայանի և պայթուցիկների պահեստի մաքրման կայաններում կեղտաջրերի մաքրման արդյունքում առաջացող նստվածքը՝ ջրի մաքրումից առաջացած շլամները (ծածկագիր՝ 94101000 04 00 4)՝ մոտ 3 տ/տարի քանակությամբ, որը նախատեսվում է հատուկ տեխնիկայով պարբերաբար տեղափոխել Արծվանիկի պոլսամբար:

### 8.14 Վտանգավոր նյութերի կառավարումը

Ինչպես արդեն նշվել է, նախատեսվող գործունեության բաղադրիչների կառուցման փուլում կապալառու կազմակերպության կողմից օգտագործվող տրանսպորտային միջոցները և շին. տեխնիկան սպասարկվելու ու նորոգվելու են մասնագիտացված կենտրոններում: Տրանսպորտային միջոցները՝ ավտոինքնաթափերը և բետոնախառնիչները, լիցքավորվելու են Քաջարան քաղաքի լցակայաններում:

Շինարարական հրապարակում միայն լիցքավորվելու են բուլդոզերները, էքսկավատորները և ավտոանբարձիչները: Այդ նպատակով, շին.հրապարակում տեղադրվելու են 1մ<sup>3</sup> տարողության վառելիքի բաքեր՝ հագեցած հատուկ հակավթարային տակդիրով (տես **Նկ. 8.1-ա**): Վառելիքի բաքի կողքը տեղադրվելու են հրդեհամարման առաջնային միջոցներ, իսկ լիցքավորող բանվորը հրահանգվելու է հնարավոր բռնկումների դեպքում դրանց օջախը արագ լոկալիզացնելու և վերացնելու գործողությունների վերաբերյալ: Այլ հեղուկ նյութերի պահումը իրականացվելու են տակառների մեջ՝ տեղադրված հատուկ տակդիրի վրա (տես **Նկ. 8.1-բ**): Մնացած նյութերը և գործիքները պահվելու են պահեստային տարածքում՝ փակի տակ:

**Նկար 8.1. Վառելիքի բաքը և քիմիական նյութերի տեղադրման տակդիրը**



ա)



բ)

### 8.15 Կենդանական և բուսական աշխարհի վրա ազդեցությունը

Դիզելային ավտոհավաքակայանի և պայթուցիկ նյութերի նոր պահեստի արտադրական հրապարակները գտնվում են բացահանքի տարածքում՝ կառուցապատման իրավունքով տրամադրված տարածքում: Հրապարակը գտնվում է ակտիվ ընդերքօգտագործման գործունեության ազդեցության տակ և գրեթե գուրկ է բուսականությունից, ինչպես նաև կենդանական աշխարհի տեսակների ներկայությունից: Այդ տեսանկյունից, դիզելային ավտոհավաքակայանի և պայթուցիկ նյութերի պահեստի և հարակից տարածքների բարեկարգումը, ներառյալ կանաչ գոտիների ձևավորումը միանշանակ դրական է բնապահպանական ազդեցություն կունենա:

Թիվ 1, 2 և 4 դյուկերների սպասարկման և հակավթարային ավազանների տեղակայումը կպահանջի որոշակի տարածքներ, որոնք սակայն գտնվում են բազմամյա մարդածին ազդեցության տակ և չեն կրի էական ազդեցություն՝ կենսաբազմազանության տեսանկյունից:

Ընդհանուր առմամբ, «ՉՊՄԿ» ՓԲԸ-ի և նրա հարակից տարածքների կանսաբազմազանության ուսումնասիրության ամփոփագիրը բերված սույն Հավելված 24-ում:

### 8.16 Արտակարգ իրավիճակներին պատրաստվածությունը

Դիզելային ավտոհավաքակայանի և պայթուցիկ նյութերի նոր պահեստի կառուցման, ինչպես նաև թիվ 1, 2 և 4 դյուկերների սպասարկման և հակավթարային ավազանների տեղակայման աշխատանքների իրականացման համար ընտրված կապալառու կազմակերպությունը/ները՝ մինչ շինարարական աշխատանքների մեկնարկը, պետք է մշակի հնարավոր արտակարգ պատահարների կանխարգելման և արտակարգ իրավիճակներին պատրաստվածության պլան, որում առնվազն ներառվում են՝

- Աշխատանքների և աշխատաքային գոտիների քիմիական և ֆիզիկական ռիսկերը (ջերմային ճառագայթում, աղմուկ, թրթռում, թունավորում, շարժվող մեխանիզմներ, էլեկտրական հարված, սայթակում և այլն),
- Հնարավոր արտակարգ իրավիճակները (հրդեհ, վնասվածք, նավթամթերքի արտահոսքեր և այլն) և դրանց արագ հակազդման գործողությունները,
- Աշխատանքներին ներգրավված անձանց աշխատանքի անվտանգության ոլորտում պարտավորությունները և պատասխանատվությունը,
- Ուսուցման և հրահանգավորման թեմաները ու իրականացման պարբերությունը և ժամանակացույցը (նախնական, աշխատատեղում, կրկնվող, նպատակային),
- Անձնակազմի հատուկ և կոլեկտիվ պաշտպանության միջոցները,
- Կրակմարիչների տեղադրման վայրերը և անհրաժեշտ քանակները,
- Առաջին բուժ. օգնության սենյակները և մոտակա բժշկական հաստատությունները,
- Զինիական նյութերի հետ վարվելու ընթացակարգը,
- Ծին. տեխնիկայի և տրասնպորտային միջոցների անվտանգ տեղաշարժման ուղիները,
- Աշխատանքի պաշտպանության մշտադիտարկման մեթոդները:

Նախատեսվող գործունեության բաղադրիչների անվտանգ իրականացումը և ներգրավված անձնակազմի առողջությունը ապահովելու նպատակով կմշակվի նաև դաշտային աշխատանքների անվտանգության պլան, որտեղ ամփոփված կլինեն աշխատանքի պաշտպանության համար անհրաժեշտ անձանց և հաստատությունների կոնտակտային տվյալները, կրակմարիչների, պաշտպանության և անվտանգության այլ միջոցների տեղադրման վայրերը, հակավթարային գործողությունները և այլն:

### 8.17 Նախատեսվող գործունեության ազդեցությունը տարածաշրջանի սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա

Նախատեսվող գործունեության բաղադրիչների, այն է՝ դիզելային ավտոհավաքակայանի և պայթուցիկ նյութերի նոր պահեստի կառուցման, ինչպես նաև թիվ 1, 2 և 4 դյուկերների սպասարկման և հակավթարային ավազանների տեղակայման աշխատանքների իրականացումը ենթադրում է մեծածավալ ֆինանսական ներդրումներ, ինչը միանշանակ դրական ազդեցություն կթողնի Զաջարան և Կապան համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման վրա: Կալտիվանա առևտրի և սպասարկման, ինչպես նաև բեռնափոխադրումների ծառայությունների բնագավառը:

Աշխատանքային նախագծի համաձայն, շինարարական աշխատանքների իրականացման համար կպահանջվի 319 աշխատող: Ակնհայտ է, այդ աշխատողների մի մասը ներգրավվելու է տարածաշրջանից: Այսինքն, մոտ 3-4 տարիների կտրվածքով Զաջարան և Կապան համայնքների բնակիչների համար կստեղծվեն նոր աշխատատեղեր, ինչը դրական ազդեցություն կթողնի տարածաշրջանի սոցիալ-տնտեսական պատկերի վրա:

### 8.18 Նախատեսվող գործունեության ազդեցությունը պատմամշակութային հուշարձանների վրա

Բացահանքի տարածքում և դյուկերային անցումների տարածքներում նախատեսվող գործունեության բաղադրիչների՝ պատմամշակութային հուշարձանների վրա հնարավոր ազդեցությունը բացահայտելու նպատակով 2021 թվականին իրականացվել են համապատասխան դաշտային ուսումնասիրություն և վերլուծություններ, որի արդյունքում պարզվել է հետևյալը՝

- 1) Բացահանքի լեռնահատկացման տարածքի զարգացման արդյունքում պատմամշակութային նշանակության միավորների վրա ազդեցության ռիսկերն իսպառ բացակայում են:
- 2) Պոչատարի սպասարկման գոտու և հարակից տարածքների, դյուկերային անցումների և Արծվանիկի պոչամբարի տարածքների պարագայում, ըստ իրականացված հետազոտությունների, առկա է ազդեցություն միայն թաղման համալիրների՝ բրոնզ-երկաթիդարյան դամբարանադաշտերի (Լեռնաձորի, տեղամաս 3 և Սյունիքի-2) և միջնադարյան գերեզմանոցի (Բաղաբերդ) վրա: Նշված հուշարձանային միավորների վրա զարգացման ծրագրի ազդեցությունը մեղմելու համար անհրաժեշտ կլինի կազմակերպել ստուգողական-փրկարարական բնույթի պեղման աշխատանքներ, որոնց իրականացումից հետո, կախված արդյունքներից, կարող է կարիք լինել կազմակերպել դրանց որոշ հատվածներում սիստեմատիկ պեղումներ:

ՀՀ Սյունիքի մարզի «Չանգեզուրի Պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի ենթակառուցվածքների զարգացման և ընդլայնման արդյունքում պատմամշակութային հուշարձանների վրա հնարավոր ազդեցության գնահատական հաշվետվությունը բերված է սույն ՇՄԱԳ հաշվետվության **Հավելված 29**-ում:

## 9. Շրջակա միջավայրին հասցված տնտեսական վնասի գնահատումը

Տնտեսական վնասը դա շրջակա միջավայրին հասցված վնասի վերացման համար անհրաժեշտ միջոցառումների արժեքն է՝ արտահայտված դրամական համարժեքով: Տնտեսական վնասի հաշվարկը կատարվում է շրջակա միջավայրին հասցվող վնասը դրամային ցուցանիշներով գնահատելու համար:

Տնտեսական վնասը հաշվի է առնում՝

- բնակչության առողջության վատթարացման հետ կապված ծախսերը,
- գյուղատնտեսությանը, անտառային և ձկնային տնտեսություններին հասցված վնասը,
- արդյունաբերությանը հասցված վնասը:

### 9.1 Մթնոլորտային օդ

Տնտեսական վնասը հաշվարկվում է համաձայն գործող մեթոդակարգի [22]: Յուրաքանչյուր արտանետման աղբյուրի համար տնտեսությանը հասցված վնասը գնահատվում է հետևյալ բանաձևով՝

$$Ա = \text{Շ}_q \times \Phi_g \times \sum \text{Վ}_i \times \text{Ք}_i, \text{ դրամ}$$

Որտեղ՝

Ա - ազդեցությունն է, արտահայտված ՀՀ դրամով,

Շ<sub>q</sub> - աղտոտող աղբյուրի շրջապատի (ակտիվ աղտոտման գոտու) բնութագիրն արտահայտող գործակիցն է, համաձայն նշված մեթոդակարգի աղյուսակ 9-ի՝ արդյունաբերական տարածքների համար ընդունվում է 4,

Φ<sub>g</sub> - փոխադրման ցուցանիշն է, հաստատուն է և ընտրվում է ելնելով բնապահպանության գործընթացը խթանելու սկզբունքից: Սույն մեթոդակարգի համաձայն Φ<sub>g</sub> հավասար է 1000 դրամ,

Վ<sub>i</sub> - i-րդ նյութի (փոշու տեսակի) համեմատական վնասակարությունն արտահայտող մեծությունն է, անօրգանական փոշու համար՝ 10, ածխածնի օքսիդի համար ընդունվում է 1, ազոտի օքսիդի համար՝ 12.5, ածխաջրածինների համար՝ 3.16, պինդ մասնիկների համար՝ 200, ծծմբային անհիդրիդի համար՝ 16.5 [23]:

Ք<sub>i</sub> - տվյալ (i-րդ) նյութի արտանետումների քանակի հետ կապված գործակիցն է, տվյալ դեպքի համար որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{Ք}_i = q \times \text{ՏԱ}_i$$

Որտեղ՝

ՏԱ<sub>i</sub> - i-րդ նյութի տարեկան փաստացի արտանետումն է՝ տոննայով (տես **Աղյուսակ 8.20**),

<sup>22</sup>ՀՀ կառավարության «Շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատման և հատուցման կարգը հաստատելու մասին» թիվ 764-Ն որոշում

<sup>23</sup>ՀՀ կառավարության «Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» թիվ 91-Ն որոշում

q = 3` շարժական աղբյուրների (ավտոտրանսպորտի) համար:

Այն նյութերի համար, որոնց նորմատիվային ծավալային կոնցենտրացիան պետական ստանդարտով սահմանված չէ` ազդեցությունը չի գնահատվում:

Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում մթնոլորտային օդի վրա կանխատեսվող տնտեսական վնասի հաշվարկման արդյունքները ամփոփված են **Աղյուսակ 9.1**-ում:

**Աղյուսակ 9.1. Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում մթնոլորտային օդի վրա կանխատեսվող տնտեսական վնասի հաշվարկման արդյունքները**

Վայրը	Ճ <sub>գ</sub>	Փ <sub>ց</sub> , դրամ	Վ <sub>ի</sub>		ՏԱ <sub>ի</sub> , տ	q	Ք <sub>ի</sub>	Ա, դրամ
Դիզելային ավտո- հավաքակայան	4	1000	Փոչի	10	5.73	3	5.73	1092304
			CO	1	3.9927		11.9781	
			NO <sub>x</sub>	12.5	1.9381		5.8143	
			CH+N <sub>2</sub> O+ՑOU ածխաջրածիններ	3.16	0.4062		1.2186	
			ՊՄ	200	0.197		0.591	
			SO <sub>2</sub>	16.5	0.1832		0.5496	
Պայթուցիկ նյութերի պահեստ	4	1000	Փոչի	10	11.58	3	11.58	981017
			CO	1	2.388		7.164	
			NO <sub>x</sub>	12.5	1.1592		3.4776	
			CH+N <sub>2</sub> O+ՑOU ածխաջրածիններ	3.16	0.243		0.729	
			ՊՄ	200	0.1179		0.3537	
			SO <sub>2</sub>	16.5	0.1167		0.3501	
Դյուկերների ավազաններ	4	1000	Փոչի	10	28.542	3	28.542	2139669
			CO	1	4.606		13.818	
			NO <sub>x</sub>	12.5	2.235		6.705	
			CH+N <sub>2</sub> O+ՑOU ածխաջրածիններ	3.16	0.4689		1.4067	
			ՊՄ	200	0.2278		0.6834	
			SO <sub>2</sub>	16.5	0.217		0.651	
<b>Ընդամենը</b>								<b>4212990</b>

**9.2 Հողային ռեսուրսներ**

Նախատեսվող գործունեության իրագործման փուլում անհրաժեշտ հողատարածքի մակերեսը կկազմի`

- Դիզելային ավտոհավաքակայան - 40823.7 մ<sup>2</sup>,
- Պայթուցիկ նյութերի պահեստ - 46800 մ<sup>2</sup>,
- Դյուկերներ - 27545 մ<sup>2</sup>:

Հողային ռեսուրսներին հասցվող վնասի հաշվարկները կատարվել են համաձայն ՀՀ Կառավարության 25.01.2005 թ.-ի թիվ 92-Ն "Հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության

հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին", ինչպես նաև ՀՀ Կառավարության 24.12.2003 թ.-ի թիվ 1746-Ն "Հայաստանի Հանրապետության բնակավայրերի հողերի կադաստրային գնահատման կարգը, տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցները և սահմանները հաստատելու մասին" որոշումների:

Քաջարան համայնքի հողերի կադաստրային արժեքը հաշվարկվում է [ 24 ] մեթոդակարգի համաձայն՝ հետևյալ բանաձևով.

$$ԿԳ_{հող} = Ա_{բազա} \times Մ_{հող} \times Գ_q, \text{ դրամ}$$

Որտեղ՝

$ԿԳ_{հող}$  - գնահատվող հողամասի կադաստրային գինն է՝ արտահայտված դրամով,

$Ա_{բազա}$  - բնակավայրերի հողերի 1 մ<sup>2</sup> մակերեսի բազային արժեքն է՝ արտահայտված դրամով, հավասար է 60000 դրամ,

$Մ_{հող}$  - գնահատվող հողամասի մակերեսն է,

$Գ_q$  - բնակավայրերի հողերի տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցն է, Քաջարան համայնքի տվյալ հատվածի համար հավասար է 0.0016:

Նախատեսվող գործունեության բաղադրիչների կողմից զբաղեցվող հողերի կադաստրային արժեքի հաշվարկը ամփոփված է **Աղյուսակ 9.2**-ում:

**Աղյուսակ 9.2. Չբաղեցվող հողերի կադաստրային արժեքը**

Վայրը	Ա <sub>բազա</sub> , դրամ	Մ <sub>հող</sub> , մ <sup>2</sup>	Գ <sub>q</sub>	ԿԳ <sub>հող</sub> , դրամ
Դիզելային ավտո-հավաքակայան	60000	40823.7	0.0016	3919075
Պայթուցիկ նյութերի պահեստ	60000	46800	0.0016	4492800
Դյուկերների ավազաններ	60000	27545	0.0016	2644320
<b>Ընդամենը</b>				<b>11056195</b>

Հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման հաշվարկը իրականացվում է հետևյալ բանաձևով՝

$$Ա = Ծ_{ՀՎ} \times Ա_{ՎՀ} \times Ծ_{ՈՒՎ}, \text{ դրամ}$$

Որտեղ՝

Ա - ազդեցությունն է,

Ծ<sub>ՀՎ</sub> - վնասված հողամասը նախնական (նորմատիվային) տեսքի բերելու (պահանջների վերականգնման) համար անհրաժեշտ ծախսերն են (բուսահողի կտրման, տեղափոխման, պահեստավորման, պահպանման և վերջնական վերականգնման միջոցառումների տեսակարար ծախսերը հաշվարկված 1 մ<sup>2</sup> համար կազմում են 3200 դրամ),

Ա<sub>ՎՀ</sub> - վնասված հողամասի (գույքի) արժեքն է, տվյալ դեպքում հավասար է  $ԿԳ_{հող}$ ,

<sup>24</sup> ՀՀ կառավարության «Հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» թիվ 92-Ն որոշում

Ծ<sub>ու.վ.</sub> - ազդեցության հետևանքների ուսումնասիրության և վերլուծության հետ կապված ծախսերն են (տվյալ դեպքում անտեսվում է, քանի որ կատարված է ընդհանուր նախագծային աշխատանքների կազմում, առանց առանձին տողով նշելու):

$$Ա = Ծ_{Հ.վ} + Ա_{վ.Հ}, \text{ դրամ:}$$

Այսպիսով՝

Վայրը	Մ <sub>հող</sub> , մ <sup>2</sup>	ԾՀՎ, դրամ	ԿԳ <sub>հող</sub> , դրամ	Ա <sub>վ.Հ</sub> , դրամ
Դիզելային ավտո- հավաքակայան	40823.7	3200	3919075	134554915
Պայթուցիկ նյութերի պահեստ	46800	3200	4492800	154252800
Դյուկերների ավազաններ	27545	3200	2644320	90788320
<b>Ընդամենը</b>				<b>379596035</b>

### 9.3 Ջրային ռեսուրսներ

Աշխատանքների ժամանակ աղտոտված կեղտաջրերի արտահոսք դեպի ջրային ռեսուրսներ չի իրականացվում, համապատասխանաբար ջրային ռեսուրսներին վնաս չի հասցվում:

*Ընդամենը նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրին հասցվող վնասը դրամային արտահայտումներ կկազմի 383809025 դրամ:*

## 10. Նախատեսվող գործունեության մշտադիտարկման պլանը

Շրջակա միջավայրի մշտադիտարկումը (բնապահպանական մոնիթորինգը) շրջակա միջավայրի բաղադրիչների, բնական էկոլոգիական համակարգերի, նրանցում ընթացող գործընթացների, դրական և բացասական տեղաշարժերի համալիր դիտարկումն է, որը թույլ է տալիս գնահատել և կանխատեսել շրջակա միջավայրի իրավիճակի փոփոխությունները: Էկոլոգիական մշտադիտարկման նպատակներն են. շրջակա միջավայրի վրա նախաձեռնության ազդեցության գնահատումը և նորմավորումը, ազդեցության աղբյուրների վերահսկումը (արտանետումները, ֆիզիկական ազդեցությունները, մնացորդային ազդեցությունները, վտանգները), շրջակա միջավայրի բաղադրիչների որակի վերահսկողությունը: Այս ամենը անհրաժեշտ է ազդակիր համայնքների բնակչության անվտանգության և առողջության, աղետների կանխման և կանխարգելման միջոցառումների մշակման, ռացիոնալ բնօգտագործման և բնապահպանություն ապահովելու համար:

Նախատեսվող գործունեության շրջանակներում բնապահպանական մշտադիտարկումը պետք է կատարվի կառուցման և շահագործման փուլերի համար: Շահագործման փուլի մշտադիտարկումը իրականացվում է ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի "Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին" №191-Ն որոշման համաձայն: Նշված կառավարության որոշման համաձայն ՉՊՄԿ-ում



իրականացվում է մշտադիտարկում (Մշտադիտարկման պլանը բերված է **Հավելված 30**-ում), ինչը կշարունակվի նաև նախատեսվող գործունեության բաղադրիչների շահագործման փուլերում:

Նախատեսվող գործունեության կառուցման փուլի համար բնապահպանական մշտադիտարկման պլանը բերված է **Աղյուսակ 10.1**-ում:

**Աղյուսակ 10.1. Բնապահպանական մշտադիտարկման պլանը**

Փուլը	Մշտադիտարկման եղանակը	Հաճախականությունը	Վայրը	Պատասխանատուն
<b>1. Փոշու արտանետումները</b>				
Կառուցման	Գործիքային չափումներ	<ul style="list-style-type: none"> <li>մինչ աշխատանքների մեկնարկը</li> <li>ամիսը մեկ անգամ</li> <li>ըստ անհրաժեշտության</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>Դիզելային ավտո-հավաքակայանի տարածք</li> <li>Պայթուցիկների պահեստի տարածք</li> <li>Դյուկերային անցումների տարածք</li> </ul>	Կապալառու / Հրավիրված լաբորատորիա
<b>2. Աղմուկ և թրթռում</b>				
Կառուցման	Գործիքային չափումներ	<ul style="list-style-type: none"> <li>մինչ աշխատանքների մեկնարկը</li> <li>ամիսը մեկ անգամ</li> <li>ըստ անհրաժեշտության</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>Դիզելային ավտո-հավաքակայանի տարածք</li> <li>Պայթուցիկների պահեստի տարածք</li> <li>Դյուկերային անցումների տարածք</li> </ul>	Կապալառու / Հրավիրված լաբորատորիա
<b>3. Թափոնների պահման հարթակներ</b>				
Կառուցման	Տեսողական զննում	<ul style="list-style-type: none"> <li>ամեն օր</li> <li>ըստ անհրաժեշտության</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>Թափոնների պահման հարթակներ</li> <li>Շինարարական ճամբար</li> </ul>	Կապալառու
<b>4. Շին. տեխնիկայի և տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակ</b>				
Կառուցման	Տեսողական զննում	<ul style="list-style-type: none"> <li>ըստ սահմանված պլանի</li> <li>ըստ անհրաժեշտության</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>Շին. տեխնիկայի կայանման վայր</li> </ul>	Կապալառու
<b>5. Անհատական պաշտպանության միջոցների կիրառում</b>				
Կառուցման	Տեսողական զննում	<ul style="list-style-type: none"> <li>ամեն օր</li> <li>ըստ անհրաժեշտության</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>Դիզելային ավտո-հավաքակայանի տարածք</li> <li>Պայթուցիկների պահեստի տարածք</li> <li>Դյուկերային անցումների</li> </ul>	Կապալառու

Փուլը	Մշտադիտարկման եղանակը	Հաճախականությունը	Վայրը	Պատասխանատուն
			տարածք	
6. Կրակմարիչների առկայություն				
Կառուցման	Տեսողական զննում, փորձարկումներ	<ul style="list-style-type: none"> <li>ամիսը մեկ անգամ</li> <li>ըստ անհրաժեշտության</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>Դիզելային ավտո-հավաքակայանի տարածք</li> <li>Պայթուցիկների պահեստի տարածք</li> <li>Դյուկերային անցումների տարածք</li> </ul>	Կապալառու

## 11. Առաջարկվող մեղմացնող բնապահպանական և սոցիալական միջոցառումների պլանը

Սույն ՇՄԱԳ հաշվետվության **Գլուխ 8**-ում իրականացված, հաշվարկների և վերլուծությունների հիման վրա, Ելնելով վերոնշյալից, նույնականացվել են նախատեսվող գործունեության շրջակա և սոցիալական միջավայրերի վրա հնարավոր ազդող աշխատանքները/գործընթացները, դրանց ներգործությունները նշված միջավայրերի վրա և ներգործության աստիճանը, ինչպես նաև մշակվել են համապատասխան մեղմացնող միջոցառումներ (տես **Աղյուսակ 11.2**-ը):

### Աղյուսակ 11.1. Ներգործության աստիճանները և դրանց նկարագիրը

Ներգործության աստիճանը	Նշանակումը	Ներգործության նկարագիրը
Ներգործության բացակայություն	Բ	Ըստ նախնական գնահատման արդյունքների, նախատեսվող գործունեությունը չի ներգործի միջավայրերի վրա
Անտեսվող ներգործություն	Ա	Հավանաբար կլինի ներգործություն, սակայն, արդյունքը հազիվ թե ազդեցություն ունենա միջավայրերի երակետային վիճակի վրա
Փոքր ներգործություն	Փ	Ներգործություն կլինի, սակայն դրա արդյունքը չնչին ազդեցություն կունենա միջավայրերի երակետային վիճակի վրա
Միջին ներգործություն	Մ	Ներգործությունը որոշակի ազդեցություն կունենա միջավայրերի երակետային վիճակի վրա
Նշանակալի ներգործություն	Ն	Ներգործությունը բավականին զգալի ազդեցություն կունենա միջավայրերի երակետային վիճակի վրա
Դրական ներգործություն	Դ	Հավանաբար կլինի ներգործություն, սակայն այն կունենա դրական ազդեցություն

**"Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ" ՓԲԸ**

**Աղյուսակ 11.2. Նախատեսված գործունեության՝ շրջակա միջավայրի վրա և սոցիալական ազդեցության գնահատման արդյունքները և առաջարկվող մեղմացնող միջոցառումները**

№	Գործոնը/ ազդեցությունը	Միջավայրը	Նախագիծը / աշխատանքը	Ներգոր- ծության աստիճանը	<i>Մեկնաբանություններ / մեղմացնող միջոցառումները</i>
<b>ԿԱՌՈՒՑՄԱՆ ՓՈՒԼ</b>					
1	Փոշու արտանետումներ հողային աշխատանքներից	Մթնոլորտային օդը, Աշխատանքային միջավայրը, Քաջարան համայնքը:	Դիզելային ավտոհավաքակայանի կառուցում, դիզելային ավտոպարկի կազմի նորացում, Պայթուցիկ նյութերի նոր պահեստի տեղակայումը, Թիվ 1, 2 և 4 դուրբերների հակավթարային և սպասարկման ավազանների տեղակայումը:	Մ	<ol style="list-style-type: none"> <li>1. Օգտագործել ժամանակակից, տեխնիկապես սարքին և պարբերաբար զննվող տրանսպորտային միջոցներ և տեխնիկա,</li> <li>2. Սորուն թափոններ տեղափոխելիս բեռնատարների թափքը պահել ծածկված վիճակում,</li> <li>3. Սորուն նյութերի և գրունտի/ապարների ժամանակավոր պահումը արդ.հրապարակում իրականացնել ծածկված անջրաթափանց թաղանթով,</li> </ol>
2	Գազային արտանետումներ տրանսպորտային և շին. տեխնիկայի աշխատանքից				<ol style="list-style-type: none"> <li>4. Արդ.հրապարակը, հատկապես հողային աշխատանքների ժամանակ, պարբերաբար ենթարկել ջրցանման</li> <li>5. Չիրականացնել անբարենպաստ օդերևութաբանական պայմաններում թափոնների տեղափոխման աշխատանքներ,</li> <li>6. Բացահանքի տարածքից բեռնատարների ելքը իրականացնել միայն անվադողերը լվանալուց հետո,</li> <li>7. Արգելել արդ. հրապարակում շինարարական և թափոնների այրումը:</li> </ol>
3	Տարածքի երկրաբանական կառուցվածքը և կայունությունը	Աշխատանքային միջավայրը, Քաջարան համայնքը:	Դիզելային ավտոհավաքակայանի կառուցում, դիզելային ավտոպարկի կազմի նորացում:	Ն	<ol style="list-style-type: none"> <li>1. Անվադողերի մոնտաժման և նորոգման մասնաշենքին կից կառուցել երկաթ-բետոնե հենապատ,</li> <li>2. Արտադրական և վարչակենցաղային մասնաշենքի ետնամասում կառուցել քարեբետոնից հենապատ: <i>Հենապատերի կառուցման տեխնոլոգիական առանձնահատկությունները բերված են սույն Հաշվետվության բաժին 5.1.10-ում:</i></li> </ol>

**"Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ" ՓԲԸ**

№	Գործոնը/ ազդեցությունը	Միջավայրը	Նախագիծը / աշխատանքը	Ներգոր- ծության աստիճանը	Մեկնաբանություններ / մեղմացնող միջոցառումները
4	Տեսողական պատկերը	Ազդակիր բնակավայրեր, անցորդներ, Լանդշաֆտ	Դիզեյային ավտոհավաքակայանի կառուցում, դիզեյային ավտոպարկի կազմի նորացում, Պայթուցիկ նյութերի նոր պահեստի տեղակայումը, Թիվ 1, 2 և 4 դյուկերների հակավթարային և սպասարկման ավազանների տեղակայումը:	Ա	<p><i>Նախատեսվող կառույցների շինարարության փուլում բացահայտված տարածքում շահագործվող շին. տեխնիկայի և բեռնատարների քանակը կավելանա, սակայն տեղանքի ընդհանուր տեսողական պատկերը գրեթե չի փոխվի: Որպես մեղմացնող միջոցառումներ առաջարկվում են՝</i></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Աշխատանքային օրվա ավարտին կիրառվող շինարարական տեխնիկան և բեռնատարները կայանել հարակից համայնքներից և ճանապարհներից չերևացող հրապարակներում,</li> <li>2. Կիրառվող կառուցվածքային տարրերը և շինարարական նյութերը ժամանակավոր պահել հարակից համայնքներից և ճանապարհներից չերևացող հրապարակներում:</li> </ol>
5	Արտադրական կեղտաջրերի և անձրևաջրերի առաջացում	Ջրային ռեսուրսներ (Ողջի գետ և վտակներ), Կենդանական և բուսական աշխարհ, Աշխատանքային միջավայր:	Դիզեյային ավտոհավաքակայանի կառուցում, դիզեյային ավտոպարկի կազմի նորացում, Պայթուցիկ նյութերի նոր պահեստի տեղակայումը, Թիվ 1, 2 և 4 դյուկերների հակավթարային և սպասարկման ավազանների տեղակայումը:	Փ	<ol style="list-style-type: none"> <li>1. Մթնոլորտային տեղումների ժամանակ դադարեցնել հողային աշխատանքները,</li> <li>2. Բացառել անձրևաջրերի ներթափանցումը սորուն թափոնների և նյութերի պահման հարթակներ/տեղամասեր,</li> <li>3. Ապահովել վթարային արտահոսքերի հավաքման և հեռացման հարմարանքների անխափան աշխատանքը,</li> <li>4. Կազմակերպել արդ. հրապարակների պարագծով կղտաջրերի և անձրևաջրերի հեռացման համակարգ:</li> </ol>
6	Կոմունալ կենցաղային կեղտաջրերի առաջացում	Ջրային ռեսուրսներ, Աշխատանքային միջավայր:	Դիզեյային ավտոհավաքակայանի կառուցում, դիզեյային ավտոպարկի կազմի նորացում, Պայթուցիկ նյութերի նոր պահեստի տեղակայումը, Թիվ 1, 2 և 4 դյուկերների հակավթարային և սպասարկման ավազանների տեղակայումը:	Փ	<ol style="list-style-type: none"> <li>1. Օգտագործել արդ. հրապարակի հարևանությամբ Կոմբինատին պատկանող կառույցներում առկա սանիտարակենցաղային սենյակներից, ներառյալ պետքարաններից, լվացարաններից, սննդի ընդունման և հանգստի սենյակներից (տես Նկար 5.1-ը),</li> <li>2. Թիվ 1, 2 և 4 դյուկերների հակավթարային և սպասարկման ավազանների տեղադրման աշխատանքների իրականացման ընթացքում օգտվել մոտակա կոմբիցիոն սրահների</li> </ol>

"Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ" ՓԲԸ

№	Գործոնը/ ազդեցությունը	Միջավայրը	Նախագիծը / աշխատանքը	Ներգոր- ծության աստիճանը	Մեկնաբանություններ / մեղմացնող միջոցառումները
					սանիտարակենցաղային հնարավորություններից կամ վարձակալել հարակից համայնքներում անհատական տներ:
7	Յուղի, վառելիքի և քիմիկատների արտահոսքեր	Հողային ռեսուրսներ Կենդանական և բուսական աշխարհ	Դիզելային ավտոհավաքակայանի կառուցում, դիզելային ավտոպարկի կազմի նորացում, Պայթուցիկ նյութերի նոր պահեստի տեղակայումը, Թիվ 1, 2 և 4 դյուկերների հակավթարային և սպասարկման ավազանների տեղակայումը:	Մ	<ol style="list-style-type: none"> <li>1. Բեռնատար մեքենաների և շին. տեխնիկայի լիցքավորումը վառելիքով և տեխնիկական սպասարկումը կատարել «ԶՊՄԿ» ՓԲԸ-ի համապատասխան տեղամասերում,</li> <li>2. Քիմիկատների բեռնաթափումը և տեղափոխումը իրականացնել դրա համար նախատեսված հատուկ տեխնիկայով՝ բացառելով այդ նյութերով շրջակա միջավայրի հնարավոր աղտոտումը,</li> <li>3. Օգտագործել ժամանակակից, տեխնիկապես սարքին և պարբերաբար զննվող շին.տեխնիկա և սարքավորումներ,</li> <li>4. Քիմիկատների՝ ներկերի տակառները պահել հատուկ պաշտպանիչ տակդիրների վրա,</li> <li>5. Շին. հրապարակները կահավորել տրանսպորտային միջոցներից և շին. տեխնիկայից յուղի հնարավոր արտահոսքերը արագ սահմանափակելու և հետևանքները վերացնելու միջոցներով (սորբենտ հավաքածու և այլն):</li> </ol>
8	Թափոնների առաջացում	Հողային ռեսուրսներ Ջրային ռեսուրսներ	Դիզելային ավտոհավաքակայանի կառուցում, դիզելային ավտոպարկի կազմի նորացում, Պայթուցիկ նյութերի նոր պահեստի տեղակայումը, Թիվ 1, 2 և 4 դյուկերների հակավթարային և սպասարկման ավազանների տեղակայումը:	Փ	<ol style="list-style-type: none"> <li>1. Նախատեսել շին..հրապարակներում շինարարական, վտանգավոր և կենցաղային թափոնների առանձին պահման տարողություններ և հարթակներ՝ համապատասխան նշագրմամբ,</li> <li>2. Շինարարական աշխատանքների ավարտին առաջացած սև և գունավոր մետաղների ջարդոնը հանձնել մասնագիտացված ընկերություններին,</li> <li>3. Կազմակերպել շինարարական ու կենցաղային աղբի պարբերաբար հեռացումը արդ.հրապարակից դեպի Քաջարան համայնքի աղբավայր:</li> </ol>

**"Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ" ՓԲԸ**

№	Գործոնը/ ազդեցությունը	Միջավայրը	Նախագիծը / աշխատանքը	Ներգոր- ծության աստիճանը	<i>Մեկնաբանություններ / մեղմացնող միջոցառումները</i>
9	Աղմուկ և թրթռում	Աշխատանքային միջավայր Ազդակիր համայնք	Դիզելային ավտոհավաքակայանի կառուցում, դիզելային ավտոպարկի կազմի նորացում, Պայթուցիկ նյութերի նոր պահեստի տեղակայումը, Թիվ 1, 2 և 4 դյուկերների հակավթարային և սպասարկման ավազանների տեղակայումը:	Ա	<ol style="list-style-type: none"> <li>1. Դադարեցնել տրասնպորտային միջոցների և շին.տեխնիկայի աշխատանքը գիշերային ժամերին,</li> <li>2. Նվազեցնել բեռնատար մեքենաների արագությունը (պահպանել առաջարկվող արագությունը) բնակավայրերում,</li> <li>3. Աշխատողների համար աղմուկի մակարդակը պահպանել մինչև 80 դԲԱ տիրույթում: Աղմուկի նշված արժեքը գերազանացելու դեպքում տրամադրել աշխատողներին պաշտպանիչ ականջակալներ:</li> </ol>
10	Ազդեցությունը կենդանական և բուսական աշխարհի վրա	Կենդանական և բուսական աշխարհի	Դիզելային ավտոհավաքակայանի կառուցում, դիզելային ավտոպարկի կազմի նորացում, Պայթուցիկ նյութերի նոր պահեստի տեղակայումը, Թիվ 1, 2 և 4 դյուկերների հակավթարային և սպասարկման ավազանների տեղակայումը:	Փ	<ol style="list-style-type: none"> <li>1. Աշխատանքները իրականացնել ապահովելով հողային ռեսուրսների, բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների պաշտպանությունը,</li> <li>2. Անհարժեշտության դեպքում մշակել գործողությունների պլան հիմնվելով ՀՀ կառավարության "ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին" թիվ 781-Ն որոշման դրույթների վրա:</li> </ol>
11	Աշխատանքային միջավայրի վնասակար և վտանգավոր գործոններ	Աշխատանքային միջավայր Աշխատողներ	Դիզելային ավտոհավաքակայանի կառուցում, դիզելային ավտոպարկի կազմի նորացում, Պայթուցիկ նյութերի նոր պահեստի տեղակայումը, Թիվ 1, 2 և 4 դյուկերների հակավթարային և սպասարկման ավազանների տեղակայումը:	Մ	<ol style="list-style-type: none"> <li>1. Աշխատանքի անվտանգության գծով հրահանգավորում աշխատողների հետ,</li> <li>2. Աշխատողների առողջության վիճակի նախնական բուժ. զննման իրականացում,</li> <li>3. Աշխատանքների սանիտարական պայմանների, ներառյալ ցնցողարանների, պետքարանների և հանդերձարանների պատշաճ պահպանում,</li> <li>4. Աշխատողների ապահովում անհատական պաշտպանության միջոցներով՝ հատուկ արտահագուստով, կոշիկներով, դիմակներով, ականջներով, ձեռնոցներով և այլն,</li> </ol>

"Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ" ՓԲԸ

№	Գործոնը/ ազդեցությունը	Միջավայրը	Նախագիծը / աշխատանքը	Ներգոր- ծության աստիճանը	Մեկնաբանություններ / մեղմացնող միջոցառումները
					5. Առաջին բուժօգնության դեղորայքի ապահովում, 6. Առաջնային հրդեհաշիջման միջոցներով ապահովում:
12	Վտանգ պատմամշակույթային հուշարձանների համար	Պատմամշակույթային հուշարձաններ	Թիվ 1, 2 և 4 դյուկերների հակավթարային և սպասարկման ավազանների տեղակայումը:	Մ	1. Պոչատարի սպասարկման գոտու, հարակից և դյուկերային անցումների տարածքների մոտակայքում բրոնզերկաթիդարյան դամբարանադաշտերի (Լեռնաձորի, տեղամաս 3 և Սյունքի-2) և միջնադարյան գերեզմանոցի (Բաղաբերդ) վրա դյուկերների ավազանների տեղակայման աշխատանքների ազդեցությունը մեղմելու նպատակով կազմակերպել ստուգողական-փրկարարական բնույթի պեղման աշխատանքներ, 2. Կախված պահման արդյունքներից, անհրաժեշտության դեպքում դրանց որոշ հատվածներում կազմակերպել սիստեմատիկ պեղումներ:
<b>ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓՈՒԼ</b>					
1	Փոշու և գազային արտանետումներ կաթսայատներից, նորոգման և սպասարկման տեղամասերից, պայթուցիկ նյութերի պահեստից, տրանսպորտային միջոցներից	Մթնոլորտային օդը, Ազդակիր համայնքները, Աշխատանքային միջավայրը:	Դիզելային ավտոհավաքակայանի շահագործումը, Պայթուցիկ նյութերի նոր պահեստի շահագործումը:	Մ	3. Օգտագործել ժամանակակից, տեխնիկապես սարքին և պարբերաբար զննվող տրանսպորտային միջոցներ, 4. Ապահովել կաթսայատների անխափան և ըստ տեխնոլոգիական հրահանգի աշխատանքը, 5. Ապահովել նորոգման և սպասարկման տեղամասերի և պայթուցիկ նյութերի պահեստների օդափոխության համակարգերի անխափան աշխատանքը, 6. Ապահովել մեքենաների լվացման տեղամասի անխափան աշխատանքը, 7. Իրականացնել հողային մոտեցման ճանապարհների պարբերական ջրցան, 8. Սորուն թափոններ տեղափոխելիս բեռնատարների թափքը պահել ծածկված վիճակում:

"Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ" ՓԲԸ

№	Գործոնը/ ազդեցությունը	Միջավայրը	Նախագիծը / աշխատանքը	Ներգոր- ծության աստիճանը	Մեկնաբանություններ / մեղմացնող միջոցառումները
2	Կեղտաջրերի և անձրևաջրերի առաջացում	Ջրային ռեսուրսներ (Ողջի գետ և վտակներ)	Դիզելային ավտոհավաքակայանի շահագործումը, Պայթուցիկ նյութերի նոր պահեստի շահագործումը:	Փ	<ol style="list-style-type: none"> <li>1. Ապահովել դիզելային ավտոհավաքակայանի տարածքից կեղտաջրերի ու անձրևաջրերի հավաքման, մաքրման և կոյուղու համակարգերի անխափան աշխատանքը,</li> <li>2. Ապահովել պայթուցիկ նյութերի պահեստի տարածքից կեղտաջրերի ու անձրևաջրերի հավաքման, մաքրման և կոյուղու համակարգերի անխափան աշխատանքը,</li> <li>3. Բացառել անձրևաջրերի ներթափանցումը նորոգման և սպասարկման տեղամասեր, պայթուցիկ նյութերի պահեստ և այլ շինություններ:</li> </ol>
3	Սանիտարա-կենցաղային կեղտաջրեր	Ջրային ռեսուրսներ	Դիզելային ավտոհավաքակայանի շահագործումը, Պայթուցիկ նյութերի նոր պահեստի շահագործումը:	Ա	<ol style="list-style-type: none"> <li>1. Ապահովել կենցաղային մասնաշենքից և այլ շինությունների կենցաղային հանգույցներից առաջացած կենցաղային կեղտաջրերի մաքրման և կոյուղու համակարգի անխափան աշխատանքը,</li> <li>2. Ապահովել պայթուցիկ նյութերի պահեստի տարածքից առաջացած կենցաղային կեղտաջրերի մաքրման և կոյուղու համակարգի անխափան աշխատանքը:</li> </ol>
4	Պոչանքների վթարային արտահոսքեր	Ջրային ռեսուրսները (Ողջի գետ և վտակներ)	Թիվ 1, 2 և 4 դյուկերների հակավթարային և սպասարկման ավազանների շահագործումը	Փ	<i>Պոչատարի դյուկերներից հնարավոր վթարային արտահոսքերը դեպի շրջակա միջավայր և, մասնավորապես ջրային ռեսուրսներ բացառելու նպատակով նախատեսվում են հակավթարային ավազանների տեղադրման աշխատանքները:</i>
5	Արտահոսքեր (յուղ, քիմիկատներ և այլ նյութեր) և աղտոտումներ	Հողային ռեսուրսները Կենդանական և բուսական աշխարհը Լանդշաֆտը և տեսողական պատկերը	Դիզելային ավտոհավաքակայանի շահագործումը, Պայթուցիկ նյութերի նոր պահեստի շահագործումը:	Փ	<ol style="list-style-type: none"> <li>1. Պայթուցիկ և այլ նյութերի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնել դրա համար նախատեսված տեխնիկայով և գործիքներով՝ բացառելով շրջակա միջավայրի աղտոտումը,</li> <li>2. Հեղուկ նյութերի տակառները պահել իրենց տարողունակությունը գերազանցող ծավալ ունեցող հատուկ տակդիրների վրա,</li> <li>3. Հազեցնել դիզելային ավտոհավաքակայանի և պայթուցիկ նյութերի նոր պահեստի արդ. հրապարակները հնարավոր</li> </ol>



**"Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ" ՓԲԸ**

№	Գործոնը/ ազդեցությունը	Միջավայրը	Նախագիծը / աշխատանքը	Ներգոր- ծության աստիճանը	<i>Մեկնաբանություններ / մեղմացնող միջոցառումները</i>
		Աշխատանքային միջավայրը			արտահոսքերին արագ արձագանքելու՝ տեղայնացնելու և չեզոքացնելու միջոցներով:
6	Ազդեցություն կենդանական և բուսական աշխարհի վրա	Կենդանական և բուսական աշխարհը	Դիզելային ավտոհավաքակայանի շահագործումը, Պայթուցիկ նյութերի նոր պահեստի շահագործումը:	Փ	<ol style="list-style-type: none"> <li>Աշխատանքները իրականացնել ապահովելով հողային ռեսուրսների, բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների պաշտպանությունը,</li> <li>Անհարժեշտության դեպքում մշակել գործողությունների պլան, հիմնվելով ՀՀ կառավարության "ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին" թիվ 781-Ն որոշման դրույթների վրա:</li> </ol>
7	Թափոնների առաջացում	Հողային ռեսուրսները Կենդանական և բուսական աշխարհը	Դիզելային ավտոհավաքակայանի շահագործումը, Պայթուցիկ նյութերի նոր պահեստի շահագործումը:	Մ	<ol style="list-style-type: none"> <li>Կահավորել դիզելային ավտոհավաքակայանի և պայթուցիկ նյութերի նոր պահեստի արդ. հրապարակները արդյունաբերական և կենցաղային թափոնների առանձին պահման հարթակներով և տարողություններով,</li> <li>Յուղի արտահոսքերի արդյունքում աղտոտված հողային զանգվածը հեռացնել և պահել նավթամթերքով աղտոտված բնահողերի հետ միասին,</li> <li>Բացառել առաջացած թափոնների այրումը:</li> </ol>
8	Աղմուկ և թրթռում	Քաղաքի համայնքը Աշխատանքային միջավայրը	Դիզելային ավտոհավաքակայանի շահագործումը, Պայթուցիկ նյութերի նոր պահեստի շահագործումը:	Փ	<ol style="list-style-type: none"> <li>Բացառել / նվազեցնել բեռնատար մեքենաների աշխատանքը գիշերային ժամերին,</li> <li>Նվազեցնել բեռնատար մեքենաների արագությունը (պահպանել առաջարկվող արագությունը) բնակավայրերով անցնելիս,</li> <li>Աշխատողների համար աղմուկի մակարդակը պահպանել մինչև 80 դԲԱ տիրույթում: Աղմուկի նշված արժեքը գերազանցելու դեպքում տրամադրել աշխատողներին պաշտպանիչ ականջակալներ:</li> </ol>

**"Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ" ՓԲԸ**

№	Գործոնը/ ազդեցությունը	Միջավայրը	Նախագիծը / աշխատանքը	Ներգոր- ծության աստիճանը	<i>Մեկնաբանություններ / մեղմացնող միջոցառումները</i>
